

ԵՐԻՏԱՍԱՐԴ  
ԼԵԶՎԱԲԱՆՆԵՐԻ  
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ  
V ԳԻՏԱԺՈՂՈՎԻ  
ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ

ԵՐԵՎԱՆ, 2015թ., ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18







UNIVERSITY OF TORONTO

LIBRARY

130 St. George Street, Toronto, Ontario M5S 1A5

**INSTITUTE OF LINGUISTICS OF NAS**

**YOUNG LINGUISTS' V REPUBLICAN  
CONFERENCE REPORTS**

**(Yerevan, 2015, September 18)**

**ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Р. АЧАРЯНА НАН РА**

**ДОКЛАДЫ V РЕСПУБЛИКАНСКОЙ  
НАУЧНОЙ КОНФЕРЕНЦИИ  
МОЛОДЫХ ЛИНГВИСТОВ**

**(Ереван, 2015 г., 18 сентября)**



1127163

ՀՀ ԳԱԱ

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԼԵԶՎԱԲԱՆՆԵՐԻ  
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ V  
ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԶԵԿՈՒՅՈՒՄՆԵՐ

(Երևան, 2015 թ., սեպտեմբերի 18)

ԵՐԵՎԱՆ  
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱԶԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2015



ՀՏԴ 811.19:06

ԳՄԴ 81.22

Ե 859

Տպագրվում է  
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝  
բ.գ.թ., դոց. Վ. Կատվայան (նախագահ),  
բ.գ.դ., Ռ. Թոխմախյան, բ.գ.դ., պրոֆ. Վ. Համբարձումյան,  
բ.գ.դ., պրոֆ. Լ. Հովհաննիսյան, բ.գ.դ., պրոֆ. Գ. Խաչատրյան,  
բ.գ.դ., պրոֆ. Լ. Հովսեփյան, բ.գ.թ. Ն. Սարգսյան,  
բ.գ.թ. Ա. Գալստյան, բ.գ.թ. Տ. Միրունյան,  
բ.գ.թ. Ժ. Միքայելյան:

Ե 859 Երիտասարդ լեզվաբանների հանրապետական V  
գիտաժողովի զեկուցումներ (Երևան, 2015 թ., սեպ-  
տեմբերի 18).– Եր.: «Գիտություն» հրատ., 2015. –  
120 էջ:

ՀՏԴ 811.19:06

ԳՄԴ 81.22

ISBN 978-5-8080-1186-1

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2015

## ՀՈՂՎԱԾՆԵՐ

*Կարապետյան Միրարփի  
(ԵՊՀ ասպիրանտ)*

**ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ ՇԱՂԿԱՊԱԿԱՆ  
ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ**

Լեզուների զուգադրական- տիպաբանական ուսումնասիրությունը լեզվաբանական ուսումնասիրությունների կարևոր ուղղություններից է: Այս կամ այն լեզվի կառուցվածքային, գործառական խնդիրներն առավել արդյունավետ կարող են ուսումնասիրվել հենց տիպաբանության դիրքերից: Ինչպես այլ լեզուների, այնպես էլ անգլերենի ու հայերենի զուգադրական քննությունը հնարավորություն է ընձեռում առավել խորությամբ ուսումնասիրելու երկու լեզուների ընդհանրություններն ու տարբերությունները, անելու ավելի հստակ եզրահանգումներ դրանց կառուցվածքի վերաբերյալ:

Հայերենի և անգլերենի բառակազմական համակարգերի միջև և՛ ընդհանրություններ կան, և՛ տարբերություններ: Զուգադրվող լեզուներն աչքի են ընկնում բառակազմական և ձևաբանական հարուստ կաղապարներով. կան գոյականական, ածականական, մակբայական, թվականական և այլ հիմքերով բաղադրված կաղապարներ: Գոյականական հիմքերով բաղադրված կաղապարները նշանակալից տեղ են գրավում և՛ անգլերենում, և՛ հայերենում. հետևաբար սա երկու լեզուների համար տիպաբանական հատկանիշ է: Գոյականն իր իմաստային լայն ընդգրկման շնորհիվ փոխհարաբերությունների մեջ է մտնում ինչպես այլ գոյականի, այնպես էլ տարբեր խոսքի մասերի պատկանող բառերի հետ, և դա է պատճառը, որ գոյականով կազմվում է երկու լեզուների բարդ բառերի ճնշող մեծամասնությունը:

Սույն հոդվածի նպատակն է զուգադրել հայերենի և անգլերենի գոյականական բաղադրիչներով հարադրությունները՝



հնարավորինս ներկայացնելով դրանց կառուցվածքային և իմաստային ընդհանրություններն ու տարբերությունները երկու լեզուներում:

Հայերենում շաղկապական հարադրությունները կազմվում են *ու, և* շաղկապներով: Գոյական բաղադրիչներով շաղկապական հարադրությունները շատ գործուն են մեր լեզվում: Այս կառույցները հայ լեզվաբանները՝ սկսած Մ. Աբեղյանից, անվանել են բաղիյուսական բարդություններ<sup>1</sup>, սակայն Մ. Աբեղյանը դրանց մեջ ներառում է ոչ միայն *ու, և* շաղկապներով կազմությունները (ծառ ու ճյուղ), այլև առանց շաղկապի հարադրված կառույցները (գիշեր-ցերեկ), անորոշ դերբայներով կազմված հարադրությունները (այրել-մրկել), թվականների հարադրումով կազմված տեսակները (քսան-երեսուն), իսկ օրինակ՝ Գ. Սևակը բաղիյուսական բարդությունների մեջ ներառում է միայն շաղկապավոր կազմությունները<sup>2</sup>:

Հայ լեզվաբաններից Ա. Մարգարյանը մի ամբողջ աշխատություն<sup>3</sup> ունի՝ նվիրված նման կազմությունների քննությանը, որոնք հեղինակը նույնպես անվանում է *բաղիյուսական* բարդություններ՝ նկատի ունենալով միայն շաղկապական կառույցները: Աշխատության վերջում կա շաղկապական վերլուծական բաղադրությունները ներկայացնող մի համապարփակ բառարան, որում, սակայն, տեղ են գտել նաև կրկնավոր, որոշ դեպքերում նաև համադրական տիպի կազմություններ, հետևաբար սահմանազատումը բառաբարդման և հարադրման, ինչպես նաև կրկնության և հարադրման եղանակներով առաջացած բաղադրությունների միջև հստակ չէ:

Շաղկապական հարադրությունները և առհասարակ հայերենի այն բոլոր վերլուծական կառույցները, որոնք մեկ բառի արժեք ունեն, ճիշտ է *բաղադրություն* և ոչ թե *բարդություն* անվա-

<sup>1</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, հ. Զ., Ե., 1974, էջ 142-143:

<sup>2</sup> Տե՛ս Գ. Սևակ, *Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց*, Ե., 2009, էջ 156:

<sup>3</sup> Տե՛ս Ա. Մարգարյան, *Հայերենի բաղիյուսական բարդությունները*, Ե., 1986:

ներ: Բաղադրություն եզրույթի ընտրության հարցում առաջ-  
նորդվել ենք Է. Ադայանի և Լ. Հովսեփյանի առաջադրած սկզբ-  
բունքներով: Հայ լեզվաբաններից առաջինը Է. Ադայանն է հրա-  
ժարվել *բաղադրության* եզրույթից՝ շաղկապական վերլուծական  
բաղադրությունները քննելով որպես անվանական հարադրու-  
թյան ինքնուրույն տեսակ<sup>1</sup>:

Ըստ Լ. Հովսեփյանի՝ վերլուծական կառույցներն առհասա-  
րակ պետք չէ մտցնել բարդությունների մեջ, քանի որ դրանք  
առաջանում են «բառակազմական բոլորովին այլ, անկախ եղա-  
նակի» հարադրման հետևանքով, որի արդյունքում ստացվող բա-  
ղադրությունները պետք է կոչել հարադրություններ (ի տարբե-  
րություն բարդությունների և ածանցյալների), իսկ բաղադրիչ-  
ները՝ հարադիրներ<sup>2</sup>:

Շաղկապական բաղադրությունների ճնշող մեծամասնու-  
թյունը կազմվում է *ու* համադասական շաղկապով, ավելի քիչ են  
և շաղկապով միավորված բաղադրությունները: Հետևաբար *ու*  
շաղկապը լեզվի գոտո շարահյուսական միավոր չէ, այլ նաև  
բառակազմական գործառույթ է կատարում հայերենում<sup>3</sup>:

Գոյականական շաղկապական հարադրությունները հիմ-  
նականում կազմվում են նույն խոսքի մասին պատկանող բառե-

<sup>1</sup> Տե՛ս Է. Ադայան, *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, Ե. 1984, էջ 227-234:

<sup>2</sup> Տե՛ս Լ. Հովսեփյան, Բառակազմության տիպեր, եղանակներ և միջոցներ, *Ջահուկյանական ընթերցումներ* (4), էջ 107:

<sup>3</sup> Ա. Մարգարյանը նշում է. «Հայ լեզվաբանական գրականության մեջ վաղուց է նկատված ու արձանագրված, որ բառերի միջև ամենասերտ կապն ու հարաբերությունն արտահայտող շաղկապը *ու*-ն է, որ այդ տեսակետից տարբերվում է անգամ իր հոմանիշ և շաղկապից» (տե՛ս Ա. Մարգարյան, նշվ. աշխ., Եր., 1986, էջ 11): Ըստ հեղինակի՝ մեր լեզվի պատմական զարգացման ընթացքում *և* շաղկապն աստիճանաբար կորցրել է իր բառակազմական նշանակությունը՝ ի տարբերություն *ու*-ի, որ վերլուծական բաղադրություններ կազմելու առումով ավելի մեծ դեր է ձեռք բերել. այս դերը կապված է *ու*-ի՝ ժողովրդախոսակցական լեզվին հատուկ լինելու և հետևաբար ժողովրդախոսակցական բնույթի բաղադրություններ կազմելու հետ: Եվ շաղկապով կազմությունները, ընդհակառակը, հիմնականում գրական լեզվին են բնորոշ:



րից, որոնց մեջ գերակշռում են գոյական+ու+գոյական կաղապարով բաղադրությունները: Սրանք ունեն եզակի և հոգնակի թիվ, հոլովվում են, ստանում ստացական ու դիմորոշ հոդեր, ունեն որոշյալ առում, և հիմնականում սրանց երկրորդ բաղադրիչն է քերականական փոփոխությունների ենթարկվում, ինչպես, օրինակ՝ *զենք ու զորք, զենք ու զորքի, զենք ու զորքով, զենք ու զորք (ը), զենք ու զորքերը* և այլն: Այս կանոնից շեղվում են միայն հայր, մայր բառերով կազմված բաղադրությունները, որոնցում առաջին բաղադրիչը նույնպես հոլովվում է՝ *հայր ու աղջիկ, հոր ու աղջկա, հոր ու աղջկանից, հոր ու աղջկանով, մայր ու տղա, մոր ու տղայի, մոր ու տղայից, մոր ու տղայով* և այլն: Մնացած դեպքերում առաջին բաղադրիչը թեև չի հոլովվում, սակայն հավասարապես արտահայտում է երկրորդ բաղադրիչի հոլովական ու թվային իմաստները<sup>1</sup>:

Անգլերենում շաղկապական բաղադրությունները դասվում են այսպես կոչված *բառակապակցական բարդությունների (phrase compounds)* շարքին: Լ. Բաուերը տարակուսում է՝ արդյոք սրանք իսկապես պետք է համարել բարդ բառե՞ր, թե՞ շարահյուսական կապակցությունների քարացման, բառայնացման արդյունքում ստացված բաղադրություններ<sup>2</sup>: Բանն այն է, որ սրանք այնպես, ինչպես հայերենում, միջին օղակ են բառակապակցությունների ու բարդությունների միջև: Սակայն, այնուամենայնիվ, քննվում են որպես բարդ բառերի մի առանձին տեսակ, քանի որ մեկ բառի արժեք ունեն. այստեղից էլ *բառակապակցական բարդություն* անվանումը:

Դրանց մի տեսակը կազմվում է հիմնականում *and* համադասական շաղկապով, ինչպես՝ *bubble-and-squeak* «տապակած կարտոֆիլ և կաղամբ», *milk-and-water* «անզոր, թույլ», *pepper-and-salt* «ալեխառն» և այլն:

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 48:

<sup>2</sup> Տե՛ս Լ. Bauer, *English Word-Formation*, Cambridge, 1983, էջ 207:

Բառակապակցական բարդությունների մյուս տեսակը Լ. Բլումֆիլդի առանձնացրած շարահյուսական բարդություններն են (syntactic compounds), որոնք կարծես նախադասություններից կամ խոսքաշարից պոկված հատվածներ լինեն. դրանք նախադասություններին և ազատ բառակապակցություններին բնորոշ կառուցվածք ունեն և համապատասխանում են անգլերենի շարահյուսական ու շարադասական կանոններին, ինչպես օրինակ՝ *jack-o'-lantern* «դրմե լապտեր», *state-of-the-art* «ժամանակակից, նորագույն» և այլն:

Նախ գուգադրենք *and* շաղկապով կազմված բաղադրությունները երկու լեզուներում: Ըստ շաղկապական հարադրությունների բաղադրիչների իմաստային մերձության աստիճանի՝ երկու լեզուներում կարելի է առանձնացնել *իմաստով առնչակից*, *հոմանիշ* և *հականիշ* գոյական բաղադրիչներով հարադրություններ, սակայն, ի տարբերություն հայերենի, անգլերենում հաճախ դրանց հարադրամբ ստացվում են ոչ թե ուղիղ, այլ փոխաբերական իմաստներ արտահայտող հարադրություններ, ինչպես՝ *cats and mouse* «մուկ ու կատու խաղալը», *chalk and talk* «ավանդական ուսուցչակենտրոն ուսուցում», *dog and bone* «հեռախոս» և այլն: Այսպես, շաղկապական հարադրությունները երկու լեզուներում կարելի է բաժանել հետևյալ տեսակների.

ա) Առնչակից իմաստ ունեցող բաղադրիչներով՝ *ազգ ու հայրենիք*, *աղոթք ու աղաչանք*, *անձրև ու քամի*, *աշուն ու ձմեռ*, *բակ ու դուռ*, *բառ ու խոսք*, *եղբայր ու քույր*, *թաթ ու կրունկ*, *թուղթ ու գիր*, *խաղ ու պար*, *խոսք ու գրույց*, *ծառ ու ծաղիկ*, *կար ու կույթ*, *հանդ ու ձոր*, *հարց ու փորձ*, *հաց ու պանիր*, *շող ու շաղ*, *շուն ու գայլ*, *վար ու ցանք*, *ոտ ու ձեռ*, *վարպետ ու բանվոր*, *ցախ ու ցաք*, *քար ու կշեռք* և այլն: Անգլերենում՝ *arts and crafts* «արվեստներ ու արհեստներ», *bed and board* «օթևան ու սնունդ», *bread and butter* «ամենօրյա աշխատանքով վաստակած ապրուստ», *bread and wine* «հաղորդության ժամանակ ճաշակվող արյուն ու գինի», *cakes and ale* «երկրային վայելք», *doom and gloom* «հորհետեություն, ընկճախոս», *law and order* «կարգ ու կանոն», *man and*



boy «մանկությունից սկսած», milk and honey «ծաղկում ու բարգավաճում», oil and water «անհամատեղելի՝ կրակ ու ջուր» և այլն:

բ) Հոմանիշ բաղադրիչներով՝ անդ ու անդաստան, անեծք ու նզովք, բաղ ու բախչա, բանտ ու գնդան, բար ու բերք, զանգատ ու բողոք, գութ ու կարեկցանք, դաշտ ու դուրան, դաս ու խրատ, դեղ ու դարման, դեպք ու դիպված, դող ու էրոցք, եռանդ ու ջանք, լույս ու ճրագ, խաղ ու տաղ, ծոմ ու պաս, կապ ու կշկուտ, կուշտ ու բողոք և այլն: Անգլերենում՝ command and control «զինված ուժերի ևն ղեկավարում», house and home «տուն ու տեղը, եղած-չեղածը», hue and cry «աղմուկ-աղաղակ, բողոք», hum and haw «տատանում, վարանում», pot and pan «ամուսին», rag and tatter «մաշված, ծակծկված» և այլն:

գ) Հականիշ բաղադրիչներով՝ ահել ու ջահել, աղքատ ու հարուստ, ամառ ու ձմեռ, անեծք ու օրհնանք, աջ ու ձախ, առք ու վաճառք, գիշեր և ցերեկ, դար ու դուրան, լուս ու մութ, խինդ ու լաց, ծեր ու մանուկ, ծով ու ցամաք, կենաց ու մահու, մահ ու կյանք, սուտ ու ճիշտ, ստրուկ ու տեր, վերջ ու սկիզբ, վիշտ ու ժպիտ, տեր ու ծառա, տիվ ու գիշեր և այլն: Անգլերենում՝ alpha and omega «սկիզբն ու վերջը, boom and bust «վերելք ու անկում», day and night «օր ու գիշեր», ebb and flow «մակընթացություն և տեղատվություն», left and right «աջ ու ձախ», life and death «կենաց ու մահու», light and shade «լույս ու ստվեր», wax and wane «վերելք ու անկում» և այլն:

Ի տարբերություն հայերենի շաղկապական հարադրությունների՝ նման կառույցներն անգլերենում կազմվում են ոչ միայն and (և) շաղկապով, այլև than, or շաղկապներով, ինչպես՝ feast or famine «չափազանց շատ կամ չափազանց քիչ», rhyme or reason «բանական պատճառ կամ բացատրություն», by hook or by crook «ամեն հնարավոր ձևով», larger-than-life «ուշադրություն գրավող», lighter-than-air «օդից թեթև (օղապարիկի մասին)» և այլն:

Երկու լեզուներում թեև ավելի հազվադեպ, սակայն կան նաև այնպիսի շաղկապական հարադրություններ, որոնցում գո-

յականը հարադրված է այլ խոսքի մասի, ինչպես՝ ա) գոյական+բայարմատ՝ *ահ ու զարկ, ահ ու սաստ, ահ ու փախ, դավ ու խաբ, շարժ ու ձև*, անգլերենում՝ *cash and carry* «մեծածախ առևտուր», *tax and spend* «հարկերի բարձրացման քաղաքականություն» և այլն, բ) բայարմատ+գոյական՝ *տուր ու դնփոց, առ ու ավար, առ ու գերի, դարձ ու զոջում, զարկ ու ավար, հունչ ու բառ, ել և մուտք, hit-and-miss* «պատահական արված», *run and gun* «թեթև՝ առանց կանոններին ուշադրություն դարձնելու (խաղի մասին)»<sup>1</sup>, գ) ածական ու գոյական՝ *ալ ու ատլաս, թաց ու թոն, խեղճ ու կրակ, անգլերենում՝ hard and fastness* «անշարժություն, զամված վիճակ», *rough and tumble* «բարձիթողի վիճակ», դ) գոյական+ածական՝ *խաղբ ու խայտառակ, ուժ ու աշխույժ, որբ ու մենակ, անգլերենում՝ art-and-crafty* «ձեռագործ իրեր պատրաստել սիրող», *horse and buggy* «հնաճ», *home and dry* «հաջողությամբ նպատակին հասած», *pepper and salty* «մուգ ու բաց գույների, բժավոր» և այլն:

---

<sup>1</sup> Այնուամենայնիվ, և՛ գոյական+բայարմատ, և՛ բայարմատ+գոյական կազմությունների բաղադրիչները կարող են դիտվել մերթ քալեր, մերթ գոյականներ, և միշտ չէ, որ հստակ է սրանց բաղադրիչների խոսքիմասային պատկանելությունը՝ հատկապես անգլերենում: Օրինակ՝ *զարկ*-ը կարող է ընկալվել և՛ որպես *զարկել* բայի մաքուր արմատ, և՛ որպես *զարկ*՝ գոյական: Անգլերենում հատկապես կոնվերսիայի՝ որպես բառակազմական միջոցի շատ գործուն լինելու պատճառով բավական հաճախ կարելի է բախվել անվանաբայական համանունության խնդրին, երբ բայական մաքուր արմատը համընկնում է գոյականին: Դժվար է որոշել հատկապես համադրական բարդությունների սերող հիմքի խոսքիմասային պատկանելությունը. օրինակ՝ *bakehouse* «*հացատուն*», *washday* «*մաքրության, լվացք անելու օր*» բարդությունները կարող են ընկալվել որպես ոչ թե բայ+գոյական, այլ գոյական+գոյական կաղապարով կազմություններ, քանի որ կան նաև *bake* «թխելը» և *wash* «լվացք» գոյականները: Այնուամենայնիվ, նշված բարդություններն ավելի ճիշտ է համարել բայ+գոյական կաղապարով կազմություններ, քանի որ *bake* և *wash* գոյականները, միևնույն է, համապատասխան բայերի կոնվերսիայի արդյունք են, այսինքն՝ ի սկզբանե բայ են:



Հայերենում կան նաև ձայնարկություն+գոյական կաղապարով կազմություններ, *ինչպես՝ ախ ու դարդ, ախ ու հառաչանք, ախ ու ոխ* և այլն:

Շաղկապական հարադրությունները հիմնականում կազմվում են պարզ հիմքերի հարադրությամբ, սակայն հայերենում կան օրինակներ, որոնց բաղադրիչներն ունեն քերականական ձևավորում, ինչպես՝ *առքով ու փառքով (գործիական հոլովով), կենաց ու մահու (գրաբարյան սեռական հոլովածնով)*, կան նաև կազմություններ, որոնցում բաղադրիչները հոգնակի թվով են դրված, ինչպես՝ *եզներ ու կովեր, սարեր ու ձորեր* և այլն:

Ինչ վերաբերում է համակաղապարային ու փոխկաղապարային կառույցներին, ապա գոյականական բաղադրիչներով շաղկապական հարադրությունները հայերենում հիմնականում կազմում են համակաղապարային կազմություններ, այսինքն՝ ամբողջ հարադրությունը պատկանում է նույն խոսքի մասին, ինչ նրա վերջին բաղադրիչը, և գոյականների հարադրությամբ ստացվում են հիմնականում հենց գոյականներ: Անգլերենում, սակայն, երկու գոյականների հարադրումից կարող է ստացվել ոչ միայն գոյական, ինչպես՝ *alarums and excursions «փրարանցում, հույզեր»*, այլև ածական, ինչպես՝ *hole and corner «զաղտնի, ծածուկ»*, մակբայ՝ *body and soul «ամբողջապես, լիովին (հոգով ու մարմնով)»*, բայ՝ *top and tail «բանջարեղենի վերնի ու ներքնի հատվածները հեռացնել»* և այլն: Հետևաբար, անգլերենում լինում են նաև գոյականական շաղկապական բաղադրությունների փոխկաղապարային կազմություններ: Դրանք միաժամանակ կարող են, օրինակ, լինել գոյական և ածական, ինչպես՝ *meat-and-potatoes «1. մի բանի ամենակարևոր, հիմնական մասը, 2. Հիմնական, կարևոր»*, այսինքն՝ երկարժեք են:

Շաղկապական հարադրությունները, հարադրվելով երրորդ գոյականի հետ, կազմում են որոշիչ-որոշյալ կապակցությամբ կառույցներ, ինչպես՝ *a cat and dog life «անհամերաշխ կյանք»*, *a ham-and-egg sandwich «խոզապուխտով և ձկով*



բրդում», a *hole and corner conspiracy* «ծածուկ դավադրություն», a *life and death struggle* «կենաց-մահու պայքար» և այլն:

Բառակապակցական բարդությունների մյուս տեսակն անգլերենում, ինչպես նշեցինք, շարահյուսական բարդություններն են: Այս տեսակի մեջ Լ. Բաուերն առանձնացնում է ներկենտրոն և արտակենտրոն բաղադրություններ: Ներկենտրոն բաղադրություններն իրենց հերթին բաժանվում են երկու խմբի՝ ա) բաղադրություններ, որոնց մեջ հիմնաբառը (իմաստային ու քերականական կենտրոնը, որն արտահայտված է գոյականով) առաջին բաղադրիչն է, ինչպես՝ *lady-in-waiting* «պալատական, ազնվական կին», *son-in-law* «փեսա (աղջկա ամուսինը)»: այս տեսակն անգլերենում կենսունակ չէ, բ) բաղադրություններ, որոնց մեջ իմաստային կենտրոնը երկրորդ բաղադրիչն է, իսկ առաջին բաղադրիչը բառակապակցություն է կամ նախադասություն, ինչպես՝ a *pain-in-stomach-gesture* «ստամոքսի ցավ ունեցողի շարժում, ժեստ», a *what-do-you-think-movement* «շարժում, որով մեկին ուզում ես հարցնել, թե նա ինչ է մտածում»: այս տեսակն անգլերենում բառակազմական տեսանկյունից ավելի կենսունակ է<sup>1</sup>:

Արտակենտրոն բաղադրությունները հիմնականում բույսերի անուններ են, ինչպես՝ *love-in-a-mist* «Հյուսիսային Ամերիկայում աճող բուսատեսակ՝ հրանունկի ընտանիքից», *love-lies-bleeding* «Հարավային Ամերիկայում աճող բուսատեսակ», *love-idleness* «զառմանուշակ», *mother-of-rhyme* «վայրի ուրց, ծոթոր», *snow-in-summer* «սպիտակ թերթերով անթառամ ծաղիկ»<sup>2</sup> և այլն:

Քանի որ նման բաղադրությունների կազմում հանդես են գալիս ամենատարբեր նախդիրներ, դրանք անգլերենում կոչվում են *նախդրավոր բառակապակցական բարդություններ* (*prepositional phrasal compounds*) և սովորաբար պարունակում են մի

<sup>1</sup> St 'u L. Bauer, նշվ. աշխ., էջ 207:

<sup>2</sup> St 'u H. Marchand, *The Categories and Types of Present-Day English Word-Formation*, 2<sup>nd</sup> edn München, 1969, էջ 122:

գոյական բաղադրիչ և այլ խոսքի մասեր: Նման բաղադրություններ կարող են կազմվել տարբեր նախդիրներով՝ ա) in նախդրով՝ *brother-in-law* «փեսա (քրոջ ամուսինը)», *dyed-in-the-wool* «սկզբունքային, անվարան», *hand-in-glove* «մեկը մեկին արժանի, սազական», *stick-in-the-mud* «նախաձեռնությունից զուրկ մարդ», բ) of նախդրով՝ *family-of-four* «քառանդամ ընտանիք», *jack-of-all-trades* «բազմաշնորհ», *lily-of-the-valley* «հովտաշուշան», *mother-of-pearl* «սադափ», գ) at նախդրով՝ *man-at-arms* «զինված հեծյալ», *gentleman-at-arms* «արքունի թիկնապահ», *stay-at-home* «տանը նստող, տնից քիչ դուրս եկող մարդ», զ) off նախդրով՝ *off-the-shoulder-blouse* «ուները չծածկող կանացի բլուզ», *off-the-record* «ոչ պաշտոնական», է) on նախդրով՝ *on-the-job* «զգոն, ուշադիր», *Johnny-on-the-spot* «մարդ, որ միշտ հասանելի է կարիքի դեպքում»<sup>2</sup> և այլն:

Այս տիպի բաղադրությունների առանձնահատկությունն այն է, որ դրանք ոչ միշտ են բառայնացած, քարացած կազմություններ, այլ կարող են նաև կազմվել անմիջապես խոսելու

<sup>1</sup> St 'u M., Ménová, *Phrasal Compounds in Contemporary British Newspapers* (BAKALÁŘSKÁ PRÁCE), Květen, 2012, էջ 19-38:

<sup>2</sup> Թեև կառուցվածքային տեսանկյունից սրանք ավելի շատ նման են սովորական գոյականական բառակապակցության, սակայն հաճախ քերականական փոփոխությունների են ենթարկվում բառերի պես. *jack-in-the-box* բաղադրության հոգնակի թիվը կազմվում է բառի վերջում *s* մասնիկի ավելացմամբ՝ *jack-in-the-boxes* «դուրս ցատկող տիկնիկով տուփեր», սակայն մյուս կողմից, օրինակ, *brother-in-law* բաղադրության առաջին բաղադրիչը՝ բաղադրության իմաստային ու քերականական կենտրոնն է հոգնակի թիվ ստանում *brothers-in-law* «փեսաներ», որի դեպքում բաղադրությունը շեղվում է բառին հատուկ՝ քերականական վերջավորությունը վերջում ստանալու կանոնից (տե՛ս A. McCarthy, *An Introduction to English Morphology: Words and their Structure*, Edinburgh, 2002, էջ 67-68): Միևնույն ժամանակ *brother-in-law* կապակցությունը սեռական հոլովի մասնիկն ընդունում է վերջին բաղադրիչի վրա, ինչպես՝ *brother-in-law's* «փեսայի», այնպես, ինչպես սովորական բառերը: Հենց սա է պատճառը, որ սրանք կոչվում են բառակապակցական բարդություններ՝ ունենալով և՛ բառակապակցությանը, և՛ բարդ բառին հատուկ քերականական գործառույթներ:



պահին՝ տվյալ իրավիճակում<sup>1</sup>: Հաճախ նշված տիպի բառակապակցական բարդությունների վերածվում են ամբողջական նախադասություններ, ինչպես՝ *a what-should-I-do-next look «how-just, որ ասում է՝ «Հետո ի՞նչ եմ անելու»*:

Թեև սրանք իսկապես բառակապակցության կառուցվածք ունեն, սակայն կատարում են մեկ բառի գործառույթ: Դրանք հիմնականում անհատական, հեղինակային կառույցներ են և գործածվում են խոսքին յուրահատկություն հաղորդելու նպատակով. շատ են հանդիպում նաև գրական ստեղծագործություններում, օրինակ՝ *She looked at him in the “What-a-brave-hero-you-are manner. (Agatha Christie)-«Նա նրան էր նայում այնպիսի հայացքով, կարծես ուզում էր ասել. «Ի՞նչ խիզախ հերոս ես դու» (Ագաթա Քրիստի)<sup>2</sup>: Հայերենում սրանք շարադրվում են նկարագրական եղանակով և ոչ թե մեկ բառի արժեք ունեցող կապակցությամբ: Նման կառույցների առկայությունն անգլերենում պայմանավորված է դրա՝ անջատական լեզու լինելու հանգամանքով, որ թույլ է տալիս, կողք կողքի դնելով մի քանի բառ և նախդիր, առանց դրանք որևէ քերականական փոփոխության ենթարկելու ստանալ մեկ բառի արժեք ունեցող միավորներ: Ընդ որում՝ սրանց կազմության համար հստակ կաղապարներ չկան. ինչպես տեսնում ենք, դրանց կազմում կարող են լինել և՛ գոյականներ, և՛ նախդիրներ, և՛ բայեր, և՛ հոդեր, հետևաբար դրանց կազմությունը չի կարող բնորոշվել որոշակի համակարգայնությամբ, այլ կերպ ասած՝ այս կառույցները կազմված չեն որևէ բառակազմական կաղապարի հետևողությամբ: Սրանք հայերենում չունեն իրենց տիպաբանական գույահերը:*

Բառակապակցական բարդությունները, հարադրվելով մեկ այլ գոյականի հետ, կազմում են որոշիչ-որոշյալ հարաբերու-

<sup>1</sup> Հետաքրքիր են անգլերենում գոյական+to be բայով կապակցությունները *a bride-to-be «սպազա հարսնացու», a mom-to-be «սպազա մայրիկ», a father-to-be «սպազա հայրիկ», a wife-to-be «սպազա կին, տիկին»* և այլն:

<sup>2</sup> Տե՛ս Т. Арбекова, *Лексикология английского языка*, М., 1977, էջ 24:




թյամբ բաղադրություններ, ինչպես՝ *a mother-to-daughter talk «մոր ու աղջկա զրույց», an end-of-term examination «կիսամյակային ավարտական քննություն», the not-quite-at-ease manners «մեկի անհարմար զգալը մատնող պահվածք»* և այլն (սրանք ներկայացնում են Լ. Բաուերի կողմից առանձնացված արտակենսորոն տեսակը):

Երկու լեզուներում, փաստորեն, շաղկապական բաղադրությունները բառակազմական տեսակետից բավականին կենսունակ են: Անզլերենում շաղկապական բաղադրությունների հետ միասին այսպես կոչված բառակապակցական բարդությունների շարքին են դասվում նաև նախդիրների և այլ խոսքի մասերի օգնությամբ կապակցված բաղադրությունները, որոնք իրենց տիպաբանական զուգահեռը չունեն հայերենում: Գոյական բաղադրիչներով շաղկապական հարադրությունների համեմատական-զուգադրական ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի երկու լեզուների տիպաբանական բնութագրման համար:

Карапетян Сирарпи- Союзные аналитические сложные слова с существительными компонентами (компонентом) в армянском и английском языках.— В статье исследуются сложные слова состоящие из существительных компонентов/существительного компонента с союзами. Они вполне продуктивны с точки зрения словостроения в английском и армянском языках. В армянском они образуются преимущественно при помощи союза “և” (и), а реже с “ու”. В английском эти слова образуются в основном при помощи союза “and”, а иногда при помощи союзов “than” и “or”. В английском языке союзные аналитические сложные слова принадлежат к типу так называемых сложных слов-словосочетаний. Кроме сложных слов с союзами, сложные слова-словосочетания еще и включают так называемые синтаксические сложные слова, которые напоминают сегменты речи, соответствующие синтаксическим законам английского языка, например, *editor-in-chief “главный редактор”, Jack-of-all-trades “человек, который является мастером любого дела”*. Данные

СЛОВА НЕ ИМЕЮТ СВОИХ ТИПОЛОГИЧЕСКИХ ЭКВИВАЛЕНТОВ В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ.

401404  
Karapetyan Sirarpi- Conjunctional Analytical Compound Words with a Noun Component/Components in Armenian and English.— The article studies the conjunctional compound words with a noun component/components in Armenian and English. They are rather productive in both languages from the point of view of word-formation. In Armenian they are mainly formed with the help of the conjunction “և” (and), rarely with the help of the conjunction “ու”. In English these units are generally formed with the help of the conjunction “and”, sometimes with “than” and “or”. In English the conjunctional analytical compounds belong to the type of the so-called phrasal compounds. Besides the conjunctional compounds, phrasal compounds also include the so called syntactic compounds which resemble segments of speech corresponding to the syntactic and word order rules of English, e.g. *editor-in-chief* “*chief editor*”, *Jack-of-all-trades* “*a person who can do many different kinds of work*”: the latter do not have their typological equivalents in Armenian.





ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՎԱԾ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՄԱՐԿԵՍԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Սույն հոդվածում անդրադառնում ենք «Մերը խոլերայի ժամանակ», «Հարյուր տարվա մենություն» և «Վերհիշելով իմ տխուր պոռնիկներին» երկերի հայերեն թարգմանություններին, որոնք կատարվել են անգլերենից (կամ ռուսերենից):

Բնական է, որ միջնորդավորված թարգմանությունն իր ազդեցությունն է ունեցել իսպաներեն տեքստը հայերենի վերածելու ընթացքում: Երբեմն այն հայերեն թարգմանության վրա ունեցել է դրական, որոշ դեպքերում էլ բացասական ազդեցություն՝ արտահայտվելով բնագրում առկա փոխաբերություն պարունակող արտահայտությունների թարգմանության դեպքում՝ օրինակ՝ *Se levantaba con los primeros gallos*<sup>1</sup> ~ անգլ. *He rose with the crack of dawn*<sup>2</sup>. ~ Նա վեր էր կենում ծեղը-ծեղին<sup>3</sup>: Իսպաներեն տեքստում ընդգծված բառակապակցությունը *los primeros gallos* նշանակում է *առաջին աքաղաղների հետ*, որ անգլերեն թարգմանվել է *the crack of dawn*, այսինքն բառացի *արշալույսի ճեղքով*: Ինչպես նկատելի է բերված օրինակից, հայերեն թարգմանությունը կատարվել է անգլերեն տեքստի նմանությամբ՝ ծեղը-ծեղին: Տվյալ

<sup>1</sup> G. G. Márquez, *El Amor en los Tiempos del Cólera*, Nueva York, 1996, p. 18.

<sup>2</sup> G. G. Márquez, *Love in the Time of Cholera*, tr. by Alfred Knopf, New York, 1988, p. 5.

<sup>3</sup> Գ. Գ. Մարկես, *Մերը խոլերայի ժամանակ*, թարգմ. Ա. Քլոյան, Ե., 2004, էջ 10. (այսուհետև շարադրանքին կից նշում ենք բնագրի էջերը, նաև անգլերենի և իսպաներենի դեպքում):

\*Հոդվածում հիշյալ երկերը տալիս ենք հետևյալ համառոտագրությամբ՝ ՄԻԺ «Մերը խոլերայի ժամանակ», ՀՏՄ «Հարյուր տարվա մենություն», ՎՏՊ «Վերհիշելով իմ տխուր պոռնիկներին»:

դեպքում միջնորդավորված թարգմանության ազդեցությունը վատ չի ազդել թարգմանության վրա:

Միջնորդավորված թարգմանությունն իր ազդեցությունն է թողնում բառային իմաստների տարբեր հարանշանակային (կոն-նոտատիվ) դրսևորումների թարգմանությունների ժամանակ:

Օրինակ՝ ...*había consumido por orden de aparición* (p. 106) ~ անգլ.՝ ...*he had devoured, in order of their appearance* (p. 58) ~ ...*խժոռւմ էր երբ և ինչ ձեռքն ընկներ* (էջ. 76): *Había consumiendo* (վերացնել, ջնջել) ~ անգլ.՝ *had devoured* (լափել, ագահաբար ուտել) ~ *խժոռել*:

Ինչպես երևում է, բնագրում հարանշանակային երանգը բավականին մեղմ է՝ ի տարբերություն անգլերենի, որում *սպառել, ուտել* իմաստը թարգմանվել է հոմանիշ բառով, սակայն ձեռք է բերել առավել կոպիտ երանգ՝ *լափել, ագահաբար ուտել*: Հայերեն թարգմանությանը փոխանցվել է անգլերենի հարանշանակային երանգը: Նման փոփոխությունն ունի իր հիմնավորումը. *երբ և ինչ ձեռքն ընկեր* հատվածից պարզ է դառնում, որ թարգմանության մեջ *խժոռել* բայի կիրառումն անտեղի չէ:

Սակայն երբեմն հայերեն թարգմանության մեջ միջնորդավորված թարգմանության ազդեցությամբ խամրում է բնագրի իմաստը: Օրինակ՝ -*Déjalos que hablen*<sup>1</sup>... ~ ռուս.՝ -*А пусть ЯЗЫКОМ БОЛТАЮТ*<sup>2</sup>... ~ -*Թող դուրս տան*<sup>3</sup>... :

Իսպաներենից բառացի թարգմանվում է՝ *թող խոսեն*, հայերենում՝ *թող դուրս տան*: Թարգմանիչը հայերենի *դուրս տալ* հարադիր բայով արտահայտել է զայրույթ, քամահրանք, որը չկա իսպաներենում: Հարանշանակային երանգի նման փոփոխու-

<sup>1</sup> G. G. Márquez, *Cien años de soledad*, <http://www.uaca.ac.cr/bv/ebooks/novela/3.pdf>, p. 10.

<sup>2</sup> Г. Г. Маркес, *Сто лет одиночества*, [http://www.loveread.ec/read\\_book.php?id=18368&p=1](http://www.loveread.ec/read_book.php?id=18368&p=1), c. 5.

<sup>3</sup> Գ. Գ. Մարկես, *Հարյուր տարվա մենություն* (թարգմ. Ռ. Հովսեփյան), Ե., 1987, էջ 24. (այսուհետև շարադրանքին կից տալու ենք միայն բնագրի էջերը. նույնը նաև ռուսերենի և իսպաներենի դեպքերում):



թունը կատարված է ռուսերենի ազդեցությամբ:

Մեկ այլ օրինակ՝ *Pero no trates de inculcar a los niños tus ideas de gitano.* (p. 4) ~ ռուս.՝ *Но детям не забывай мозги цыганской брехней.* (с. 1) ~ ...բայց անիծյալ գնչուների զառանցանքները երեխաների գլուխը մի՛ խցկի: (//ՀՏՄ// էջ 7):

Իսպաներենից թարգմանաբար *inculcar* նշանակում է՝ ներարկել, ներմուծել, որը հայերենում թարգմանվել է «գլուխը խցկել» դարձվածային միավորով: Այն պարունակում է լեզվամտածողության տարր, որ թարգմանության մեջ կիրառվել է ռուսերենի նմանությամբ՝ *не забывай мозги - ուղեղը խցանել, խցկել իմաստով*: Այս օրինակում ևս հարանշանակային երանգը բխում է միջնորդ թարգմանությունից: Իսպաներենում *inculcar* բայը կրում է չեզոք բնույթ:

Միջնորդավորվածությունն իր ազդեցությունն է ունեցել նաև բառային միավորների թարգմանությունների վրա. օրինակ *De no ser lo que era en esencia, un cristiano a la Antigua, tal vez hubiera estado de acuerdo con Jeremiah de Saint-Amour...* (p. 62) ~ անգլ.՝ *If he had not been what he was - in essence an old-style Christian - perhaps he would have agreed with Jeremiah de Saint-Amour...* (p. 32) ~ Թերևս ուրիշ մեկը լիներ՝ ըստ էության, եթե հին-գլուխ քրիստոնյա չլիներ, զուցեն համաձայներ երեմիա դե Մեյնթ Ամուրի հետ... (էջ 43):

Ընդգծվածը հայերենում անվանական հարադրություն է, որ նշանակում է «հին վարքուրարքի տեր, պահպանողական»: Անգլերենում ևս առկա է հարադրական բարդություն՝ *an old-style Christian*, որն իմաստային առումով նույնն է, ինչ հայերենում, սակայն բառացի ստացվում է *հնաճ քրիստոնյա*:

Այնուհետև, բերում ենք օրինակներ, որոնցում հայերեն և անգլերեն (կամ ռուսերեն) թարգմանությունները ներկայացնում են բայական հարադրություն, այնինչ իսպաներենում այն արտահայտված է պարզ կամ անդրադարձ բայերով:

Օրինակ՝ *Ella se acostó a su lado con bastante descuido para que despertara y se fuera* (p. 47) ~ անգլ.՝ *She lay down beside him in a*

rather careless way so that he would wake up and leave. (p. 1) ~ Կինը բավական անփութորեն եկավ-պառկեց կողքին, որ նա արթնանա ու հեռանա (էջ 32):

Բայական հարադրություն կա անգլերենում և հայերենում, իսպաներենում անդրադարձ *acostarse* բայն է (3-րդ դ., եգ. թիվ, անցյալ կատարյալ ժամանակաձև): Անգլերենի ազդեցությունը հայերենի վրա պայմանավորված է բայական հարադրության կիրառմամբ: Հայերենում թերևս հնարավոր էր նաև *կինը բավական անփութորեն պառկեց կողքին...* ձևով: Սյնուամենայնիվ, բայական հարադրության կիրառությունից թարգմանությունն իմաստապես չի տուժել:

Մեկ այլ օրինակ՝ *...que volvió de su antiguo palenque de esclavos tan pronto como le avisaron del regreso.* (p. 136) ~ անգլ. *...who came back from her old slave quarters as soon as she was told of their return.* (p. 77) ~ *...որ նրանց վերադարձի լուրը առնելուն պես եկել-հասել էր ստրկական հին թաղամասերից* (էջ 98):

Բնագրում առկա պարզ բայը՝ *volver*, նշանակում է «վերադառնալ»: Անգլերեն թարգմանվել է *come back* բայական հարադրությամբ, որը նույնպես նշանակում է «վերադառնալ»: Հայերենում բայական հարադրությամբ թարգմանությունը պայմանավորված է նախ՝ անգլերենում առկա հարադիր բայի ազդեցությամբ, ապա՝ այն պատճառով, որ բնագրի նմանությամբ՝ *վերադառնալ* բայի կիրառմամբ թարգմանվելու դեպքում նախադասության մեջ անհարկի կրկնություն կստացվեր:

Օրինակ՝ *...cuando saliera del baño.* (p. 42) ~ անգլ. *...when he came out of the bathroom.* (p. 20) ~ *...երբ լողասենյակից դուրս գալը* (էջ 28):

Անգլերենի ազդեցությունն առկա է նաև բերված օրինակում: *Դուրս գալ* և *come out* բայական հարադրությունները երկու լեզուներում բաղադրիչների քանակով և իմաստով նույնական են, այնինչ բնագրում ունենք պարզ բայ՝ *salir*: Բայական հարադրության կիրառությունը անգլերենում, նաև հայերենում թերևս պայմանավորված է նույնիմաստ պարզ բայի բացակայությամբ:



Մեկ այլ օրինակ՝ *No fue fácil llevarse la*. (p. 242) ~ անգլ.՝ *It was not easy to take her away*. (p. 142) ~ Հեշտ չէր նրան բռնել-տանելը: (էջ 178):

Այս դեպքում հայերեն թարգմանության մեջ անգլերենի ազդեցությամբ ավելացվել է բռնել բայը, որով կազմված բայական հարադրությունը համարժեք է անգլ. «տանել», իսպ. «տանել, հեռացնել» իմաստներով բայերին: Հայերենում նույնպես կարելի էր կիրառել *հեռացնել, տանել*, բայց թարգմանիչը նախընտրել է *բռնել-տանել* հարադրությունը՝ հավանաբար ավելի շեշտելով նրան գտնելու դժվարությունը:

Բաղիյուսական բարդությունների թարգմանության ժամանակ լինում են դեպքեր, երբ հայերենում դրանք կիրառված են անգլերենի ազդեցությամբ: Օրինակ՝ *...tropezaba con el recuerdo de Florentino Ariza*. (p. 299) ~ անգլ.՝ *... she would find herself face to face with Florentino Ariza*. (p. 177) ~ *...դեմ առ դեմ հանդիպում էր Ֆլորենտինո Արիզային*: (էջ 222):

Հայերենի *դեմ առ դեմ հանդիպել* իմաստը իսպաներենում արտահայտված է *tropezar* (բախվել) ձևով, իսկ անգլերենում՝ *find...face to face* (*էրես առ էրես հանդիպել*): Սա նշանակում է, որ հայերեն թարգմանության մեջ այն օգտագործվել է անգլերենի նմանությամբ, այն է՝ *դեմ առ դեմ* - *face to face*, որից բնագրի իմաստը չի տուժել:

Մեկ այլ օրինակ՝ *...y no sólo ahora, sino desde antes, mucho antes que usted naciera*. (p. 414) ~ անգլ.՝ *...and have been since long, long before you were born*. (p. 248) ~ *...և ձեր ծնվելուց շատ ու շատ առաջ էլ միշտ այդքան մեծ եմ եղել* (էջ 310):

Անգլերենում ընդգծված հաստատվածք միայն վերապահումով կարելի է համարել բաղիյուսական բարդություն, և պատճառն այն է, որ նույն արմատը կրկնվել է երկու անգամ, սակայն առանձնացել է ոչ թե գծիկով, այլ ստորակետով:

Թարգմանության մեջ *շատ ու շատ* բարդությունը թերևս կարելի էր փոխարինել *վաղուց, շատ վաղուց* արտահայտությամբ:

Մեկ այլ օրինակ՝ *Presa de pánico se lo contó a tía Escolastica...* (p. 101) ~ անգլ. *Panic stricken, she told her Aunt Escolástica* (p. 55) ~ Մարսափից խելացնոր՝ նետվեց հորաքույր Էսկոլաստիկային հայտնելու... (էջ 72):

*Խելացնոր՝ խելքը կորցրած, սարսափահար*: Անգլերեն թարգմանության մեջ հանդիպող *panic stricken* տարբերակը շատ բառարաններում գրանցված է որպես բարդություն՝ անջատման գծիկով: Իսպաներենի նմանությամբ նախադասությունը կազմվելու դեպքում կստացվեր հետևյալ կերպ՝ *stricken by panic*, (իսպաներեն՝ *presa de pánico՝ վախից ընկճված*): Հետևաբար, հայերեն թարգմանության մեջ կցական բարդության կիրառումը համարում ենք անգլերենի ազդեցություն: Թարգմանությունը կատարված է ճշգրիտ:

Հետևյալ օրինակում՝ *No le había sido fácil recobrar ese dominio...* (p. 70) ~ անգլ. *It had not been easy for her to regain her self-control...* (p. 37) ~ Նրա համար հեշտ չէր վերագտնել ինքնատիրապետումը... (էջ 49) առկա է *dominio* բառի թարգմանությունը:

Անգլերենում՝ *self - ինքն, control - տիրապետում*, հայերենում՝ *ինքնատիրապետում*: Բնագիրն ավելի ընդհանուր ձևով է՝ *dominio*, որը նշանակում է *տիրապետում*: Տվյալ դեպքում անգլերեն և հայերեն թարգմանության մեջ բարդության կիրառմամբ կատարվել է բառիմաստի կոնկրետացում:

Մեկ այլ օրինակ՝ *varón* (p. 68) ~ անգլ. *firstborn* (p. 38) ~ *առաջնեկ* (էջ 48):

Այս դեպքում իսպաներենի *varón* գոյականը, որ նշանակում է՝ *զավակ, որդի*, միջնորդ լեզվում թարգմանվել է *“firstborn”-առաջնեկ*: Հայերեն տարբերակում, ազդվելով անգլերեն թարգմանությունից, կիրառվել է *առաջնեկ (առաջինը ծնված)*, թեպետ սխալ չէր լինի նաև *որդի* կամ *զավակ* թարգմանելը, ինչպես որ բնագրում է, թեև այս դեպքում ևս իմաստային փոփոխություն տեղի չի ունեցել:

Իսպ. *...lo despidió con un apretón de manos*. (p. 79) ~ անգլ.



...he said goodbye with a handshake. (p. 42) ~ ...ձեռքսեղմումով  
հրաժեշտ տվեց. (էջ 54):

Իսպաներենում *apretón de manos* - *ձեռքերի սեղմում*, ազատ բառակապակցությունն անգլերենում թարգմանված է *handshake* բարդությամբ, որը թարգմանաբար նշանակում է «*ձեռքերի շարժում*, *սեղմում*»: Հայերեն թարգմանվել է *ձեռքսեղմում*։ Անգլերենի ազդեցությամբ հայերեն թարգմանությունը կառուցված է հայերենին հարազատ ոգով և կազմությամբ, միննույն ժամանակ չի հակասում բնագրի իմաստին։ Բացի այդ՝ թարգմանություններում տեքստն ավելի հակիրճ է՝ ի տարբերություն բնագրի։

Մի քանի խոսք այն վերաբերմունքի մասին, որ այսօր առհասարակ գոյություն ունի միջնորդավորված թարգմանության մասին։ Լավ կլինի, իհարկե, որ բոլոր թարգմանությունները կատարվեն բնագրից։ Բայց իրականությունն այն է, որ եթե միջնորդավորված թարգմանությունը դիտարկենք այդ տեսանկյունից, ուրեմն պետք է անտեսենք այն լավագույնը, որ միջնորդությամբ է հայերեն թարգմանվել. ասենք, ուզբեկական, ղազախական, կիրգիզական, չինական, կորեական, ճապոնական և այլն։ Առայժմ պետք է բավարարվենք նրանով, ինչ կա, և ըստ արժանվույն գնահատենք եղածը։ Ամփոփելով՝ կարելի է նշել, որ Մարկեսի ստեղծագործությունների հիշյալ միջնորդավորված թարգմանություններով հայ ընթերցողը ծանոթանում է Մարկեսի գրական ժառանգությանը։

Այսպիսով, Մարկեսի երկերի հայերեն թարգմանություններում միջնորդավորվածությունն ունեցել է հիմնականում դրական ազդեցություն՝ որոշ բացառություններով։ Միջնորդավորված թարգմանության ազդեցությամբ հայերեն տեքստը որոշ դեպքերում դարձել է ավելի հստակ, կատարվել է բառիմաստի կոնկրետացում, նախադասությունը ձևակերպվել է առավել հակիրճ, քան բնագրում է։

Айрикан Елена- Вопрос косвенного перевода в произведениях Маркеса.- Цель данной статьи- на основе произведений Г. Г.

Маркеса, представить некоторые особенности косвенного перевода. В некоторых случаях косвенность способствовала передачи содержания испанского текста на армянский. В результате косвенного перевода армянский текст произведений “Любовь во время холеры”, “Сто лет одиночества”, “Вспоминая моих печальных шлюх ” стал более четким, конкретным.

Hayrikyan Yelena- The Question of the Indirect Translation in the Works of Marquez.- The purpose of this article - based on the novels of G. G. Marquez, is to represent some characteristics of the indirect translation. In some cases the indirect translation contributed to the transfer of the meanings of the original text to the Armenian language. In the result of the indirect translation the Armenian text of “Love in the Time of Cholera”, “100 years of Solitude” and “Memories of My Melancholy Whores” became clearer and more concrete.



*Մուրադյան Լուսինե*  
(ԳԱԱ լեզվի ինստիտուտի հայցորդ)

**ՀԱՅԵՐԵՆԻ, ՌՈՒՍԵՐԵՆԻ, ԱՆԳԼԵՐԵՆԻ ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐԻ  
ԿԱՂԱՊԱՐԱՅԻՆ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ-ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ  
ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

*Հայերենում, ռուսերենում և անգլերենում* կան բայեր, որոնք չեն ենթարկվում բայակազմության ընդհանուր կանոններին և հանդես են գալիս *անկանոնություններով*: Մակայն գուգադրվող լեզուներում չկա անկանոնության ընդհանուր մի հատկանիշ, սկզբունք ըստ որի կդասակարգվեն անկանոն բայերը: Յուրաքանչյուր լեզվի բայական անկանոնությունն բխում է տվյալ լեզվի պատմական զարգացման առանձնահատկություններից: Օրինակ՝ *հայերենում* անկանոնությունը դրսևորվում է անկատար և կատարյալ հիմքերի, *ռուսերենում*՝ ինչպես բայի հիմքի, այդպես էլ դիմաթվային վերջավորությունների, իսկ *անգլերենում*՝ երկրորդ և երրորդ հիմքերի կազմության ժամանակ: Կադապարների կազմության սկզբունքով քննենք երեք լեզուների անկանոն բայերի դասակարգման սկզբունքները՝ վեր հանելով դրանց ընդհանրությունները և տարբերությունները:

*Հայերենում* անկանոն բայերը հանդես են գալիս

1. փոփոխված հիմքով՝  $A > \underline{A}$  (ար-, դր-, տար- և հերթագայություն ունեցող դարձ-),
2. տարարմատությամբ՝  $A > B$ , (ուտել-կեր-, լինել-եղ-),
3. փոփոխված հիմքակազմիչով, որը կադապարում չի արտահայտվում, քանի որ և՛ անկանոն ասել-ասաց, և՛ կանոնավոր խոսել-խոսեց բայերը քննում ենք  $Ac$  կադապարով՝ հիմք+հիմքակազմիչ,
4. բայական տվյալ խմբին ոչ բնորոշ դիմաթվային վերջավորություններով՝ լվանալ-լվացի, թողնել-թողի, որոնք

նույնպես քննում ենք կանոնավոր բայերի կադապարներով Acb, Ab,

5. բայական տվյալ խմբին ոչ բնորոշ դերբայական վերջավորությամբ՝ Aa, որտեղ պահպանվում է նաև անորոշի ձևը՝ գալ+իս, տալ+իս, լալ+իս,
6. հրամայականում Ab կադապարի փոխարեն հանդես է գալիս A-ն (բե՛ր, գա՛րկ, ե՛լ, ա՛ռ, տե՛ս):

**Ռուսերենի** անկանոն բայերը **հայերենի** անկանոն բայերից քիչ են. *хотеть, бежать, читать, есть, надоесть, дать, соз-дать, быть, идти, ехать, мягко и зацикливаться, зыбнуть(ся)*, որոնցից վերջին երկուսը հնացած ձևեր են<sup>1</sup>: Շեղումները հանդես են գալիս ներկա ժամանակի դիմաթվային վերջավորությունների և բայի հիմքի կազմության ժամանակ: Ինչպես գրաբարի խառը խոնարհումների դեպքում, **ռուսերենում** բայը եզակի թվում կարող է լինել առաջին խոնարհման, իսկ հոգնակ թվում՝ երկրորդ<sup>2</sup>, օրինակ՝ *хочешь* բայը ներկայում առաջին խոնարհման է, անցյալ ժամանակում՝ երկրորդ, ինչպես *зациклился(ся)*, *зыбнул(ся)* բայերն են, բայց բայը կարող է նաև չպատկանել ո՛չ առաջին, ո՛չ երկրորդ խոնարհման՝ *բայահիմքում միաժամանակ կրելով հնչյունական հերթագայություն*՝ *дам, дашь, даст* (տե՛ս աղյուսակ առաջինում):

### Աղյուսակ 1: Ռուսերենի անկանոն բայերի

#### առանձնահատկությունները

| Անկա-<br>նոն<br>բայեր          | Առաջին<br>խոնար-<br>հում            | Երկրորդ<br>խոնարհում                                                | Այլ<br>խոնար-<br>հում | Հեր-<br>թագա-<br>յութ. | Տարար-<br>մատ. |
|--------------------------------|-------------------------------------|---------------------------------------------------------------------|-----------------------|------------------------|----------------|
| хотеть<br>бежать<br><br>читать | хочу/есть/<br>ет бегут<br><br>читут | хотим/ите/ят<br>бегу,<br>бежишь/ит/им/<br>ите чту/ишь/<br>ит/им/ите | -                     | ч>т<br>ж>г<br><br>-    | -              |

<sup>1</sup> Русская грамматика, том I, М., 1980, էջ 662-663:

<sup>2</sup> Նշվ. աշխ., էջ 662:



|                                     |                                                         |                                                                                             |                                                                         |                                  |                                                  |
|-------------------------------------|---------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------|----------------------------------|--------------------------------------------------|
| есть<br>надоестъ<br>дать<br>создать | -<br>-<br>дадут<br>создадут                             | едим/ите/ят<br>-<br>дадим/ите<br>создадим/ите                                               | ем/ишь/ст<br>-<br>надоем/ишь/<br>ст дам/ишь/<br>ст<br>создам/ишь/с<br>т | с>д<br>с>д<br>т>д<br>т>д         | -                                                |
| быть<br>ехать<br>идти               | -                                                       | -                                                                                           | -                                                                       | бы><br>буд<br>еха>ед<br>-        | есть (наст.<br>в.)<br>-<br>шёл, шла,<br>шло, шли |
| мяукать <sup>1</sup>                | -                                                       | мяучу/ишь/ит/и<br>м/ите/ат                                                                  | -                                                                       | к>ч                              | -                                                |
| зидить<br>(ся)<br>зыбить<br>(ся)    | зид-ут<br>/ишь/ет<br>(ся)<br>зыбл-ют<br>/ишь/ет<br>(ся) | зиди-л-ся/ -л-<br>а-сь, -л-о-сь, -л-<br>и-сь<br>зыби-л-ся/-л-а-<br>сь, -л-о-сь, -л-и-<br>сь | -                                                                       | -<br>-<br>б>бл <sup>1</sup><br>- | -                                                |

*Ռուսերենի* անկանոն բայերը հանդես են գալիս հետևյալ առանձնահատկություններով.

1. տարարմատությամբ  $A > B$  (*быть-есть, идти-шёл, шла, шло, шли*)
2. փոփոխված հիմքով  $A > \underline{A}$  (*ем/ишь/ст, дам/ишь/ст, на-даем/ишь/ст, создам/ишь/ст*)
3. բայի խոնարհման ձևերի մի մասը՝ առաջին, մյուսը՝ երկրորդ, մյուսներն էլ այլ խոնարհմամբ (առաջին խոնարհում՝ *хочу/ишь/ет, бегут*, երկրորդ խոնարհում՝ *хотим/ите/ят, бегу, бежим/ишь/ет/ишь/ите, այլ խոնարհում/ем/ишь/ст, дам/ишь/ст, надаем/ишь/ст, создам/ишь/ст*), կաղապարների կազմության ժամանակ փոփոխությունը չի արտահայտվում, քանի որ կանոնավոր և անկանոն ձևերի կաղապարները համընկնում են՝ հիմքում հաճախ կրելով հընչունական հերթագայություն, օրինակ՝ *хочу-Ab* և *нушу-Ab*

<sup>1</sup> Мяукать բայը հանդես է գալիս նաև որպես կանոնավոր բայ: Այս դեպքում բայի առաջին խոնարհման է:

Այսպիսով, *հայերենի* և *ռուսերենի* անկանոն բայերի խոնարհման կաղապարները համընկնում են, երբ բայերը կազմվում են տարարմատությամբ և փոփոխված հիմքով, մյուս հատկանիշներով տարբերվում են:

*Անգլերենի* լայն կիրառություն ունեցող անկանոն բայերն ավելի քան տասն անգամ գերազանցում են *հայերենի* և *ռուսերենի* անկանոն բայերին<sup>1</sup>: *Կանոնավոր բայերի* չորս հիմքերի սահմանները, ի տարբերություն անկանոնների, հստակորեն ընդգծված են: Առաջին հիմքն է բայի անորոշ ձևը (ինֆինիտիվը)՝ *to work, to play, to start, to dance*, երկրորդը՝ պարզ անցյալը, որը կազմվում է *-ed* մասնիկով՝ *worked, played, started, danced*, երրորդի հիմքը դերբայականն է (past participle), որը համընկնում է *-ed*-ով կանոնավոր բայերի հիմքին, սակայն վերջինս ունի կիրառության առանձնահատկություն. այն հանդես է գալիս օժանդակ, մոդալ բայերի հետ<sup>2</sup>: Չորրորդ հիմքը շարունակական ժամանակի *-ing*-ով բայաձևն է, որի կազմության ժամանակ անկանոնություն չի դրսևորվում:

*Անգլերենի* բայերի *անկանոնությունը* դրսևորվում է երկրորդ և երրորդ հիմքերի կազմության ժամանակ: Հետևաբար ի տարբերություն *ռուսերենի* և *հայերենի*՝ *անգլերենի* անկանոն բայերի կաղապարները վերլուծելիս պետք է համեմատել առաջին երեք հիմքերը՝ փոփոխման ելակետ ընդունելով առաջին հիմքը:

*Անգլերենի* անկանոն բայերի համակարգում գերակշռում է թեքական լեզուներին բնորոշ հատկանիշը. բայի հիմքը մի դեպքում հանդես է գալիս բայարմատի հնչյունի կամ հնչյունների հերթագայությամբ, մեկ այլ դեպքում՝ տարարմատությամբ, հիմքը կարող է նաև համընկնել, բայց ոչ թե երկրորդ և երրորդ հիմքերի վերջավորությանը, այլ անփոփոխ արմատին, օրինակ՝ *put-*

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս O. Jespersen, *A modern English grammar. On historical principales*, part VI, Morphology, London, 1954, էջ 31-76:

<sup>2</sup> E. Gordon, I. Krilova, *Tense and voice in modern English*, M., 1971, էջ 174-178:



*put-put, set-set-set*: Անգլերենում երկրորդ և երրորդ հիմքերում փոփոխության չենթարկվող բայերը քննվում են անկանոնությունների մեջ: Ներկայացնենք անկանոնության տեսակներն ըստ խմբերի.

1. բայի երկրորդ և երրորդ հիմքերը նույնն են, բայց տարբերվում են առաջին հիմքից  $A > \underline{A} > \underline{A}$  (*stand-stood-stood, teach-tought-tought, meet-met-met, sit-sat-sat*)
2. բայի երեք հիմքերը նույնն են  $A > A > A$  (*bet-bet-bet, cut-cut-cut, put-put-put, shut-shut-shut, let-let-let*)
3. երեք հիմքերում բայը նույն է ըստ գրության, տարբեր՝ ըստ արտասանության  $A > A^* > A^*$ , *read* [ri:d]-առաջին հիմք, *read* [red]-երկրորդ հիմք (<\*> նշանը պայմանականորեն արտասանության տարբերակիչ նշանն է)
4. երեք հիմքերը տարբեր են, իսկ դերբայական *-ed* վերջավորության փոխարեն հանդես է գալիս այլ մասնիկ *-en/n/ne-*ն. պայմանականորեն նշանակում ենք *a*, ստացվում է  $A > \underline{A} > \underline{Aa}$  կաղապարը, (*speak-spoke-spoken, tear-tore-torn, shrive-shrove-shriven, do-did-done*): Այս կաղապարը մասամբ նման է հայերենի *գալ, տալ, լալ* անկանոն բայերի ներկայի ձևերի կաղապարին *գալ+իս, տալ+իս, լալ+իս*:
5. առաջին և երկրորդ հիմքերը համընկնում են, իսկ երրորդ հիմքում հանդես է գալիս դերբայական վերջավորության փոխարեն գործածվող քերականական մասնիկը՝ *en-ը*  $A > A > Aa$  (*beat-beat-beaten*)
6. առաջին և երրորդ հիմքերը համընկնում են, իսկ երկրորդ հիմքում կա ձայնդարձ  $A > \underline{A} > A$  (*come-came-come, run-ran-run, become-became-become*)
7. բայի հիմքերը կազմվում են տարարմատությամբ  $A > B > C$  (*go-went-gone, be-was/were-been*)

Այսպիսով, *հայերենի, ռուսերենի և անգլերենի* անկանոն բայերի կաղապարները զուգադրելիս, կստացվեն անկանոնության հետևյալ ընդհանրությունները.

1. բայի հիմքում հնչյունափոխություն և ձայնդարձ,

2. տարաբնույթություն՝ ուտել-կերա, идти-шёл/шла/шло/шли, go-went, gone, be-was/were, been, սակայն եթե անգլերենում տարաբնույթությունը դրսևորվում է երեք հիմքերում՝ go-went-gone, *հայերենում* հանդես է գալիս կատարյալից կազմված ժամանակաձևերում՝ գալ-եկա, *ռուսերենում*՝ անցյալ անկատարում՝ *идти-шёл, шла, шло, шли*,
3. հայերենի և անգլերենի անկանոն բայերին բնորոշ է ոչ կանոնավոր դերբայական մասնիկավորումը՝ *գալ-գալիս, beat-beat-beaten*,
4. *ռուսերենի* և *հայերենի* բայերի անկանոնությունները դրսևորվում են ամբողջ հարացույցում, իսկ *անգլերենի* անկանոն բայերինը երեք հիմքերում,
5. զուգադրվող երեք լեզուների անկանոն բայերի կազմության ժամանակ գերակշռում են թեքական լեզուներին բնորոշ հատկանիշները:

Անկանոնության մյուս հատկանիշներով զուգադրվող լեզուները տարբերվում են:

Muradyan Lusine- Pattern-based comparative-typological analysis of armenian, russian and english irregular verbs.- In the article there is analyzed the linguistic patterns of Armenian, Russian and English irregular verbs. On this way we are trying to find out the principle of irregularities of three comparative languages. As a result of the analysis we find out five overall principle of irregularities.

Мурадян Лусине- Сравнительно-типологический анализ изолированных глаголов армянского, русского и английского языков на основе моделирования.- В статье анализированы лингвистические формы изолированных глаголов армянского, русского и английского языков. Таким образом мы старались найти общий принцип изолированности глаголов в трех сравниваемых языках. В результате анализа мы нашли пять основных принципов изолированности глаголов.



ՎԱՂ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ԼԵԶՎԱՎԻՃԱԿԸ՝ ԸՍՏ ԱՌԱՋԻՆ  
ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ՏՊԱԳԻՐ ԳՐՔԵՐԻ

Հայոց լեզվի զարգացման նոր փուլը՝ աշխարհաբարը, հայտնի է նաև *վաղ աշխարհաբարի, աշխարհաբարի կազմավորման, ժամանակակից հայոց լեզվի վաղ շրջան* անվանումներով: Հայոց լեզվի պատմության այս կարևոր ժամանակաշրջանում են տպագրվել առաջին աշխարհաբար գրքերը՝ «Արհեստ համարողութեան ամբողջ և կատարեալ» (Մարսել, 1675), «Պարզաբանութիւն հոգեւնուագ սաղմոսացն Դաւթի մարգարէին» (Վենետիկ, 1687), «Գանձ չափոյ, կշռոյ, թւոյ և դրամից բոլոր աշխարհի» (Ամստերդամ, 1699): Վերոհիշյալ գրքերի լեզվական քննությունը կարող է ցույց տալ, թե աշխարհաբարն ինչպիսի լեզվական հիմքի վրա է ձևավորվել, որ բարբառախմբերից լեզվական ինչ իրողություններ է վերցրել, ինչպիսի կապ է առկա աշխարհաբարի սկզբնական լեզվավիճակի և հետագա երկու ճյուղերի միջև (արևելահայերեն և արևմտահայերեն):

«Արհեստ համարողութեան»-ը մաթեմատիկական ձեռնարկ է և նախատեսված է եղել հատկապես հայ վաճառականների համար: «Պարզաբանութիւն» երկը կրկին ուղղված է հայ վաճառականներին, սակայն, ի տարբերություն «Արհեստ համարողութեան», այստեղ շեշտադրված են ոչ թե գործնական գիտելիքները, այլ վաճառականների հոգևոր արժեքները: «Գանձ»-ը ևս տպագրվել է հատկապես հայ վաճառականների համար: Գրքերի նպատակների մասին կարողում ենք ինչպես նրանց առաջաբաններում, այնպես էլ հիշատակարաններում:

Մեր աշխատանքը նվիրված է վաղաշխարհաբարյան լեզվավիճակի ուսումնասիրությանը, որը հենվում է առաջին աշ-

խարհաբար տպագիր վերոհիշյալ գրքերի լեզվական փաստերի վրա<sup>1</sup>: Հատկանիշներից ընտրել ենք մեր կարծիքով առավել բնութագրականները:

1. Բառաձևեր, բառօգտագործում: ա) «Արհեստ համարողութեան» երկի լեզվում հաճախ է գործածվում մին ժողովրդական բառաձևը, օրինակ՝ Այսպես էլ թե որ միայն *մին* գիր լինի, կասվի միաուր, *Մին* ուրիշ ճանապարհ էլ կայ հանելու որ հեշտ է քան զես.... (ԱՀ 21), ....ն կգտնուիք թե *մին* թիւ պակաս է կուրարդենք.... (ԱՀ 23) են: Այն առաջացել է մի բառի և ն հոդի միացությունից: Ռ. Իշխանյանը նշում է, որ այս բառաձևը, թեև ավանդվել է գրաբար դասական բնագրերում, նույն ձևով պահպանվել է արևելյան որոշ բարբառներում<sup>2</sup>: Դրանցից են Արաբատյան, Ն. Ջուղայի, Արցախի բարբառները: Վաղաշխարհաբարյան շրջանում այն ընկալվում է որպես այս բարբառներից բնորոշ իրողություն: Արևմտահայ խոսքին հատուկ են ոչ թե մին, այլ մը կամ մըն ձևերը, որոնք մեր քննած երկերի լեզվում բացարձակապես չեն հանդիպում: «Արհեստ համարողութեան» երկի սկզբնական մասում գործածվում է մին բառաձևը, հետագայում սկսում է կիրառվել նաև մեկ-ը, որը դիտվում է մին-ի համանիշ, օրինակ Յետոյ շուտով *մեկ* թիւ մի կու բարդենք (ԱՀ 23), Յետոյ կու բարդենք *մեկ* թիւ մի գրին.... (ԱՀ 23) են: Քննությունը ցույց է տալիս, որ մին և մեկ բառաձևերից շատ ավելի հաճախ է գործածվում և գերակշռում է մին-ը: Վերոհիշյալ զուգահեռներից

<sup>1</sup> Աշխատանքում «Արհեստ համարողութեան ամբողջ և կատարեալ» գրքի անվանումն այսուհետ կգործածենք պայմանական կրճատ տարբերակով՝ «Արհեստ համարողութեան», «Պարզաբանութիւն հոգեւնուագ սաղմոսացն Դաւթի մարգարէին»-ը՝ «Պարզաբանութիւն», իսկ «Գանձ չափոյ, կշռոյ, թւոյ և դրամից բոլոր աշխարհի» գրքինը՝ «Գանձ» ձևով: Դյուրին ընթերցանություն ապահովելու համար բնագրային օրինակների հարևանությամբ նշվող էջերի կողքին կտրվեն գրքերի անվանումները հետևյալ պայմանական տարբերակներով՝ «Արհեստ համարողութեան ամբողջ և կատարեալ»՝ ԱՀ, «Պարզաբանութիւն հոգեւնուագ սաղմոսացն Դաւթի մարգարէին»՝ Պ, «Գանձ չափոյ, կշռոյ, թւոյ և դրամից բոլոր աշխարհի»՝ Գ:

<sup>2</sup> Ռ. Իշխանյան, *Նոր գրական հայերենը XVII-XVIII դարերում*, Ե., 1979, էջ 50:



«Պարզաբանութեան» մեջ գործածվում է մէկ-ը, օրինակ՝ ....թէն *մէկ* ժամանակ մի զիս պատերէին.... (Պ 22), ....*մէկ* բանի մի համար երդում կանէ.... (Պ 59), ....ինչպէս *մէկ* զօրական մի կուրախանայ.... (Պ 650) են: Մէկ-ի գերակշռության կողքին մի բանի անգամ հանդիպում է նաև նույն նշանակությամբ գործածված մին բառաձևը՝ ....մին առիծի ձագի նման.... (Պ 77), ....որոց մինն է գիտութիւն վախճանի աշխարհիս.... (Պ 40) են: Ինչպէս «Արիեստ համարողութեան» երկի լեզվում, այստեղ ևս անորոշության նշանակությամբ գործածված է մի-ձևը, որի մը արևմտահայ տարբերակը բացակայում է: «Գանձ»-ում ևս գերակշռում է մին բառաձևի գործածությունը, օրինակ՝ 3 լումայ *մին* դանկ էր (Գ 7), *Մին* քանքար կամ տաղանդ Յունաց քաշէր 60 մնաս.... (Գ 8) են: Մէկ բառաձևը հիմնականում գործածվում է «Գանձ»-ի 12-16-րդ էջերում, օրինակ՝ ....*մէկ* ըսկրիպուլն՝ 2 դանկ, *մէկ* դանկն՝ 3 դիրաթ, *մէկ* դիրաթն՝ 4 գրան (Գ 13) են: Այստեղ մէկ բառաձևը գործածվել է շուրջ 30 անգամ, այդ կիրառությունները փոքրամասնություն են կազմում մին բառաձևի գործածության համեմատությամբ:

բ) «Արիեստ համարողութեան» գրքի լեզվին հատուկ են դերանունների էս, էն ձևերը և նրանցից կազմված այլ դերանուններ, օրինակ՝ ....իմէջն կետ ունենան. *էս* կերպովս....*էն* ժուկն առաջին գիրն է.... (ԱՀ 2) են: Այս, այն դերանունների էս, էն ձևերը բնորոշ են արևելահայ խոսքին: Այս դերանուններից բաղադրվել են նաև մի շարք այլ դերանուններ, օրինակ՝ էստոր (ԱՀ 3), էսպէս (ԱՀ 7, 8 են), էստում (ԱՀ 71), (ԱՀ 144), էնտոնց (ԱՀ 2), էնկից (ԱՀ 6, 7 են), էնպէս (ԱՀ 18), էնչափ (ԱՀ 54, 72) են: Բաղադրված ձևերից ամենահաճախակի գործածություն ունի և գերակշռում է էնտոր-ը: «Արիեստ համարողութեան» երկի լեզվում առավել մեծ կիրառություն ունեն և գերակշռում են էս-ը, էն-ը (այս երկուսից գերակշռում է էս-ը) և նրանցով կազմված ձևերը: Առկա են նաև գ նախդրով գործածություններ, օրինակ՝ *գէս* (ԱՀ 22, 77 են), *գէն* (ԱՀ 69) են: «Պարզաբանութեան» լեզվում գործածվում են ցուցական դերանունների այս, այդ, այն գրաբարյան և նրանցից կազմված

ձևերը, օրինակ՝ այս աշխարհիս վերայ (Պ 19), զայս բանս (Պ 19), զայն մարդ (Պ 27), այսպէս (Պ 14, 15 նն), այնպէս (Պ 25, 27 նն), այնչափ (Պ 17, 19 նն), այնոր (Պ 18 նն), այնորիկ (Պ 9 նն) նն: Այստեղ չեն գործածվում դերանունների էս, էդ, էն, նաև աս, ադ, ան և նրանցից կազմված ձևերը, թէն մի քանի օրինակներում կարելի է նկատել արևմտյան ասոր, անոր ձևերի ազդեցությունը՝ այսոր (Պ 62-63), այնոր (Պ 45, 46) (ասոր-ը և անոր-ը գրաբարյան տեսք են ստացել): Թե՛ «Արիեստ համարողութեան» երկի լեզվում, թե՛ «Գանձ»-ի լեզվում գործածվում են դերանունների էս, էն ձևերը, օրինակ՝ Զե՛րա էս 3 թվոցս մինն մենակ հարցմունք ունի (Գ 69), Ֆալցուն քանի՞ զագ մին շոր կու դառնայ էն չուխիցն (Գ 72) նն: Գործածվել են նաև այս ձևերից բաղադրված էստից (Գ 60, 62 նն), էստունց (Գ 32, 37), էստեղէս (Գ 60, 62), էնդից (Գ 57, 62) դերանունները, առկա է նաև՝ աստի (Գ 57, 58) // էստի (Գ 60) գուգահեռ գործածությունը: «Արիեստ համարողութեան» և «Գանձ»-ի լեզվում կիրառվում են նաև այս, այն և դրանցից կազմված այլ դերանուններ, սակայն դրանց գործածությունն այնքան գերակշռություն չի կազմում, ինչպէս «Պարգաբանութեան» լեզվում, որտեղ այս, այդ, այն և նրանցից բաղադրված դերանուններն իրենց գերազանցությամբ խոսքը մոտեցնում են գրականին: Աս, ադ, ան-ը և նրանցով կազմված ձևերը բնորոշ են արևմտահայերենին: Նման ձևեր մեր քննած երկերի լեզվում չեն հանդիպում՝ բացառությամբ մի քանի գործածությունների, օրինակ՝ այսոր (Պ 62-63), այնոր (Պ 45, 46) ձևերը, որոնց վերն անդրադարձել ենք, նաև «Գանձ»-ում հանդիպում է աս բառակից բաղադրված աստի դերանունը (Գ 57, 58):

գ) «Արիեստ համարողութեան» երկի լեզվում գործածվում է բարբառային, խոսակցական էլ բառակը, որը հատուկ է արևելահայերենին: Այն երկում հաճախ է կիրառվում, օրինակ՝ ....է կու դնեմք խաչի ձախ կողմը.... (ԱՀ 11), ....թե բարդելու թվերն երկու շարեն թե էլ ավելի.... (ԱՀ 15) նն: Հազվադեպ հանդիպում է այս բառակի գրաբարյան այլ համանիշը, օրինակ՝ թիւ մի ալլ (ԱՀ 58, 59): Երկում արևմտահայերենին բնորոշ ալ չի գործած-



վում, իսկ էլ-ը բացարձակ մեծամասնություն է կազմում: Հանդիպում են նաև այլ-ից և էլ-ից բաղադրված այլվի, էլվի ձևերը, ընդ որում այլվի-ն՝ մեկ անգամ՝ ....կու գտնումք *այլվի* զայն վերի բովանդակ թիվն.... (ԱՀ 100), իսկ էլվի-ն՝ մի քանի, օրինակ՝ ....*էլվի* առաջին շահն որ է.... (ԱՀ 120) ևն: «Պարզաբանութեան» լեզվում գործածվում է միայն գրաբարյան այլ բառաձևը, օրինակ՝ ....այնպես իմաստուն մարդ մի այլ կուգտվի մի որ զա՛ծ ճանաչե.... (Պ 56), ....քան զամեն աստղեր այլ առաւել կու ծանուցանե.... (Պ 97) ևն: Այլ-ի էլ և ալ համանիշ բառաձևերը երկի լեզվում գործածական չեն: «Գանձ»-ում ևս հանդիպում է արևելահայ բարբառներին բնորոշ էլ բառաձևը, ինչպես «Արիեստ համարողութեան» երկի լեզվում և ի տարբերություն «Պարզաբանութեան» երկի լեզվի, օրինակ՝ .... որ ոսկի է', անունն *էլ*, ինքն *էլ* կայ (Գ 33), ....դօկուդով *էլ*, գազով *էլ* կու խօսին (Գ 39), Էստից աւելի էլ դուռն չկայ .... (Գ 64):

դ) Լինել և ըլլալ (լինիլ բայ) բայաձևերը արևելահայերենի և արևմտահայերենի տարբերակիչ հատկանիշներից են: Մեր քննած երկերի լեզվում գործածական է լինել բայը, ըլլալ ձևն ընդհանրապես չի հանդիպում, օրինակ՝ Այսպես էլ թէ որ միայն մին գիր *լինի*, կասվի միաւոր.... (ԱՀ 4, 5 ևն), ....լինի թէ մեկ հնարք.... (Պ 16), ....իսկ մարդոյս կենաց տարիքն ինչ պիտի լինի որ .... (Պ 488) ևն: «Գանձ»-ում հանդիպում են լինել // լինիլ ձևերը, օրինակ՝ .... որ *լինի* 200 դրհամ (Գ 19, լինի խոնարհված ձևը հաճախակի է հանդիպում 20, 30, 37 ևն), ....որ հակի տակի կայած *ըլլինի*.... (Գ 31) ևն:

2.1 Հոլովման համակարգ: ա) «Արիեստ համարողութեան» և «Գանձ» երկերի լեզվում որոշ բառերի ուղղականում բառի վերջավորությունը փոփոխվել է ն հոդի ազդեցությամբ (արևելյան որոշ բարբառների բնորոշ է այս իրողությունը), օրինակ՝ մայա-մայա+ն=մայեն (ԱՀ 116, 117 ևն (դրամագլուխ, որը դնում են գործի մեջ)), լիպրայ (ԱՀ 143, 145) // լիբայայ (ԱՀ 144)-լիպրեն (ԱՀ 140, 143), օխայ (ԱՀ 140) // օխայի (ԱՀ 140)- օխեն (ԱՀ 140): Նման կիրառությունները «Պարզաբանութեան» լեզվին բնորոշ չեն, սա-

կայն «Գանձ»-ի լեզվում ավելի հաճախակի են գործածվում, քան «Արիեստ համարողութեան» երկի լեզվում՝ ունցա (Գ 7, 8 նն)- ունցէն (Գ 9, 10 նն), լիբբայ (Գ 14, 75)-լիբբէն (Գ 9, 10 նն), վաղիա (Գ 20)-վաղիէն (Գ 20, 21), տուկրայ (Գ 28)-տուկրէն (Գ 28) նն:

բ) «Արիեստ համարողութեան» երկում սեռական-տրական հոլովի գրաբարյան ձևերը շատ քիչ թիվ են կազմում: Բոլոր այն գոյականները, որոնց հոգնակին կազմված է -եր կամ -ներ հոգնակերտներով, սեռական-տրական հոլովում հոգնակին կազմել են միայն ի թեքմամբ, օրինակ՝ այլ գրերին հետ (ԱՀ 2), տասնա- տրներին (ԱՀ 6), հազարատրներին դէմ (ԱՀ 7), թվերին (ԱՀ 8, 10 նն) նն: Ըստ Ռ. Իշխանյանի՝ գրքում բոլորովին չկան սեռական- տրականի՝ արևմտյան բարբառներին և ժողովրդախոսակցակա- նին բնորոշ ձևեր<sup>1</sup>: Սակայն երկի լեզվի ուսումնասիրության ըն- թացքում հանդիպել ենք առանց *գրերուն* (ԱՀ 71) օրինակին, որը հատուկ է արևմտյան բարբառներին, գործածված է նաև *գրերին տակն* (ԱՀ 71) տարբերակը: Վերջինը արևելյան բարբառներին հատուկ կազմությունն է: «Պարզաբանութեան» լեզվում գերա- կշռում են զուտ գրաբարյան թեք հոլովաձևերը: Սեռական-տրա- կան հոլովի կազմությունը հիմնականում գրաբարյան է, օրինակ՝ արդարոց (Պ 15), հոգւոյ (Պ 15), եկեղեցւոյն (Պ 26), մտածմանց (Պ 24) նն, սակայն գործածվում են նաև ի թեքությով աշխարհա- բարյան ձևեր, որոնք հատուկ են արևելահայերենին, օրինակ՝ որ- սերի (Պ 47), մատաղներին համար (Պ 61), զոհերին համար (Պ 61) նն: Հատուկ անունները դարձյալ գրաբար են հոլովված, ինչպես՝ յովսէփայ (Պ 3), դուկասու (Պ 13), յոհաննու (Պ 13), ադամայ (Պ 23) նն: «Գանձ»-ում սեռական-տրական հոլովի կազմությունը գրա- բարյան և ոչ գրաբարյան իրողությունների ամբողջությունն է, իսկ -եր կամ -ներ հոգնակերտներով գոյականների սեռական-տրա- կան հոլովը կազմվել է միայն ի թեքմամբ, ինչպես «Արիեստ հա- մարողութեան» և «Պարզաբանութեան» երկերի լեզվում, օրինակ՝ երկրների (Գ 33), ադաների (Գ 34), դուշերի (Գ 51): Վերոհիշյալ

<sup>1</sup> Ռ. Իշխանյան նշվ. աշխ., էջ 55:



երկերի լեզվում սեռական-տրական հոլովի՝ արևմտահայերենին բնորոշ ու թեքությով կազմություններ չկան՝ բացառությամբ վերը նշված առանց գրերուն (ԱՀ 71) գործածության:

դ) «Արհեստ համարողութեան» երկում բացառական հոլովը կազմվում է է ձևությով, որը հատուկ է գրաբարին, միջին հայերենին և արևմտյան բարբառներին: Է-ով բացառականը միջին հայերենից փոխանցվել է հատկապես արևմտյան բարբառներին և համարվում է դրանց բնորոշ առանձնահատկություն: «Պարզաբանութեան» լեզվում ևս բացառականը կազմվում է հիմնականում է թեքությով, ինչպես՝ բերանեն (Պ 16, 29, սա ունի նաև ի բերանոյ (Պ 9) զուգահեռ գործածությունը), ճղքեն (Պ 20), փորձանքէ (Պ 21), լեռնէն (Պ 21) ևն: «Գանձ»-ի լեզվում ևս բացառական հոլովը հիմնականում կազմվում է է ձևությով՝ բացառությամբ մի քանի օրինակների՝ ի խնդրոյ (Գ 3), ի Քրիստոսէ (Գ 4) ևն, որոշ տեղանունների բացառականը կազմվել է ու ձևությով՝ յ'Բնգլթէռու (Գ 43), ի Ֆրանցու (Գ 43) ևն: Յ (ից, ուց) ձևությով կազմված բացառականը բնորոշ է արևելյան բարբառներին՝ Էսկից (ԱՀ 15, 30, 88), ....և *էսկից* մնացածն հաւասար կու լինի միւս շարին (ԱՀ 15), Էսկից ....որ կարենամք գներքի թիւն *էսկից* հանել (ԱՀ 19), ի ձեռաց (Պ 17), ինձանից (Պ 17), ապրիշումից (Գ 47) ևն:

ե) «Արհեստ համարողութեան» երկում գործիական հոլովի դեպքում զուտ գրաբարյան կազմությունը ոչ հաճախ է հանդիպում, նման կիրառությունները կարելի է բացառություններ համարել, օրինակ՝ սովաւ, պարզագունիւք օրինակօք, աշխարհականաւ ոճիւ (օրինակները բերված են գրքի առաջաբանից «Առաջաբանութիւն գրգոյս») ևն: Առանց հոդի գործածությունները գերակշռում են: «Պարզաբանութեան» լեզվում գործիական հոլովի կազմությունը գրաբարյանի և ոչ գրաբարյանի ամբողջություն է, սակայն, ի տարբերություն «Արհեստ համարողութեան» և «Գանձ»-ի, երկի լեզվի հոլովման համակարգում զուտ գրաբարյան թեք հոլովածները, ինչպես վերը նշվեց, գերակշռում են, օրինակ՝ ձայնիւ (Պ 151), ահիւ և երկիւղիւ (Պ 19), լեզուաւ (Պ 838) ևն: Ինչպես «Արհեստ համարողութեան» երկի լեզվում, «Պարզաբա-

նութեան» լեզվում ևս կարելի է առանձնացնել հոդով և առանց հոդի կիրառությունների խմբեր: «Գանձ»-ում գործիական հոլովի գուտ գրաբարյան կազմություններն անչափ քիչ են, ինչպես «Արհեստ համարողութեան» երկի լեզվում, օրինակ՝ արօտիւ (Գ 56), լեզուաւ (Գ 56), ծախիւք (Գ 80) ևն, խիստ մեծամասնություն են կազմում ով ձևությո՜վ կազմությունները, օրինակ՝ ղիանով (Գ 25), խարջովն (Գ 30), խորհրդով (Գ 51) ևն:

զ) «Արհեստ համարողութեան» երկի հոլովման համակարգում կարևոր են ում-ով ներգոյականի ձևերը, որոնք հատուկ են արևելահայերենին: Առանձնացրել ենք երկու խումբ՝ գրաբարյան և նոր ձևեր: Գրաբարյան ձևերը նվազ գործածություն ունեն: Նոր ձևերի խմբում գատել ենք ում-ով կազմություններ, օրինակ՝ թումս (ԱՀ 2, 72 ևն), օրինակումս (ԱՀ 8, 19 ևն), տակումն (ԱՀ 18, 19) ևն, մեջ-ով կազմություններ՝ իմէջն (ԱՀ 2), թվի մէջն (ԱՀ 54, 55 ևն), երեքի մէջն (ԱՀ 61) ևն: «Պարզաբանութեան» լեզվում ևս գերակշռում են ներգոյականի ում-ով և մեջ-ով ձևերը, օրինակ՝ ում-ով կազմություններ՝ աստուածաշնչումն (Պ 16), աշխարհումս (Պ 20), սաղմոսումս (Պ 26, 29) ևն, մեջ-ով կազմություններ՝ մեղաց մէջ (Պ 24), սրտի մէջն (Պ 24), տանջանքի մէջն (Պ 30) ևն: «Պարզաբանութեան» լեզվում, ինչպես «Արհեստ համարողութեան» երկի լեզվում, առկա են հոդով և առանց հոդի գործածություններ: «Գանձ»-ի հոլովման համակարգում «Պարզաբանութեան» երկի լեզվի նմանությամբ և, ի տարբերություն «Արհեստ համարողութեան» երկի լեզվի, գրաբարյան ձևերը փոքրաթիվ չեն: Կարելի է ասել՝ ներգոյականի հին ու նոր ձևերը համամասնություն են կազմում: Նոր ձևերի շարքում կրկին առանձնացվում են ում-ով և մեջ-ով կազմություններ, վերջինները շատ նվազ կիրառություն ունեն՝ իւրեանց մէջ (Գ 76), ամէնուց մէջ (Գ 76), ընկերաց մէջ (Գ 76), ընկերութեան մէջն (Գ 79):

2.2. Խոնարհման համակարգ: ա) Մեր քննած երկերի լեզվի խոնարհման համակարգերում ներկան և անցյալ անկատարը կազմվում են կու (կը, կ) եղանակիչի միջոցով, սակայն կան որոշ բացառություններ, օրինակ՝ «Արհեստ համարողութեան» առա-



ջաբանում («Առաջաբանութիւն գրգոյս»), վերջաբանում («Վախճան») հանդիպում են ներկայի գրաբարյան ձևեր: Անկատար դեր-բայով կազմվող ներկայի որևէ նմուշ չի հանդիպում: «Պարգաբանութիւն» երկի լեզվում դարձյալ ներկան կազմվում է կու (կ) եղանակիչով, արևելյան բարբառներին հատուկ հարադրական ներկայի ձևերը բնորոշ չեն երկի լեզվին, հանդիպում են հատուկենտ կիրառություններ՝ է գտվում (Պ 55), չէ կարում (Պ 55), չէ գտվում (Պ 56): «Գանձ»-ի առաջաբանում և վերջաբանում՝ «Յիշատակարան»-ում, գործածվում են ներկայի գրաբարյան ձևեր՝ ի տարբերություն երկի մնացյալ մասի, որում ներկայի ձևերը կազմվում են կու (կը, կ) եղանակիչով: Անցյալ անկատար ժամանակաձևերը շատ նվազ գործածություն ունեն, հանդիպած չորս օրինակները գրաբարյան կազմություններ են, օրինակ՝ կշոէր (Գ 7, 8), կամէի (Գ 50) ևն:

բ) «Արիեստ համարողութեան» երկի խոնարհման համակարգին հատուկ է դիմավոր բայերի հոգնակի առաջին դեմքի գրաբարյան -մք և բարբառային-ժողովրդախոսակցական -նք վերջույթի զուգահեռ գործածությունը: Այս վերջույթները զուգահեռ կերպով գործածվում են ներկա և ըղձական ապառնի ժամանակներում: Երբեմն անգամ որոշ կապակցությունների մի բաղադրիչը -նք վերջույթով է, մյուսը -մք, օրինակ՝ ուզենք դուրս ձգենք (9, 16), ուզենք իմանալք (34): -Սք և -նք վերջույթների զուգահեռ գործածության մեջ «Արիեստ համարողութեան» երկի լեզվում մեծամասնություն է կազմում գրաբարյան -մք-ն՝ ի տարբերություն «Պարգաբանութեան» և «Գանձ» երկերի, որոնց լեզվում գերակշռում է -նք վերջույթը, օրինակ՝ կու սիրենք (Պ 25), կու պաշտենք (Պ 25), կուտեսանենք (Պ 53), տեսնինք (Գ 64) ևն, -մք վերջույթով ձևերը հազվադեպ են հանդիպում, օրինակ՝ ունիմք (Պ 161), կազատեմք (Պ 327) ևն, «Գանձ»-ի լեզվում -մք վերջույթով հանդիպում է միայն պարտիմք (Գ 68) խոնարհված ձևը:

գ) Վերոհիշյալ երկերի լեզվում բայերի եզակի երրորդ դեմքում զուգահեռ գործածվում են -է և -ի դիմանիշները, օրինակ՝ -է՛ կուսուցանէ (ԱՀ 1), կունշանակէ (ԱՀ 1, 2), կու ճանաչէ (Պ 15),

պիտի դատէ (Պ 45), գրէ (Գ 69), կու պահէ (Գ 68) են, -ի՝ կու դրվի (ԱՀ 2, 3), գտվի (ԱՀ 12), կու ծիծաղի (Պ 17), կուպատշաճի (Պ 758), ասի (Գ 20), կու նստի (Գ 52) են: «Արիեստ համարողութեան» և «Պարզաբանութեան» երկերի լեզվում գերակշռում են -է դիմանիշով կազմված ձևերը՝ ի տարբերություն «Գանձ»-ի խոնարհման համակարգի, որտեղ գերակշռում են -ի դիմանիշով կազմված ձևերը (-է դիմանիշ՝ շուրջ 18 գործածություն, -ի դիմանիշ՝ շուրջ 32): Վերոհիշյալ դիմանիշների բաշխվածության պարզումը թողնելով հետագա քննության՝ այստեղ միայն նշենք, որ գրեթե միշտ պահպանվում են գրաբարյան լծորդները: -է դիմանիշով կազմված ձևերը բնորոշ են արևմտահայերենին (նաև համապատասխանում են միջին հայերենին և մասամբ գրաբարին):

դ) «Արիեստ համարողութեան» և «Պարզաբանութեան» երկերի խոնարհման համակարգերում եմ օժանդակ բայի ներկա ժամանակի եզակի թվի երրորդ դեմքն ունի միայն է ձևը, օրինակ՝ ինչ է (ԱՀ 1), արիեստ մի է (ԱՀ 1), գիրն է (ԱՀ 2), գիտելի է (Պ 8), վերայ է (Պ 22) են: Ի տարբերություն այս երկու երկերի լեզվի՝ «Գանձ»-ի խոնարհման համակարգում է ձևին զուգահեռ գործածվում է նաև այ ձևը, օրինակ՝ փիքուլ այ (Գ 34), ուշուրն այ (Գ 35), կօպէք այ (Գ 36) են:

ե) «Արիեստ համարողութեան» և «Պարզաբանութեան» երկերի լեզվում վաղակատար ժամանակը կազմվում է -եր վերջավորությամբ կախյալ դերբայով: Հանդիպած օրինակներում օժանդակ բայը գրվում է ինչպես դերբայից անջատ, օրինակ՝ եղեր է (ԱՀ 8), գրեր են (ԱՀ 8), ծներ է (Պ 16), սրեր է (Պ 35) են, այնպես էլ դերբայի հետ, օրինակ՝ պահերէինք ի մտի (ԱՀ 6), պաշարերէին (Պ 22) են: «Արիեստ համարողութեան» երկի լեզվում մի քանի անգամ հանդիպում է էինք պարշել (ԱՀ 128, 130 են) անցյալ վաղակատարը, որը, ի տարբերություն վերոհիշյալ ձևերի, կազմված է -ել վերջավորությամբ դերբայով: «Պարզաբանութեան» երկի լեզվում ևս հանդիպում են

-ել-ով վաղակատարի որոշ գործածություններ, օրինակ՝ է ասացեալ (Պ 22), է շարադրեալ (Պ 58) են: Ի տարբերություն «Ար-



հետս համարողութեան» և «Պարգաբանութեան» երկերի լեզվի՝ «Գանձ»-ում վաղակատար և անցյալ վաղակատար ժամանակների գործածություններ չեն հանդիպում:

գ) «Արհեստ համարողութեան» և «Պարգաբանութեան» երկերի լեզվին բնորոշ են պիտի դիմավոր բայով և անորոշ դերբայով կամ խոնարհված բայով ձևավորված կապակցությունները: Պիտի-ն գործածված է որպես դիմավոր բայ, այն հանդիպում է ինչպես պիտի ձևով, օրինակ՝ պիտի....դնեմք (ԱՀ 69), պիտի բարդեմք (ԱՀ 76, 78, 79), պիտի տանի (Պ 16), պիտի դատե (Պ 42) ևն, այնպես էլ առաջին դեմքի հոգնակի թվով, որն էլ հանդիպում է -նք և -մք վերջույթներով պիտինք // պիտիմք, օրինակ՝ պիտինք յետ դատնալ, փորձել (ԱՀ 9), փորձել պիտինք (ԱՀ 26), պիտինք քնիլ (Պ 25), պիտինք ... հանգչիլ (Պ 26) ևն: Ի տարբերություն այս երկերի լեզվի՝ «Գանձ»-ում պիտինք-ը չի հանդիպում, գործածվում են միայն *պիտի+անորոշ դերբայ* կամ *խոնարհված բայ* կապակցությունները, օրինակ՝ պիտի ....բանացնել (Գ 72), պիտի ....ջամ անել (Գ 76), պիտի բազմացնենք (Գ 69), պիտի գրես (Գ 69) ևն:

ե) «Արհեստ համարողութեան» երկի լեզվին բնորոշ են պիտի բայի և հարակատար դերբայի կապակցությունները, օրինակ՝ պիտի տեղաւորած (ԱՀ 5, 18), պիտի քաշած....դուրս հանած....խազի տակն դրած.... (ԱՀ 18) ևն: Ի տարբերություն «Արհեստ համարողութեան» երկի լեզվի՝ «Պարգաբանութեան» երկի լեզվում այս կապակցությունները շատ նվազ կիրառություն ունեն չի պիտի տարակուսած (Պ 53), իսկ «Գանձ»-ի լեզվում ընդհանրապես չեն կիրառվում: Ռ. Իշխանյանը նման գործածությունները համարում է Ն. Ջուղա-Երևան-Արցախ շարքի բարբառների որոշ խոսվածքների ազդեցության արդյունք<sup>1</sup>:

ը) «Արհեստ համարողութեան» երկի լեզվին բնորոշ է նաև ուզել բայի դիմավոր ձևի և լրացում դիմավոր բայի կապակցությունը, օրինակ՝ ուզենք դուրս ձգեմք (ԱՀ 9), կուզենք իմանամք

<sup>1</sup> Ռ. Իշխանյան, նշվ. աշխ., էջ 62:

(ԱՀ 35) են: Շատ քիչ օրինակներում ուզել բայի դիմավոր ձևը կապակցվում է անորոշ դերբայի հետ, օրինակ ուզենք փորձել (ԱՀ 15), բաժանել կուզենք (ԱՀ 53) են: Ի տարբերություն «Արհեստ համարողութեան» երկի լեզվի՝ «Պարզաբանութիւն» երկի լեզվում վերջին կապակցություններն ավելի հաճախ են կիրառվում, ինչպես կուզեր անել (Պ 36), կուզես ձեռն ձգել (Պ 48) են: Այս գործածությունները «Գանձ»-ին հատուկ չեն, թեև նման օրինակ հանդիպում է՝ կուզե իմանալ (Գ 75): Հարկ է նշել, որ *դիմավոր բայ + դիմավոր բայ* կապակցությունը հիմնականում բնորոշ է արևելյան բարբառներին, օրինակ՝ Երևան, Նոր Ջուղա են (թեև վերոհիշյալ օրինակների մի մասը կ եղանակիչ է ներառում, որը բնորոշ է արևելյան բարբառներին): Ըստ Ռ. Իշխանյանի՝ արևմտյան բարբառներում այս հատկանիշը կայունացած չէ<sup>1</sup>:

թ) «Արհեստ համարողութեան» և «Պարզաբանութեան» երկերի լեզվում ժխտական ձևերը հիմնականում կազմվում են չ ժխտական մասնիկով և -ք վերջավորությամբ դերբայով: Կազմության այս ձևը հատուկ է արևմտյան բարբառներին: Չ ժխտականը միանում է ե օժանդակ բային և հանդիպում ոչ թե գրաբարյան չե ձևով, այլ բարբառային չի ձևով, օրինակ չի մնար (ԱՀ 11, 13 են), չի լինի (ԱՀ 54), չի շրջիր (Պ 12), չե՛ր մտածե՛ր (13) են: Ի տարբերություն վերոհիշյալ երկերի լեզվի՝ «Գանձ»-ում -ք վերջավորությամբ դերբայով ժխտականի կազմություն չի հանդիպում:

Եզրակացություն: Ամփոփելով վերոհիշյալ գրքերի լեզվական քննությունը՝ կարող ենք նշել, որ դրանց բնորոշ լեզվական իրողություններից, որոնց վերն անդրադարձել ենք, արևելյան բարբառներին և արևելահայ գրական լեզվին բնորոշ են վերը քննված բառաձևերը (*մեկ, էս, էն, էլ, լինե՛ր*), սեռական-տրական հոլովի հոգնակի ձևերի, ներգոյական հոլովի կազմությունները, *պիտի+անորոշ դերբայ* կամ *խոնարհված բայ, պիտի+հարակատար դերբայ* կապակցությունների գործածությունը, բայերի եզակի թվի երրորդ դեմքի -ի դիմանիշի գործածությունը, եմ

<sup>1</sup> Ռ. Իշխանյան, նույն տեղում:



օժանդակ բայի ներկա եզակի թվի երրորդ դեմքի այ ձևի կիրառությունը «Գանձ»-ի լեզվում, *ուզել բայի դիմավոր ձև+դիմավոր բայ* կամ *ուզել բայի դիմավոր ձև+անորոշ դերբայ* կապակցությունը ևս առավել կայունացած է արևելյան բարբառներում: Արևմտյան բարբառներին և արևմտահայ գրական լեզվին բնորոշ են բացառական հոլովի կազմությունը, ներկա և անցյալ անկատար ժամանակների դրական խոնարհման ձևերը, բայերի եզակի թվի երրորդ դեմքի -է դիմանիշի գործածությունը, եմ օժանդակ բայի ներկա եզակի թվի երրորդ դեմքի է ձևի կիրառությունը, վաղակատար ժամանակների -ր-ով կազմությունը, ժխտական ձևերի չ ժխտական մասնիկով և -ր վերջավորությամբ դերբայով կազմությունը: Թեև մեր քննած երկերում մեծ թիվ են կազմում բարբառային լեզվական երևույթները, սակայն իշխում է նոր գրական լեզվի քերականական հիմքը: Տվյալ լեզվական քննությունը հիմնավորում է այն իրողությունը, որ վաղ աշխարհաբարին բնորոշ չէ արևելահայ-արևմտահայ ճյուղային բաժանումը ներկայիս պատկերացմամբ: Այն բնութագրվում է միասնական լեզվավիճակով, որին բնորոշ են և՛ արևմտյան, և՛ արևելյան բարբառներին հատուկ լեզվական իրողություններ:

Poghosyan Tamara- Linguistic situation of Early Modern Armenian according to first Modern Armenian printed books.- The article is devoted to the examination of linguistic situation of Early Modern Armenian according to lingual features of first Modern Armenian printed books. The research shows that the grammatical basis of Modern Literary Language is reflected in the examined books. By the research of the features which are more special and characteristic to the language of first Modern Armenian printed books, we may conclude that the separation of Eastern Armenian and Western Armenian is not characteristic to Early Modern Armenian language. It is characterized by united language system where lingual features of eastern and western dialects are not used separately, but are combined.

1988 Погосян Тамара- Языковое состояние раннего периода новоармянского языка по материалам первых напечатанных на нем книг.- Данная статья посвящена исследованию языкового состояния раннего периода новоармянского языка (ранний ашхарабар), которое основывается на изучении языковых материалов первых напечатанных на этом языке книг. Лингвистическое исследование показало, что в изучаемых книгах наличествует грамматическая основа нового литературного армянского языка. Мы пришли к заключению, что раннему периоду новоармянского языка не характерно разделение армянского языка на две ветви – восточную и западную. Ранний период новоармянского языка описывается единым языковым состоянием, ему характерны языковые особенности, свойственные как восточным, так и западным диалектам.



**ԵՍԱՅԻ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆՑԻ ՆԱՄԱԿՆԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ  
ԷՄԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Եսայի Հասան-Ջալալյանցի նամակները գրվել են 1702-1726թթ.: Դրանցում պահպանված են պատմական կարևոր տեղեկություններ Գանձասարում և հարակից տարածքներում տեղի ունեցած իրադարձությունների, կաթողիկոսի ու Ղարաբաղի մելիքների նախաձեռնումների մասին: Նամակներն ուղղված են ռուսական արքունիքին, մասնավորապես Պետրոս Առաջինին, վրաց Վախթանգ Վեցերորդ թագավորին, հոգևոր հայրերին ու ազատագրական շարժման մասնակիցներին:

Կաթողիկոսի ավելի քան քսան նամակներ տպագրված են 2007 թ. հրատարակության մեջ<sup>1</sup>:

Եսայի Հասան-Ջալալյանցի նամակների լեզուն հարուստ է ժողովրդական խոսքին հարազատ բառաքերականական իրողություններով, ազատ, անկաշկանդ, անմիջական շարադրանքով: Դրանցում զգալի է միջին հայերենի, բարբառների և նոր կազմավորվող աշխարհաբարի քերականական հատկանիշների առկայությունը: Առանձին հետաքրքրություն են ներկայացնում փոխառյալ և ժամանակի խոսակցական լեզվում լայնորեն գործածվող բարբառային բառերը:

Նամակների լեզվական նկարագիրն ուշագրավ է նրանով, որ հնչյունական, բառական, քերականական մակարդակներում գրաբարյան օրինաչափ երևույթներին զուգահեռ ի հայտ են գալիս նաև 18-րդ դարասկզբին բնորոշ լեզվական իրողություններ:

<sup>1</sup> Տ.Եսայի Հասան-Ջալալյանց, Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, Ստեփանակերտ, 2007: Այս հրատարակությունը կազմողները Եսայի կաթողիկոսի նամակները վերցրել են Կ. Եզյանի, Ա.Աբրահամյանի և Ա.Հովհաննիսյանի Փաստաթղթերի ժողովածուներից: Այսուհետև փակագծերում կնշենք սույն հրատարակության էջերը:

*Հնչյունական համակարգում* կատարված փոփոխությունները վերաբերում են ինչպես գրաբարին բնորոշ հնչյունափոխական երևույթներին, այնպես էլ մեր լեզվի զարգացման հետագա ընթացքում կատարված փոփոխություններին:

Սույն հոդվածում առանձնացրել ենք այն հիմնական փոփոխությունները, որոնք առավել բնորոշ են լեզվի զարգացման վաղաշխարհաբարյան փուլին:

*Չայնավորների փոփոխությունները* հետևանք են խոսակցական լեզվի և բարբառի ազդեցության: Այսպես՝ խոսակցական լեզվի ազդեցություն կարելի է համարել *ու/ո/ա* տարբերակների առկայությունը (*ուղարկել/ողարկել/աղարկել*): Օրինակ՝ «Չգիտեմք. դուք *չէք ողարկում*, թե էնտեղաց չէ գալիս, ձեզանէ կուխնդրեմք, այս թուղթս տեղ հասուցանէք շուտով, և մեզ մէկ սարեի ջուղապ փութով *ողարկէք*» (180): «...էսչանք մարթ *աղարկեցի...*» (192):

Բարբառային ընդգծված երանգավորում ունեն *զանջցի* (<*զանջեցի*. է-ն սղվել է), *զանջցոց* (< *զանջեցի+ոց*. է և ի ձայնավորները սղվել են) բառաձևերը: Օրինակ՝ «Ես *զանջցի* Աւետիքի որդի Ատիպէկս յոժար եմ այսմ խորհրդիս աստուծով» (161): «Դարձեալ Փիլիպն *զանջցոց* և մեր թղթովն գնաց շահին մօտն» (183):

2. Մուրադյանն արևելյան բարբառներին բնորոշ երևույթ է համարում *այ>է* հնչյունափոխությունը<sup>1</sup>, *այն>էն*, *այնտեղ>էնտեղ*, *այստեղ>էստեղ*, *այսչափ>էսչափ* և այլն, որը հաճախ հանդիպում է նաև նամակներում: Օրինակ՝ «Ես *էն* տեղէն դուրս եկի գնացի ներքի գեղրանքն» (171): «Այս մէկ տարի կէս է Իւան Կարապետն *էստեղ* մեր մէջս թագաւորի հրամանաւ, *էսչափ* թուղթ գրեցինք» (180):

Տարբերույթ են *բաղաձայնական* համակարգում կատարված փոփոխությունները: Այդ հնչյունական տարբերակների մի մասն առաջացել է ժամանակի խոսակցական լեզվի ազդեցու-

<sup>1</sup> 2. Մուրադյան, *Հայոց լեզվի պատմական քերականություն*, հ.1,Ե.,1982, էջ 91:



թյամբ և որոշ երևույթների տեղայնացմամբ (որևէ բարբառի պատկանելու հանգամանքով):

Բառի բոլոր դիրքերում ձայնեղների խլացումը բնորոշ է Ղարաբաղի բարբառին, ուստի պատահական չէ, որ Հասան-Ջալալյանցի նամակներում այն լայն տարածում ունի: Դրան զուգահեռ հանդիպում են նաև խուլերի ձայնեղացման օրինակներ: Սա հիմք է տալիս ասելու, որ քննվող գործերում բարբառային հնչյունական տարրերը ոչ ամբողջությամբ են համընկնում Ղարաբաղի բարբառին. դրանք առավելապես միջինհայերենյան շրջանից փոխանցված իրողություններ են:

Ներկայացնենք բաղաձայնական համակարգի փոփոխությունները համակարգված ձևով: Այսպես՝ ա) *ձայնեղների խլացում*՝ բ>պ՝ խաբար>խապար (164), դզլբաշ > դզլպաշ (164), բողոքեալ>պողոքեալ (165), ղ>տ՝ զինդ >զինտ (147), ազդեալ>ազտեալ (165), յուսադրական>յուսատրական (165), գ>կ՝ բարձրագահ>բարձրակահ (160), փափագել>փափակել (161), գանգատ>կանգատ (164), բ) *ձայնեղների շնչեղ խլացում*՝ ձ>ց՝ բարձ>բարց (148), գ>ք՝ հագնել>հաքնել (148), վ>փ՝ Մոսկով >Մոսկօփ (144), գ) *խուլ բաղաձայնների ձայնեղացում*՝ պ>բ՝ պրծնել>բրծնել (181), ապստամբիլ>աբստամբիլ (164), ճ>ջ՝ աճապարել>աջապարել (151), խեղճ > խեղջ (195), դ) *շնչեղ խուլերի ձայնեղացում*՝ չ>ջ խանչալ>խանջալ (147), ե) *պարզ խուլերի շնչեղացում*՝ պ>փ՝ կապիտան>կափիտան (146) և այլն:

Հնչյունափոխական վերոնշյալ երևույթներից բացի, կան այլ փոփոխություններ ևս: Այսպես՝ ա) *հնչյունի անկում*՝ *Յովհաննես* հատկանվան մեջ «Դարձեալ Ովանէսին հետ մին փոքր խօսք ունի» (171): Բառավերջի հ-ի անկում է նկատվում *ճանապարհ* բառում՝ *ճանապար.* օրինակ՝ «Եւ այլ արգ առնեմք սիապիս, որ տեղիցըս մինչի Գանջայ ժ (10) սիաթէն ճանապար է» (170): Բ) *Յ-ի հավելագրություն*՝ *բազմայպատիկ* (144), *քրիստոսայինամ* (144), գ) *Հանդիպում են բառեր առանց բառավերջի յ հնչյունի*: Օրինակ՝ «Առաքել վարդապետ *Ամարասա* առաջնորդ յօժար եմ որ և կնքեցի» (162): «*Էջմիածնա* կաթողիկոսն փարաղաթ է» (163):

*Բառապաշարային իրողություններ:* Նամակների լեզուն բնորոշվում է ոչ միայն գրական, այլև հասարակական-քաղաքական կյանքն արտացոլող բարբառային ու փոխառյալ բառերով, ժամանակի մտածելակերպին հատուկ ոճական արտահայտություններով:

Հաճախ բառերի ընտրությունը պայմանավորված է թեմայով և հեղինակի նպատակադրմամբ: Այսպես՝ Պետրոս Առաջինին ուղղված նամակներում նույն նախադասության մեջ հեղինակը մի դեպքում դիմում է հայատառ ռուսերենով՝ *վելիք իփրատոր* (իհարկե՝ որոշ տառադարձությամբ և բարբառային հնչմամբ՝ *վելիք իփրատոր /իմփրատոր/ իմբրատոր - великий император*), մյուս դեպքում՝ հայերեն համարժեքով՝ «*մեծի ինքնակալ կայսեր*» (կայսր): Օրինակ՝ «Աստուածագոր *մեծի ինքնակալ կայսեր* Պետր *վելիք իփրատոր*, ծովու և ցամաքի աստուածապար իշխեցողի» (180):

Նամակների բառային կազմում զգալի թիվ են կազմում *փոխառությունները*<sup>1</sup>, որոնք մասնակիորեն արտացոլում են 18-րդ դարակազմի լեզվավիճակը: Ի դեպ, հանդիպում են ինչպես մեր լեզվի նախորդ շրջաններում գործառող փոխառյալ բառեր, այնպես էլ ժամանակի խոսակցական լեզվում հանդիպող փոխառություններ, որոնց աղբյուրները հիմնականում թուրք-պարսկական-արաբական լեզուներն են: Այդ բառերը վերաբերում են տարբեր բնագավառների և բազմազան ոլորտների:

Ավելի վաղ աղբյուրներում հանդիպող բառերը վկայում

<sup>1</sup> Փոխառությունները քննել ենք՝ առաջնորդվելով Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ.1-4, Ե., 1971-1979 (այսուհետև՝ ՀԱԲ): Նույնի՝ *Հայոց լեզվի պատմություն*, մաս I, մաս II, Ե., 1940-1951: Ստ. Մալխասեանց, *Հայերեն բացատրական բառարան*, հ.1-4, Եր., 1944-1945 (այսուհետև՝ ՀԲԲ), Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, հհ.Ա-Բ, Եր., 1987-1992 (այսուհետև՝ ՄՀԲ), Մարգարյան Ա. Յու., *Ղարաբաղի բարբառի բառարան*, «Էդիթ Պրինտ» հրատ., Երևան, 2013 (այսուհետև՝ ՂԲԲ): Ն.Պողոսյան, *Նորահայտ բառեր վաղաշխարհաբարյան աղբյուրներում* (16-18-րդ դդ.), Ե., 2014 (այսուհետև՝ ՆՊԲ), երբեմն էլ՝ երկլեզվյան բառարաններից:



ենք փոխառությունների պատկերն ամբողջացնելու համար:

*Պարսկական փոխառություններ դարուղայ* (darüga «ոստիկան, ոստիկանապետ». ՄԲԲ, 4, 377), *խրիտ* (xeriden «շահավետ գործ՝ առևտուր». ՂԲԲ, 281), *դատիմ* (qadim «հին, նախկին». ՆՊԲ, 129), *դուլուղ* (kulluk «զինվորների պահականոց». ՀԲԲ, 3, 188) և այլն:

*Թուրքական փոխառություններ*<sup>1</sup>: Դրանք ևս ժողովրդական են, հիմնականում գործածված են խոսակցական լեզվում: Օրինակ՝ *անջախ* (ancak «հազիվ, դժվարությամբ, հազիվհազ». ՀԼԲԲ, Ա., 66. ՂԲԲ, 51), *ջապախան* (cephañe «զինանոց, պայթուցիկ նյութերի պահեստ»), *եսիր* (esir «գերի, ծառայ». ՀԲԲ, 1, 568. ՆՊԲ, 73), *ելչի* (elci «դեսպան, հարկահավաք, պատգամավոր»), *թուման* (tuman «մի նահանգի շրջակայ գավառները». ՀԱԲ, 2, 206. ի դեպ, Հր. Աճառյանը այս բառ-հոդվածի տակ վկայակոչում է Ե. Հասան-Ջալալյանի Պատմության օրինակները «...ի Տփլիսի քաղաք և ի Կախեթ՝ իւրովք բոլոր թեմիւք և թումանօք»(2), *իմատատ* (imdat «օգնութիւն». ՆՊԲ, 84), *դոնադ* (konük «հյուր, օտարական». ՀԼԲԲ, Գ., 355. ՂԲԲ, 461), *ճոթ* (jot «գործվածք, կտոր». ՂԲԲ, 480) և այլն:

*Արաբական փոխառություններ*<sup>2</sup>: *մաթահ* (արբ. meta. «ապրանք», թրք. matah «զնահատելի, արժեքավոր, զովելի». ՂԲԲ, 484), *մախթա* (mukataa 1. «արքունի հարկի վարձակալում, կայքագիր». ՄԲԲ, 3, 235), *մաճար* (majar «հունգարացի». ՄՀԲ, Բ., 104. ՆՊԲ. 133), *ջումհաթ* (արբ. jamaat, պրսկ. jamaat, թրք. cemaat «հասարակություն, հանրություն, ժողովուրդ». ՂԲԲ, 643), *սանտուղ* (արբ. sandug, պրսկ. sandag «սնդուկ, արկղ». ՀԱԲ, 4, 236. ՀԼԲԲ, Ե., 264), *քուլ* (koll «բոլոր, ամբողջ». ՆՊԲ, 218) և այլն:

<sup>1</sup> Այս անվան տակ նկատի ունենք թուրք-թաթարական բոլոր փոխառությունները՝ հիմք ընդունելով Աճառյանի հիմնավորումը. տե՛ս Հր. Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, մաս II, էջ 258:

<sup>2</sup> Վերապահությամբ ենք արաբական համարում, քանի որ այս բառերի մեծ մասը գործածական է նաև պարսկերենում և թուրքերենում, հետևաբար դժվար է որոշել փոխառության աղբյուրը:

Նամակներում վկայված են նաև *եվրոպական լեզուներից* (հունարեն, լատիներեն, ֆրանսերեն, գերմաներեն) և *ռուսերենից* անցած փոխառություններ: Օրինակ՝ *սինոր* (հուն. synoros «սահման, սահմանագիծ» (ՄՀԲ, Բ., 327. ՆՊԲ, 182), *կափիտան* (գերմ. kapitan «նավապետ, գլխապետ»), *իմփրատոր* // *իփրադոր* // *իմփրատոր* (լատ. imperator, իտալ. imperatore «վայսր, ինքնակալ, միապետ»), *ճզվիթ* (ֆրանս. jesuite «Հիսուսյան միաբանության անդամ»։ ՆՊԲ, 131), *ուքագ* (ռուս. указ «հրաման, հրամանագիր, կարգադրություն»), *տվորնի* (ռուս. дворня «աղախին, սպասավոր»), *պայար* (ռուս. боярин «բոյար, ազնվական, կալվածատեր») և այլն:

Նամակներում հաճախ են գործածված խոսակցական լեզվին բնորոշ *բայական հարադրություններ*, որոնց անվանական բաղադրիչը փոխառյալ բառ է: Օրինակ՝ *աշքար(ա) անել* - «հայտնի դարձնել» (ՀԼԲԲ<sup>1</sup>, Ա., 75. ՂԲԲ, 62): Օրինակ՝ «Հենց որ բանն այսպես եղաւ, ես էլ Շամախի *աշքար չարի*» (146): *Աջիգ իլնել* - «աչքով տալ, չար աչքի գալ» (ՀԼԲԲ, Ա, 96): Օրինակ՝ «Մեր խու *աջիգ իլանք* դոցայ ձեռն...» (171): *Երիշ անել* - «մենամարտել, գրոհել, հարձակվել» (ՆՊԲ, 67). «...և ապա *երիշ անեն* Շամախու, Պարուա» (193): *Սղնաղ սղնաղ անել* - «բաժան-բաժան լինել, մեկուսանալ». սա գործածվում է հատկապես Ղարաբաղի բարբառում (ՀԼԲԲ, Ե., 365. ՆՊԲ, 185). «Մեր այս խալղս ամէքն իւր երկրումն *սղնաղ սղնաղ* ենք *արել* ամուր տեղերն» (185) և այլն:

Նամակների բառապաշարը հարուստ է *բարբառային լեզվաշերտին* պատկանող բառերով և բառաձևերով: Բարբառային ենք համարում ժամանակակից բարբառներում հանդիպող հետևյալ բառերը: Օրինակները շատ են, բերենք դրանցից մի քանիսը՝ *գեղուգեղ* (183), *էսչանք* (192), *իքմին* (146), *խու/խո* (171), *խաթր համար* (165), *վախուն* (146), *վախտումն* (146), *տվի* (195), *տրի* (146) և այլն:

Հաճախ հանդիպում են նաև ժողովրդական կենդանի խոս-

<sup>1</sup> Հայոց լեզվի բարբառային բառարան, հ.Ա-Է, Ե., 2001-2012:



քից վերցված *դարձվածային միավորներ*<sup>1</sup>, որոնցով խոսքն առավել կենդանի և անմիջական է դառնում: Օրինակ՝ *աչաց լոյս* («շատ սիրելի, պաշտելի, թանկագին անձ կամ իր»): «Ծանուցումն լիցի *աչաց լոյս* պարոն Իւան Կարապետ Էլչի պէկիդ» (190), *աչքն ճանապարհին* («անհամբեր սպասել»): «Միայն թէ մեր *աչքն* ձեր *ճանապարհին* է» (183), *միտքներն ծուռ* («հետին միտք ունեցող, նենգավոր, խարդախ»): «Եկին մեզ մօտ Վարանդայ. մէկ Բ(2) օր տեսանք *միտքներն ծուռ*» (183) և այլն:

Նամակների բառապաշարը, պայմանավորված ժանրային առանձնահատկություններով, առանձնապես աչքի չի ընկնում նոր բառերի կերտմամբ: Գործածված է 3 նորակազմ բառ՝ *քրօփեաճեմ* («հրեշտակի պես քալող»), *աջքագունկ* («օգնական, աջակից»), *մուշկափաթան* («բարակ կաշվով փաթաթած»)<sup>2</sup>, որոնք կազմված են հայերենի բառակազմական ներքին օրինաչափություններով:

*Քերականական համակարգի իրողություններ*: Նամակների *հոլովման համակարգն* առանձնանում է բազմաձև դրսևորումներով, հատկապես կարևորվում են գրաբարյան կանոններից շեղվող և լեզվի զարգացման վաղաշխարհաբարյան ենթաշրջանին բնորոշ իրողությունները:

*Հոլովածների կազմության* հարցում նկատելի են ձևային ընդհանրացումներ, դեռևս գործուն են հայցականի *զ*, բացառականի *ի* նախդիրները, հանդիպում են նաև աննախդիր գործածություններ, սկսում են կայունանալ աշխարհաբարի գործիական և ներգոյական հոլովները, նկատվում են հոլովանիշ թեքությունների նկատմամբ հոգնակերտ մասնիկների նախադաս գործածություններ: Օրինակ՝ «Մեր թագաւորն հրաման է արարեալ, որ պիտի մեք այս *երկիրներիս* Հայն և դղլպաշն փչացնեմք» (186):

<sup>1</sup> Դարձվածքների բացատրությունները բերում ենք ըստ Ա.Սուքիասյանի, Ա. Գալստյանի, *Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանի*, Ե., 1975:

<sup>2</sup> Բառի ստուգաբանությունն անհայտ է, ենթադրում ենք, որ *մուշկի* արմատն է, որ նշանակում է «բարակ կաշի» (ՀԲԲ, 3, 364):

«Երկրպագութիւն և ողջոյն ի հեռուստ մատուցանեմք ազգս Հայոց նորընծայ ծառայքս քոյ, պատրիարգօք, իշխանօք, *մէլիքներօք*» (184):

Հարկ է նշել, որ հոլովական թեք ձևերը ներկայացնում են մի կողմից դասական գրաբարից եկող ընդհանուր օրինաչափություններ, մյուս կողմից՝ վաղ աշխարհաբարի ենթաշրջանում դրանց կրած փոփոխությունները, որոնք փաստում են հայերենի համապատասխան իրողությունների զարգացման միտումները:

Մեկ օրինակում հանդիպում է *կողմ* բառի *բացառականի* – *ից* վերջավորությամբ կազմություն: Օրինակ՝ «Դ (4) տարի աւել է չորս *կողմից* թշնամին պատած, քանի քանի երկրներ. մինչև ի մեզ գերեվարեցին և կոտորեցին» (193):

Նամակներից մեկում *վախ* բառի բացառականի իմաստն արտահայտվում է բարբառային *վախուն* ձևով (սա գործածական է նաև Համշենի բարբառում. ՀԼԲԲ, Զ., 14): Օրինակ՝ «Նա էլ *վախուն* և ցաւի կսկծոյն շատ թուրքեր մատնեց» (146):

Ուշագրավ է անձնական դերանունների բացառական հոլովի կազմությունը: Այսպէս՝ *մեք* և *դուք* դերանունների հոգնակի բացառականը խոսակցական լեզվի ազդեցությամբ հանդիպում է *մեզան*//*մեզանէ* և *ձեզանէ* ձևերով (փխ. ի մենջ, ի ձենջ): *Մեզան* ձևում նկատելի է նմանություն Ղարաբաղի բարբառում գործածական *մեզանա* դերանվան հետ (*ա* հնչյունի անկումով)<sup>1</sup>: Օրինակ՝ «*Մեզան* գիր ուզեց. մեք կաթողիկոսք և ուզպաշիք կամեցանք, պահեցինք մեր մէջս» (174): «Մեր թշնամին շատ է *մեզանէ*» (163): «*Ձեզանէ* կուխնդրեմք, այս թուղթս տեղ հասուցանեք շուտով» (180):

*Գործիական հոլովի* թերություններից (*-աւ*, *-իւ*, *-ամբ* և այլն) տարբեր հոլովումների պատկանող բառերի համար իբրև գործիականի հոլովական վերջավորություն, ամրակայվել է արդի հայերենի *-ով* վերջավորությունը: Օրինակ՝ «Այլ և Քուտ գետն, որ

<sup>1</sup> Տե՛ս նաև Ս. Աճառեան, *Ուսումնասիրություններ հայկական բարբառախօսութեան*, մաս III, Ղարաբաղի բարբառի բնութիւն, Վաղարշապատ, 1899, էջ 145-146:



մեր առջև է *լօթլօւ* կանցանուի» (185): «Մեք *երկրով* և ամենայն *մէլիքովք* և ազատ որդովք և ռամկօք ի պատրաստի կամք և սպասեմք» (161):

Այս շրջանում արդեն տիրապետող ու «ժողովրդական»<sup>1</sup> էր *ներգոյական հոլովի -ում վերջավորությունը*: Ներգոյականի իմաստը գրաբարյան ձևերին զուգահեռ արտահայտվում է նաև աշխարհաբարին բնորոշ *-ում* հոլովական վերջավորությամբ, հաճախ դրան հաջորդում է բարբառային *ն* որոշիչ հոդը: Օրինակ՝ *խոտումն* (148), *ամսում* (173) *քաղաքումն* (183), *երկրումն* (185), *օրում* (183) և այլն:

Հաղթահարվում և պարզեցվում է նաև գրաբարյան անկանոն հոլովումը, թեև գրաբարագիր հեղինակը դեռևս շարունակում է այդպիսիք գործածել: Այսպես՝ *գիւղ* գոյականը հանդիպում է տարբեր ձևերով՝ *գեղ* (185), *գեղի* (171), *գեղրանք* (171), *գեղարանց* (181, 197), որոնք բնորոշ են ժամանակի խոսակցական լեզվին:

Նամակների լեզվում յուրահատուկ ու բազմազան դրսևորումներ ունի *գոյականի թվակազմությունը*:

Հոգնակի ուղղականը ձևավորվում է *-ք, -եր, -ներ, -իկ (իք), -էք* հոգնակերտ մասնիկներով: Արդեն հստակեցվում են *-եր* և *-ներ* հոգնակի վերջավորությունները, *-եր*-ը մեծ մասամբ գործածվում է միավանակ բառերի դեպքում՝ *թուրքեր* (146), *հակեր* (148), *աչքեր* (164), *բաներս* (183), *թղթեր* (190), իսկ *-ներ*-ը՝ բազմավանկ *երկրներ* (182, 185, 186, 193), *քաղաքներ* (193), *մէլիքներ* (183):

*Միտք* միավանկ գոյականը, որը գրաբարում անեզական անուն էր, *ք*-ի իմաստի մթազման հետևանքով ստացել է *-ներ* հոգնակերտ: Օրինակ՝ «Գ (3) փաշայ Շահին, Սալահ և Ալի անունով... եկին մեզ մօտ Վարանդայ. մէկ Բ (2) օր տեսանք *միտքներն* ծուռ» (183):

<sup>1</sup> Գր. Վանցեան, Պատմական քերականութիւն արեւելահայ լեզուի, Թիֆլիս, 1906, էջ 29:

Մարդ բառի հոգնակին կազմվել է *-իք* վերջավորությամբ: Օրինակ՝ «Դարձեալ այս մօհրի տէր մարդիքս ապրանքի տէրն ան, փող են ուզում» (196):

*-իք* հոգնակերտով են կազմվել նաև *-եցի*, *-ցի* ածանցներով գոյականները՝ *ջուղեցիք*, *էջմիածնցիք*, *շամախեցիք*, որոնք բարբառային ձևեր են: Օրինակ՝ «Մեր թշնամիք և հակառակք անչափք կան և որպէս դու իսկ գրեալ ես, թէ *ջուղեցիք*, թէ *էջմիածնցիք* և թէ *շամախեցիք*. աստուած մի արասցէ, թէ որ այս թղթոց մէկն նոցա ձեռն անկանի» (163):

*Խօճա* (վաճառական) և *քէտխուղա* (կառավարիչ) փոխառյալ բառերի հոգնակին կազմվել է բարբառային *-էք* (այ>է) մասնիկով՝ *խօճէք*, *քէտխուղէք*. «Այնքան մնացիր, որ Հոռոնց երկրէն այնչափ *խօճէք* եկին Երևան, Թփլիզ, Գանջայ, Թաւրեզ մինչև ի Շամախի լցուան» (194): «Եւ դարձեալ զայս ծանիցէ սիրելիութիւն քոյ գրեալ ես, թէ քանի մէլիք և *քէտխուղէք* ձեռագրով միրեն զթուղթն» (163):

*Բայական համակարգում* նկատվում են լեզվական անմիօրինակություններ. քերականական ձևերում որոշակիորեն գծագրվում են աշխարհաբար գրական հայերենի խոնարհման համակարգին բնորոշ օրինաչափություններ:

Գրաբարի չորս դերբայներից (անորոշ, ապառնի, անցյալ, ենթակայական) բացի, գործածվում են նաև միջին հայերենում ու բարբառներում ձևավորված և աշխարհաբարին փոխանցված *վաղակատար*, *հարակատար*, *ապառնի* և *անկատար* դերբայները: Այսպէս՝ *անորոշ դերբայը* եզակի օրինակում հանդիպում է արդի հայերենի ու հոլովմամբ՝ «Ահա մեր խնդիրքն այն է, որ թէ ետ ու առաջ դէպի Շամախի և մեր կողմս հրաման ունիք *գալու*, միք ետանալ» (192):

Երկու անգամ վկայված է աշխարհաբարյան *-ու* մասնիկով *ապառնի դերբայի* կիրառություն՝ «Ես ես գարունս *գնալու* եմ էջմիածին» (164): «Զի գրես, թէ *գալու* եմ տեղդ առնտուր եմ անելոյ» (194):

Նամակներում լայն գործածություն ունեն *վաղակատար*



դերբայով կազմված եղանակաժամանակային ձևերը: Օրինակ՝ «Մանաւանդ գրել էս, թէ մեզ Պաքունէն, Դարբանտէն խապար եկաւ, ձեզ գրել են» (171): «Նոցա զօրքն կոտորել են, չեն կարացել առնիլ» (183)\*:

Հարակատար դերբայը ևս հաճախադեպ է՝ «Ոչ գրումն գրած էր և ոչ մտացս կայր, որ հիմա գրէի» (147): «Բայց քանզի ճանապարհքս փակած է, ոչ կարենք որպիսութիւնք մեր հանապազ գրել» (166): «Զամենայն քաղաքներս առան, ինչպէս լսած էք, Թփլիս, Երևան, Գանջայ» (193):

Անկատար դերբայ՝ «Մէկին հետ խոսում էս, մեկն է խոսվում» (171): «Մեր մարդս էլ որ մէկ տեղաց օգնութիւն չեն տեսնում, յուսահատում են և ցրուվում» (193):

Մէկ օրինակում վկայված է *-ման* մասնիկով անկատար դերբայի օրինակ, որը հատուկ է Զուղայի բարբառին՝: Օրինակ՝ «Այլն իմացէք, որ էստեղ մեր ապրանաց մուշթարի շատ կա և հազիր կանկնած է, աւելի փող է տալման» (196):

Խոնարհման պատկերը ևս զրաբարախառն է. Զերականական հին ձևերի կողքին առատորեն վկայված են նոր գրական հայերենին բնորոշ եղանակային ձևեր:

Սահմանական եղանակը վկայված է ինը ժամանակաձևերով, հաճախադեպ են նաև միջինհայերէնյան սահմանական ներկա-անկատար ժամանակների *կու*-ով կազմությունները: Օրինակ՝ «Շատ մարդ մեր միջէս յուսահատում է, գնում նոցա մօտն, և մեր կողմս նուագում է» (192): «Մեծ վնաս կուհասանի սուրբ աթոռոյս և մեզ» (163): «Էս վախտումն մեզանէ մօտի խալղն իւրեանց միջումն ասել ին» (146): «Բայց քանզի ճանապարհքս փակած է, ոչ կարենք որպիսութիւնք մեր հանապազ գրել» (165): «Եկն մինչև ի Գանջայ, Ի (20) օր ծեծեց զքաղաքն և դարձաւ» (165):

Գրաբարյան ստորադասական եղանակի ձևերի կողքին գործածված են *ըղձական, պայմանական, հարկադրական* եղանակների բայաձևեր՝ *պիտի հաստատեն* (197), *պիտի գրես* (171),

\* Հր. Աճառեան, *Քննութիւն Զուղայի բարբառի*, Ե., 1940, էջ 254:

*շնորհի (160), պահես (174), բռնեք (192, 193)* և այլն:

Հրամայական եղանակը գրաբարակերպ է, ունի սակավ կիրառություն: Օրինակ՝ «Այժմ է ժամանակն *արասցիր* վաղվադակի» (161): «Եկող մարդին խարջ խօրակն հոգալ այսպես իմասջիք» (181):

*Ժխտական խոնարհման* դեպքում ևս նկատելի են գրաբարախառն, բարբառային և զուտ աշխարհաբարյան կազմություններ: Ինչպես *չեմք կարող (163), չեք տեսնում (171), չեն կարացել (182), չեն տեսնում (193), չեք ողարկիլ (185), կարիլ չեմք (182), տեսած չեմ (195)* և այլն:

Նամակների լեզվի *շարահյուսական-շարադասական* առանձնահատկություններից են *ուղղականով ենթակա-դիմավոր բայով ստորոգյալ* կառույցի լայն գործածությունը, որոշչի և հատկացուցչի նախադաս կիրառության կայունացման միտումը: Փոփոխություն է կրել կապի և կապվող բառի շարադասությունը. որոշ նախադրություններ խոսակցական լեզվի ազդեցությամբ դարձել են հետադրություններ:

Այսպիսով՝ նամակների լեզվական առանձնահատկությունների ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել.

1. 18-րդ դարի սկզբին գրաբարին զուգահեռ գործածվող նոր հայերենը դեռևս գտնվում էր կազմավորման, նորմավորման փուլում՝ պարունակելով հնչյունական, բառապաշարային, քերականական բազմազան իրողություններ, բարբառային ներթափանցումներ: Նամակների բառապաշարն ամբողջովին արտացոլում է վաղ աշխարհաբարի լեզվավիճակը:

2. Հոլովման և խոնարհման համակարգերում նկատելի է նոր ձևավորվող լեզվի ազդեցությունը: Ամրակայվում են գործիականի *-ուլ* և ներգոյականի *-ում* հոլովական վերջավորությունները, *-եք, -ներ* հոգնակերտները, գործածվում են նոր եղանակներ ու ժամանակաձևեր:

3. Գրաբար-աշխարհաբար-բարբառներ զուգահեռ կամ հաճախ միահյուսված գործածությունները վաղ աշխարհաբարի



թերևս ամենակարևոր առանձնահատկությունն է, որը լիապես դրսևորված է Եսայի Հասան-Ջալալյանցի նամակների լեզվում:

Sahakyan Ruzanna- Essential linguistic features of the letters of Yesai Hasan-Jalalyants.- As a result of studying linguistic features of the letters we have arrived at the following conclusions: 1. Glossary of those letters fully reflects the state of the early stage of Ashkharabar (modern Armenian language). 2. In declension and conjugation systems it is felt the influence of a new language being formed. Prepositions *-nı* of ablative and *-nı* of locative cases, *-եր*, *-ներ* endings of plural forms are fixed, new moods and tenses are used. 3. Parallel or often tangled usage of Grabar (old Armenian) – Ashkharabar (modern Armenian)- Dialect languages is perhaps the most important feature of the early stage of Ashkharabar, which is fully manifested in the language of the letters of Yesai Hasan-Jalalyants.

Саакян Рузанна- Существенные лингвистические особенности писем Есаи Гасан-Джалалянца.- В результате изучения лингвистических особенностей писем мы пришли к следующим выводам: 1. Словарный запас этих писем полностью отражает состояние ранней стадии Ашхарабар. 2. В системах склонения и спряжения заметно влияние нового формирующегося языка. Фиксируются падежные окончания *-nı* творительного и *-nı* местного падежей, окончания множественного числа *-եր*, *-ներ*, употребляются новые наклонения и временные формы. 3. Параллельные или часто сплетенные употребления Грабар-Ашхарабар-Диалектика, пожалуй, являются наиболее важной особенностью ранней стадии современного армянского языка, которая полностью проявляется в языке писем Есаи Гасан-Джалалянца.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՅԵՐԻ  
ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆԻ  
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Վ. Վինոգրադովը հոգիվածներից մեկում նշում է, որ կան երկու տիպի լեզվաբաններ: *Առաջինների* համար հետազոտության էությունը առանձին լեզվաբանական կառույցների կերտումն է, որն արտացոլում է բազմաբնույթ լեզվական շինության մասնավոր դրսևորումները: Լեզվաբանության ընդհանուր խնդիրները այսպիսի լեզվաբանների համար ծառայում են լոկ որպես անտառներ իրենց շինությունը կառուցելու համար: Նույնիսկ այն ընդհանուր տեսական եզրահանգումները, որ ի հայտ են գալիս աշխատանքի արդյունքում որպես հասուն պտուղներ, նրանց գիտական ձգտումների համար ցանկալի նպատակներ չեն: *Երկրորդ տիպի* լեզվաբանների համար լեզվաբանության ընդհանուր խնդիրները միշտ առաջնային դեր ունեն: Որքան էլ նրանք խորը ուսումնասիրեն այս կամ այն լեզուն կամ առանձին լեզվական փաստը, այդ ամենը նրանք դիտարկում են լեզվի ընդհանուր տեսության դիտակետից<sup>1</sup>:

Լեզվաբանների երկրորդ խմբի ներկայացուցիչ պետք է համարել նաև Գ. Զահուկյանին: Նա մեծ ուշադրություն է դարձրել տեսական նշանակություն և կարևորություն ունեցող այնպիսի խնդիրների ու հարցերի, առանց որոնց հնարավոր չէ հստակ պատկերացում կազմել լեզվական կառուցվածքի, գործառության և լեզվի զարգացման մասին: Այս բոլոր հարցերին, բնականաբար, անդրադարձել են նաև այլ լեզվաբաններ, սակայն Գ. Զահուկ-

<sup>1</sup> St' u B. Виноградов, Памяти академика Льва Владимировича Щербы (1880-1944): *Сборник статей*. Л.: Изд-во Ленинградского гос. ун-та им. А. А. Жданова, 1951, էջ 31-62:



յանը իր լեզվաբանական տեսության դիրքերից է քննում այդ հարցերը՝ հանգեցնելով բոլորիս ինքնատիպ լուծումների:

Ընդհանուր լեզվաբանական և տեսական զանազան հարցեր Գ. Ջահուկյանի ուշադրության կենտրոնում եղել են գիտական գործունեության նախնական շրջանից: Լեզվաբանական բոլոր նախաձեռնություններում հեղինակը ձգտել է լեզվական նյութի ինքնուրույն, խոր և համակողմանի ուսումնասիրության: Հետևաբար Ջահուկյանը չի սահմանափակվել իր ներկայացրած նախնական գաղափարներով, այլ ողջ գիտական գործունեության ընթացքում զարգացրել, հարստացրել ու կատարելագործել է այդ գաղափարները, սկզբունքներն ու հայացքները: Հատկապես հիշատակության արժանի են լեզվաբանության պատմության շրջանաբաժանման, լեզվական մակարդակների և կադապարման մեթոդի հարցերը, որոնք հեղինակի աշխատություններում ներկայացվում են աստիճանական զարգացմամբ:

#### Շրջանաբաժանման հարցը

Գ. Ջահուկյանի խորին համոզմամբ լեզվաբանության պատմաբանի գլխավոր խնդիրներից մեկը գիտական շրջանաբաժանման և նյութը համակարգելու ռացիոնալ եղանակների մշակումն է: Այդ է պատճառը, որ հեղինակն աշխատություններից մեկի՝ «Լեզվաբանության պատմության» առաջին հատորի ներածության մեջ նախևառաջ անդրադարձել է հենց այս հարցերի քննությանը: Հետագայում, վերանայելով այս աշխատության մեջ ներկայացվող որոշ սկզբունքներ՝ Ջահուկյանը, շրջանաբաժանման խնդրին անդրադառնում է նաև իր մեկ այլ «Общее и армянское языкознание» աշխատության մեջ:

Վերոնշյալ շրջանաբաժանումը, անկասկած, մեծարժեք դեր ունի լեզվաբանության պատմության մեջ: Այն կարևոր է ոչ միայն լեզվաբանության պատմության երեք հիմնական շրջանների առանձնացման, դրանց բազմակողմանի բնութագրման և վերլուծության տեսանկյունից, այլև այնպիսի հարցերի ընդգրկման առումով, որոնք կազմում են այդ շրջանների էությունը: Լեզվաբանության պատմության ամեն մի շրջան համակողմանի բնու-

թագրվում է, բացի այդ՝ ներկայացվում են առանձին շրջաններում նյութի քննությանը բնորոշ հատկանիշները, որոնք, անշուշտ, ամբողջացնում են ժամանակաշրջանի լեզվական ուսումնասիրության պատկերը: Վերևում նշվեց, որ իր հետագա ուսումնասիրությունների մեջ Ջահուկյանը որոշ հավելումներ ու նոր դիտարկումներ է անում: Մասնավորապես՝ «Общее и армянское языкознание» աշխատության մեջ նշում է, որ «Լեզվաբանության պատմություն» աշխատության մեջ նկատի չեն առնվել սերող քերականության սկզբունքներն ու մեքենական թարգմանությանը վերաբերող տեսական եզրակացությունները, քանի որ աշխատությունն ավարտված էր նախքան սերող քերականության գաղափարների տարածումը<sup>1</sup>: Հետևաբար՝ շրջանաբաժանումը մասնակի փոփոխության կարիք ունի: Օր. «Լեզվաբանության պատմության» մեջ 20-րդ դարը բնորոշվում է որպես ստատիկ-վերլուծական լեզվաբանության ձևավորման շրջան, բայց, նկատի ունենալով սերող քերականության գաղափարների տարածումը, այն, որ այս շրջանում նախապես տիրապետող էր լեզվի կառուցվածքի վերլուծությունը, այնուհետև անցում կատարվեց դեպի համադրում, հետագայում՝ երկու սկզբունքների համատեղում, ուստի՝ անվան մեջ ճշգրտում պետք է մտցնել: Ջահուկյանը, նկատի ունենալով այս հանգամանքը, ավելի նպատակահարմար է գտնում կոչել *համակարգային-օպերացիոնալ լեզվաբանության* ձևավորման շրջան:

Մեկ այլ խնդիր էլ կա մեթոդին առնչվող: Եթե «Լեզվաբանության պատմության» մեջ *մեթոդ* տերմինը գործածվում էր լայն իմաստով, ապա «Общее и армянское языкознание» աշխատության մեջ Ջահուկյանը նպատակահարմար է գտնում նեղացնել տերմինի իմաստային ծավալը՝ նկատի ունենալով միայն առանձնացվող շրջանների բնորոշ հատկանիշների ամբողջությունը: Մեթոդը պետք է դիտարկել որպես տվյալ շրջանի ընդհանուր խնդիրներից, լեզվի նկատմամբ հայեցակարգից, լեզվաբանու-

<sup>1</sup> Տե՛ս Գ. Джаукян, *Общее и армянское языкознание*, Ереван, 1978, էջ 59:



թյան կառուցվածքից, բաժիններից ու գիտակարգերից բխող հատուկ մեթոդների որոշակի ամբողջություն: Սրանով էլ պայմանավորված՝ որոշակի փոփոխության պետք է ենթարկել նաև լեզվաբանական դպրոցների և ուղղությունների առանձնացման ընդհանուր սկզբունքը: Դրանց հիմքում պետք է լինի ոչ թե լեզվի հայեցակարգը՝ նեղ իմաստով, այլ լեզվաբանների ընդհանուր հայեցակարգը, նրանց աշխարհընկալման փիլիսոփայական հիմքը, լեզվի բնույթի վերաբերյալ նրանց տեսակետը: Հետևաբար՝ լեզվաբանության պատմությունը ներկայացնելիս պետք է տալ ոչ միայն տարբեր շրջանների և ենթաշրջանների, լեզվի ընդհանուր հայեցակարգի, տիրապետող մեթոդների ընդհանուր բնութագիրը, այլև նոր մեթոդների կիրառման, նոր հայեցակարգի կիրառման արդյունքները: Այսինքն՝ Ջահուկյանը ցանկանում է ներկայացնել օբյեկտն ուսումնասիրելիս գրանցված ձեռքբերումներն ու առաջընթացը: Ուստի՝ տվյալ շրջանի ընդհանուր նկարագրությունից հետո պետք է ներկայացվեն առանձին լեզուների և լեզվախմբերի ուսումնասիրության արդյունքները, ինչպես նաև լեզվի առանձին կողմերի ուսումնասիրության բնագավառի ձեռքբերումները:

Անդրադառնալով լեզվաբանության պատմության տարբեր շրջանների և ենթաշրջանների առանձնացման սկզբունքի հարցին՝ Ջահուկյանը հավատարիմ է մնում «Լեզվաբանության պատմության» մեջ ներկայացվող իր հայացքներին, այն է՝ տարբեր շրջանների և ենթաշրջանների առանձնացման ժամանակ պետք է հիմնվել ոչ թե մեկ հատկանիշի, այլ հատկանիշների ամբողջության վրա: Այս աշխատության մեջ ևս պահպանվում են առանձնացված 11 հատկանիշները: Եթե հեղինակը ի սկզբանե ընդամենը առանձնացնում էր այդ հատկանիշների ամբողջությունը, ապա այստեղ նաև շեշտում է, որ կատարվում է ոչ թե մի հատկանիշի վրա հիմնված, այլ *բազմահատկանիշ շրջանաբաժանում*: Բացի այդ՝ չէր նշվում այդ հատկանիշների փոխհարաբերությունը: Այս բացը ևս հեղինակը լրացնում է «Общее и армянское языкознание» աշխատության մեջ:

Այսպիսով՝ Գ. Զահուկյանը մշակում է լեզվաբանության պատմության շրջանաբաժանման ուրույն և բավական միասնական սկզբունքներ, հստակեցնում նյութը համակարգելու եղանակները և դրանով իսկ որոշակիացնում իր հայեցակետը լեզվաբանության պատմության երեք շրջանների նկատմամբ: Անշուշտ, գիտության զարգացման այժմյան մակարդակից դիտարկելով Զահուկյանի շրջանաբաժանումը՝ որոշակի հավելումների կարիք կա, սակայն անժխտելի է նրա մնայուն տեղը ընդհանուր լեզվաբանության պատմության մեջ: Բավական է նշել միայն, որ մինչ օրս այն մնացել է չգերազանցված:

### Մակարդակների հարցը

Գ. Զահուկյանը սկզբնական աշխատություններում համընդհանուր լեզվաբանական տեսության մշակման նախնական փուլում առաջարկում է միայն երկպլանային միավորների համար առանձնացված երկու մակարդակ՝ բառ, նախադասություն<sup>1</sup>: Ընդ որում՝ այս երկու պլանների նկատմամբ երկու մոտեցում է ցուցաբերում. 1. հետազոտությունը սկսում է արտահայտության պլանից և գնում դեպի բովանդակության պլան, այսինքն՝ թե ինչ կապակցություններ կան և ինչ իմաստ են արտահայտում, 2. Ընդհակառակը՝ նախ պարզում է իմաստները, հետո տեսնում, թե ինչ հնչակապակցություններով են արտահայտվում:

Հետագայում «Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն» աշխատության մեջ (1989) Գ. Զահուկյանը նշում է, որ կարելի է առանձնացնել կառուցվածքային չորս մակարդակ՝ ամեն մեկի մեջ էլ համապատասխանաբար երկուական ենթամակարդակ, սակայն այդ դեպքում հաշվի չեն առնվի ամբողջական խոսքի՝ տեքստի լեզվաբանական ուսումնասիրության հարցերը<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Գ. Զահուկյան, *Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը*, Ե., 1967: Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969: *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ*, Ե., 1974:

<sup>2</sup> Տե՛ս Գ. Զահուկյան, *Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն*, Ե., 1989, էջ 19:



Ըստ համընդհանուր լեզվաբանական տեսության սկզբունքների՝ հեղինակը կարծում է, որ մակարդակ կարող են ստեղծել միայն թե՛ արտահայտության պլան (հնչյունական կողմ կամ արտահայտության համապատասխան այլ միջոցներ) և թե՛ բովանդակության պլան (իմաստ) ունեցող միավորները:

Վերոնշյալից կարելի է եզրակացնել, որ մակարդակային միավորների քննությունը փաստորեն սահմանափակվում է առմիջուկային տարրերի քննությամբ. միջուկային տարրերի քննությունը կատարվում է ավելի ստորին մակարդակում՝ ենթամակարդակում:

Գ. Զահուկյանը հետագայում, նկատի ունենալով, որ լեզվի մեջ կան ոչ միայն անկախ միավորներ (բառ, նախադասություն), այլև եզրային և կախյալ, բաղադրյալ միավորներ, դրանց համար առանձնացնում է ենթամակարդակներ<sup>1</sup>: Սակայն այս դեպքում ևս մնում է երկպալանային միավորների սահմաններում:

Սուբստանցիոնալ լեզվաբանության մեջ մակարդակների ուսմունքը էականորեն տարբերվում է ընդունված ուսմունքներից և հիմնվում է որոշ հիմնական սկզբունքների վրա: Ուստի նախորդ աշխատություններում առաջարկված լեզվական մակարդակների առանձնացման կառուցվածքը որոշ փոփոխության է ենթարկվում «Շարահյուսական ուսումնասիրություններ» և հաջորդ «Универсальная теория языка» աշխատություններում: «Универсальная теория языка» աշխատության մեջ հեղինակն առաջարկում է ավելի կատարելագործված և ժամանակակից գիտության պահանջներին համապատասխան կառուցվածք: Ի տարբերություն նախորդ աշխատությունների՝ այս աշխատության մեջ որոշ լրացումներ և ճշգրտումներ են արվում<sup>2</sup>:

Այս ուսումնասիրության մեջ մակարդակներ կարող են

<sup>1</sup>Տե՛ս Գ. Զահուկյան, *Շարահյուսական ուսումնասիրություններ*, Ե., 2003, *Общее и армянское языкознание*, Ереван, 1978, *Универсальная теория языка. Прологомены к субстанциональной лингвистике*, Москва, 1999:

<sup>2</sup> Տե՛ս Գ. Դճաукян, *Универсальная теория языка. Прологомены к субстанциональной лингвистике*, Москва, 1999, էջ 79-85:

կազմել միայն երկպլանային միավորները, այսինքն՝ Մարտինեի տերմինաբանությամբ՝ մոնեմներն ու դրանց համակցությունները: Արտահայտության և բովանդակության պլանների բաղադրիչները, մասնավորապես հնչյոթները, ինքնին չեն կարող կազմել մակարդակներ: Դա խախտում է բաժանման տրամաբանական սկզբունքը. մի շարքին է դասում երկպլանային և միապլանային միավորները: Խոսելով լեզվի մակարդակային միավորների մասին Ջահուկյանը կարծում է, որ պետք է նկատի ունենալ միայն գծային միավորները<sup>1</sup>: Ընդհանրապես տարբեր հատկանիշները և մասնավորապես հնչյոթների, տարբեր հատկանիշները (Բենվենիստի տերմինաբանությամբ՝ մերիզմները) չեն կարող մակարդակներ կազմել: Ջահուկյանի խորին համոզմամբ չի կարելի մի կողմից հնչյոթների տարբերակիչ հատկանիշների մակարդակ առանձնացնել, մյուս կողմից՝ ինքնին հնչյոթների, դա կնշանակի, որ շփոթվում են հասկացությունների ծավալն ու բովանդակությունը: Չի կարելի մի շարքին դասել միավորներն ու հատկանիշները, դա տրամաբանորեն հակասական կլինի. չէ՞ որ մյուս միավորների համար (օրինակ՝ բառերի համար) հատկանիշների առանձին մակարդակ չի առանձնացվում: Հնչյոթների տարբերակիչ հատկանիշները ներկայացնելով որպես դրանց կազմավորման համար անհրաժեշտ համապատասխան արտաբերումներ՝ խախտվում է մակարդակային միավորների գծայնության սկզբունքը:

Նախապես սուբստանցիոնալ լեզվաբանության մեջ, ինչպես նշվեց վերևում, որպես ամենամեծ մակարդակային միավոր առանձնացվում էր ամբողջական (ավարտուն) նախադասությունը (sentence): Համարվում էր, որ տեքստի կառուցվածքը լեզվական-իմաստաբանական առումով որակապես նոր փաստեր չի հայտնաբերում, ինչպիսիք, որ հայտնաբերվում են ամբողջական նախադասության սահմաններում: Խնդիրն այն է, որ ամեն մի մակարդակի միավորներ դիտարկելիս նկատի են առնվում

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 80:



տվյալ միավորի հարացույցը կազմող այն ցուցիչները, որոնք հանդես են գալիս ավելի բարձր մակարդակի միավորների կառուցվածքի մեջ (ենթամակարդակում): Այսպես, դիտարկելով ամբողջական նախադասությունները (ինչպես պարզ, այնպես էլ բարդ)՝ դրանցում նկատի են առնվում այն միջոցները, որոնք ապահովում են տեքստի ամբողջականությունը: Նկատի է առնվում նաև այն, որ մակարդակային միավորները առաջին հերթին համարվում են լեզվական, որոնց էլ խոսողի ուղեղում համապատասխանում են որոշակի կառուցվածքային կադապարներ, իսկ այդ կադապարների բաղադրիչները խոսքում իրացվում են տարբեր կերպ՝ իրադրությանը համապատասխան: Լայն տեքստի համար ուղեղում չկան որոշակի լեզվական կադապարներ. տեքստի կառուցումը ամբողջովին կախված է արտալեզվական գործոններից, խոսքը, իհարկե, կառուցվածքի որակական ցուցիչների մասին չէ: Հետագայում Ջահուկյանը եկավ այն եզրակացության, որ առաջին հերթին տեքստը պետք է տարբերակել խոսքից, երկրորդ՝ տեքստի և տեքստային միավորների համար կարելի է կազմել լեզվական ընդհանուր կադապարներ, երրորդ՝ առանց տեքստային մակարդակ առանձնացնելու՝ լեզվի շատ երևույթներ մնում են չբացահայտված<sup>1</sup>: Ուստի՝ ավելացվում է հենքի (տեքստի) մակարդակը:

Արդեն նշվել է սուբստանցիոնալ լեզվաբանության մեջ չի առանձնացվում ձևությանին հատուկ մակարդակ: Ձևությանին մակարդակի՝ առանձնացումը խախտում է մոտեցման միասնականությունը՝ հանգեցնելով նույն միջոցների կրկնակի դիտարկման այն մակարդակներում, որոնց դրանք հարում են: Ջահուկյանը նշում է, որ այս դեպքում էլ ստեղծվում է այնպիսի դրություն, ինչպիսին ստեղծվում է ձևաբանության մեջ բոլոր խոսքի մասերի ավանդական դիտարկման ժամանակ: Այսպես շաղկապի և կապի մասին խոսվում է ինչպես ձևաբանության մեջ խոսքի մասերի ընդհանուր դիտարկման ժամանակ, այնպես էլ շարա-

---

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 82:

հյուսույթյան մեջ շարահյուսական կապակցման միջոցների դիտարկման ժամանակ: Ձևաբանությունը դիտվում է ավելի լայն առումով որպես, այսպես կոչված, դասույթաբանություն, որի մեջ ուսումնասիրվում են բառերի համադրական և վերլուծական բոլոր ձևերը, օրինակ՝ առդրային (կապային) համակցությունները (ոչ միայն քաղաքում, այլև քաղաքի մեջ)<sup>1</sup>:

Ինչպես երևում է մակարդակների և ենթամակարդակների դասակարգումը ներկայացնելիս, դրանք չեն համընկնում ընդունված շատ դասակարգումների, բացի այդ ունեն նաև մի շարք առանձնահատկություններ: Առաջին անգամ արմատայինը առանձնացվում է որպես հատուկ ցածր ենթամակարդակ: Ընդ որում՝ այն ընդգրկում է միայն իմաստակիր բառերի արմատներ: Արմատի և բառակազմության ուսմունքները միացված են բառագիտության մեջ: Ձևույթային հատուկ մակարդակի բացակայության պատճառը բացատրվել է վերևում. այդ մակարդակում դիտարկվում են միայն արմատական այն ձևույթներն ու միջոցները, որոնց միջոցով դրանք ձևավորվում են և փոխհարաբերվում են բառույթային կամ բառակազմական ենթամակարդակների միավորների բաղադրիչների հետ:

Այն, ինչ սովորաբար դիտարկվում է որպես շարահյուսական մակարդակ, սուբստանցիոնալ լեզվաբանության մեջ դասակարգվում է երկու, եթե հաշվի առնենք նաև տեքստայինը, ապա երեք մակարդակի: Սովորական գործածության մեջ շարահյուսություն (սինտաքսիս) տերմինն ունի երկիմաստություն: Մի կողմից՝ դրա հիմնական նպատակը միավորների համադրելիության դիտարկումն է, այսինքն՝ սոսյուրյան իմաստով շարույթաբանությունը (սինտագմատիկան), մյուս կողմից՝ շարահյուսության ուսումնասիրության հիմքում նախադասության կառուցվածքի և ստորոգման ըմբռնման՝ որպես նախադասության բովանդակության և իրականության, կապն է որոշակի իրադրու-

<sup>1</sup> Տե՛ս Գ. Զահուկյան, *Շարահյուսական ուսումնասիրություններ*, Ե., 2003, էջ 11-13:



թյան հետ: Սուբստանցիոնալ լեզվաբանության մեջ միավորներն առանձնացնելիս առաջին պլան է մղվում դրանց կապակցելիությունը, իսկ ստորոգումը՝ որպես քերականական կարգ, դիտարկվում է միավորների կառուցվածքի հետ կապված՝ որպես արտահայտության և բովանդակության պլանների համադրություն:

Այսպիսով՝ հիմնական միավորների՝ բառերի, շարույթի, նախադասության և տեքստի քանակին համապատասխան՝ ձևավորվում է չորս մակարդակ՝ *բառային, շարային, նախադասական և հենքային*: Ամեն մի մակարդակում առանձնացվում է երկու ենթամակարդակ՝ *բառայինում՝ արմատային և բառույթային, շարայինում՝ դասույթային և շարույթային, նախադասականում՝ ստույթային և լրաստույթային, հենքայինում՝ հինույթային և լիահինույթային*:

#### Կադապարման մեթոդների հարցը

Սկսած 1960-ական թթ. Ջահուկյանը բազմաթիվ հոդվածներում և մենագրություններում առաջ քաշեց լեզվաբանական նկարագրության նոր եղանակ՝ լեզվի կառուցվածքի, լեզվական երևույթների քննության հարաբերակցական սկզբունքը, որի հիմքը կադապարման մեթոդն է: Լեզվաբանական գրականության մեջ չկա լեզվական կադապարի միասնական ըմբռնում: Ջահուկյանի մշակած համընդհանուր լեզվական կադապարի ըմբռնումն էլ տարբերվում է եղած ըմբռնումներից:

«Լեզվական կադապարների և նրանց տարբերիչ հատկանիշների փոխհարաբերության մասին» հոդվածում Ջահուկյանը նշում է, որ ընդհանուր լեզվաբանության իդեալը այնպիսի կադապարի ստեղծումն է, որտեղ բոլոր միավորները ոչ միայն պետք է քերականորեն ճիշտ լինեն, այլև իմաստալից, բացի այդ՝ կադապարը պետք է կիրառելի լինի բոլոր լեզուների նկատմամբ, ընդգրկի լեզվի բոլոր կոդները և սպառիչ բնույթ ունենա<sup>1</sup>:

<sup>1</sup> Տե՛ս «Теоретические и практические вопросы преподавания иностранных языков», Москва, 1970, էջ 7-22:

Հեղինակի խորին համոզմամբ նախադասությունը այն միավորն է, որի մեջ հանդես են գալիս լեզվական բոլոր իմաստներն ու ձևերը: Եվ քանի որ նախադասությունն էլ իրական աշխարհի որևէ կողմի լեզվական դրսևորումն է, ուստի նախադասության կադապարի կառուցումը պետք է սկսել իրական աշխարհի հարաբերությունների և իրերի հատկությունների ուսումնասիրությունից: Այսպիսով՝ իր կառուցելիք կադապարը Ջահուկյանը կոչում է *ընդհանրական նյութա-համակցային կադապար* (универсальная субстанционально-комбинаторная модель):

Կադապարի ջահուկյանական ըմբռնումն այսքանով չի սահմանափակվում. հեղինակը, այն զարգացնելով հոդվածներում և «Общее и армянское языкознание» աշխատության մեջ, հետագայում «Универсальная теория языка» մենագրության մեջ հանգում է *համընդհանուր լեզվաբանական կադապարի* գաղափարին: Վերջինս կառուցվում է հինգ էական սկզբունքների հիման վրա՝ *սուբստանցիոնալություն, ամբողջականություն, ընդհանրականություն, միասնություն, տնտեսում*:

Հարաբերակցական լեզվաբանության մեջ նկարագրել կամ բնորոշել օբյեկտը նշանակում է նրան վերագրել համընդհանուր լեզվաբանական կադապարի որոշ կարգեր ու եզրեր կամ հերքել դրանց առկայությունը: Համընդհանուր լեզվաբանական կադապարը ընդհանուր և սահմանափակ հասկացությունների՝ կարգերի և եզրերի ամբողջություն է: Կարգերը ստանալու համար Ջահուկյանն ընտրում է առարկաների ամենաէական հատկանիշները՝ առանձնացնելով հինգ այդպիսի հատկանիշ՝ *պարունակայնություն, բաղկացականություն, հաշվականություն, վիճակայնություն, նշանայնություն*:

Այսպիսով՝ Ջահուկյանի ստեղծած լեզվի ընդհանրական կադապարը նախատեսված է որպես ցանկացած օբյեկտի նկարագրության միջոց. լեզվաբանական վերլուծությունն ու համադրությունը կատարվում է թե՛ ֆիզիկական, թե՛ հոգևոր բոլոր օբյեկտների նկատմամբ կիրառվող ինդուկտիվ եղանակով



ստացված և դեղուկտիվ ճանապարհով ստուգված որոշակի բնութագրերի միջոցով:

Հոգևոր երևույթները բնորոշելու համար Ջահուկյանն առանձնացնում է հինգերորդ հատկանիշը, որը հեղինակի սկզբնական աշխատություններում կոչվում էր *նշանայնություն*, սակայն «Универсальная теория языка» աշխատության մեջ նախընտրում է «*հոգևոր*» տերմինը, երբեմն նույնիսկ «*նշանային-հոգևոր*»-ը: Այսինքն՝ նշան ասելով հասկանում է ոչ միայն օբյեկտի ներքին, այլև ֆիզիկական կողմը, ոչ միայն օբյեկտի բնորոշումը, այլև դրա ընկալումը: Հոգևոր տերմինը լայն նշանակություն ունի. դրա մեջ ներառվում են և՛ այն ամենը, ինչ բնորոշում է օրգանական կյանքի ֆիզիկական կողմը, և՛ զգայական բոլոր դեպքերը, երբ պատճառահետևանքային կապ է ստեղծվում օրգանիզմի և արտաքին միջավայրի միջև: Այսինքն *հոգևոր* կարգի (կատեգորիա) հիմքում ընկած են *կախման* և *պատճառի* կարգերը:

Այսպիսով՝ համընդհանուր լեզվաբանական կադապարի համակարգը կարգերի որոշակի փոխհարաբերությամբ հնարավորություն է տալիս ոչ միայն հասկանալու, այլև ռացիոնալ կերպով նկարագրելու լեզվի կառուցվածքը և լեզվի գործելու մեխանիզմը: Այն ոչ միայն նպաստում է հնարավոր և գոյություն ունեցող բոլոր լեզուների ուսումնասիրմանը, այլև ծառայում է որպես անդրկադապար:

Ամփոփելով պետք է նշել, որ հարստացնելով լեզվաբանական տեսությունը նոր մտքերով, որոնք հանդես են գալիս որպես ամբողջական համակարգեր, փորձելով նպաստել հայ լեզվաբանական մտքի զարգացմանը Ջահուկյանը առաջ քաշեց լեզվաբանական զանազան խնդիրների լուծման ճշգրիտ ուղիներ:

Sargsyan Meri- The gradual development of general linguistic some questions in the works of G. Jahukyan.- The main questions of the linguistic theory always had the actual importance. In this sphere a huge contribution made especially G. Jahukyan. In all linguistic initiatives the

author sought for independent, deep and comprehensive investigation of language material. Therefore Jahukyan wasn't limited to preliminary ideas, during the whole scientific activity developed, enriched and improved the ideas, principles and views.

In this article are touched upon issues of a periodization of linguistic history, language levels and a method of modeling, which in works of the author are presented in gradual development.

Саргсян Мери- Постепенное развитие общелингвистических некоторых вопросов в работах Г. Джаукяна.- Основные вопросы лингвистической теории всегда имели актуальную значимость. В этой сфере огромный вклад внес особенно Г. Джаукян. Во всех лингвистических инициативах автор стремился к самостоятельному, глубокому и всестороннему исследованию языкового материала. Поэтому Джаукян не ограничивался предварительными идеями, в течение целой научной деятельности развил, обогатил и улучшил идеи, принципы и взгляды.

В данной статье затронуты проблемы периодизации лингвистической истории, языковых уровней и метода моделирования, которые в работах автора представлены в постепенном развитии.



## ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Ավագյան Արմենուհի  
(ԳՊՄԻ)

### ՀԱՄԱՆՈՒՆ ԵՎ ՀԱՐԱՆՈՒՆ ԲԱՌԵՐԻ ԸՄԲՈՆՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

XX դ. ոուս և հայ լեզվաբանության առանցքային հարցերից էր համանունների, հետազայում հարանունների ըմբոնումն ու դասակարգումը, դրանց կիրառական արժեքի բացահայտումը: Այսօր համանունների և հարանունների հարցը գրեթե լուծված է: Սակայն այս ամենը առաջին հայացքից, քանի որ իրականում լեզվական այս երկու իրողությունները պահանջում են մանրամասն ուսումնասիրություն:

Համանունների արժևորման հարցում եղել են տարբեր մոտեցումներ. որոշ լեզվաբաններ (Բալլի, Բուլախովսկի, Ռեֆորմատսկի) դրանք ավելորդ բեռ են համարել լեզվի համար՝ պատճառաբանելով, որ վնասում են խոսքի մատչելիությանը, մյուսների (Բուդաղով, Շալունց) կարծիքով՝ համանունների կիրառությամբ խոսքի մատչելիությանը վտանգ չի սպառնում, քանի որ համապատասխան խոսքային միջավայրում հստակորեն բացահայտվում են համանուն բառերի իմաստները. Անհասկանալիությունը վերանում է: Ավելին՝ խոսքը, կախված նպատակից, կարող է ձեռք բերել ոճական, արտահայտչական նորանոր նրբերանգներ (ներքին ոլոր, հանգավորում, բառախաղ, երգիծանք և այլն): Հարանունների ճանաչումը տեղի է ունեցել ավելի ուշ, և այս հարցում կան ոչ միասնական ու հստակ սահմանազատումներ (համահունչ և հարանուն բառերի միջև):

Հայ լեզվաբանության մեջ համանունների լիակատար և ամբողջական քննություն կատարել է Ռ. Շալունցը<sup>1</sup>, ինչպես նաև՝

<sup>1</sup> Տե՛ս Ռ. Շալունց, Համանուն բառերը ժամանակակից հայերենում, *Լեզվի և ոճի*

Ա. Մարգարյանը, Էդ. Աղայանը, Ա. Մուքիասյանը, Ս. Էլոյանը, Ս. Աբրահամյանը և ուրիշներ, իսկ կիրառության առանձնահատկություններին անդրադարձել են Ս. Մելքոնյանը, Ս. Էլոյանը, Լ. Եզեկյանը և այլք:

Հայ լեզվաբանները, հիմնականում օգտվելով ռուս լեզվաբանների առաջադրած մոտեցումներից, ներկայացրել են հայերենում համանունության դրսևորման ձևերը, առանձնահատկությունները, ինչ-որ տեղ հակադրվել են որոշ տեսակետների ու մոտեցումների և սահմանել են համանունության տարբերակման հիմնական չափանիշները, դասակարգման սկզբունքները, որոնք ի մի բերելով՝ կարող ենք ասել, որ համանունները ձևով նույն, բայց իմաստով տարբեր լեզվական իրողություններն են, որոնք կարող են ունենալ ինչպես *բառական (բուն)*, այնպես էլ *քերականական (և՛ բառական, և՛ բառաքերականական)* ու *խառը* արտահայտություն:

Համանունների դասակարգումը կատարվում է մի քանի սկզբունքներով. *ըստ իմաստային հակադրության* (բուն, քերականական, խառը), *ըստ արտասանության* (լրիվ, մասնակի), *ըստ ծագման* (համարմատ և տարարմատ)<sup>1</sup>, դասակարգում են նկատի ունենալով նաև համանունական շարքի բաղադրիչների քանակը, խոսքիմասային արտահայտությունը և այլն: *Բուն* կամ *բառային* համանունները ինքնուրույն բառային միավորներ են և, կախված արտասանությունից, կարող են ունենալ լիակատար կամ մասնակի դրսևորում: *Լիակատար* համանունները քերականական ձևերով (արտասանությամբ) լրիվ համընկնում են բառերի ոչ միայն ուղիղ, այլև քերականական բոլոր ձևերում. Ինչպես *խարան* (խարանելու գործիք)-*խարան* (բույսի անուն), *հարկ* (տուրք)-*հարկ* (շենքի մի հարթության վրա գտնվող մասերի սենյակների ամբողջություն) և այլն, իսկ *մասնակի* համանունները հիմնականում նույնական են ուղիղ ձևերում և տարբերվում

հարցեր, IV, Ե., 1977, էջ 5-75:

<sup>1</sup> Տե՛ս Ռ. Շալունց, նշվ. աշխ., էջ 53-59:



են թեք ձևերում<sup>1</sup>։ Ինչպես՝ *սեր* (կաթի սեր) – *սեր*(*սեր*՝ զգացմունք), *տալ* (ամուսնու քույր) – *տալ* (հանձնել)։ Ռ. Շալունցը մասնակի համանունություն է համարում նաև բառաբերականական համանունները (ինչպես՝ *արի* (քաջ) – *արի* (*զալ բայի եզակի հրամակայանը*), *անցավ*- *անցավ* *և այլն*)<sup>2</sup>։

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համանուն բառերի համար էականն ու բնորոշը հնչման նույնությունն է, նման հնչումով, բայց գրությամբ տարբեր բառերը դասվում են մասնակի համանունների մեջ (*ուղտ-ուխտ*, *աղտ-ախտ*)՝ որպես համահունչ բառեր։ Սակայն հայերենում գոյություն ունի նաև հակառակ երևույթը՝ *համագրությունը* կամ *նույնագրությունը*, երբ բառերն ունեն նույն գրությունը, բայց տարբերվում են արտասանությամբ։ Լեզվաբաններից շատերը սրանք համարում են համանուններ՝ հաշվի առնելով սոսկ ձևը (օրինակ՝ *բազմակնություն-բազմակնություն*)՝ անտեսելով համանունները տարբերակելու համար կարևոր *հնչման նույնության* բացակայությունը։ Նման ձևերը հիմնականում բառակազմական ճանապարհով առաջացած համանուններն են, սակայն սրանց մեջ իրական համանուններ իրոք կան, ինչպես՝ *այլասեր-այլասեր, թթվասեր-թթվասեր, բազմանվագ-բազմանվագ*։ Սրանք անգամ կարելի է բուն (լիակատար) համանուն համարել, քանի որ և՛ հնչմամբ, և՛ գրությամբ նույնական են։ Ռ. Շալունցը նույնագիրների կապակցությամբ նկատում է, որ «*համագրությունները* չի կարելի դասել համանունների թվին, քանի որ այդ բառերն արտասանությամբ չեն համընկնում, այլ համընկնում են գրությամբ ...»։ Քանի որ համանունության պրոբլեմը հենվում է լոկ *համահունչություն* վրա, ուստի համահունչ բառերը պետք է դասվեն համանունների շարքին»<sup>3</sup>։ Ս. Էլոյանը համանուններից զատ առանձին քննու-

<sup>1</sup> Ա. Մարգարյան, *Ժամանակակից հայոց լեզու*, Բառագիտություն, Ե., 1993, էջ 70։

<sup>2</sup> Ռ. Շալունց, նշվ. աշխ., էջ 57։

<sup>3</sup> Ռ. Շալունց, նշվ. աշխ., էջ 12-13։

թյան է ենթարկում համագիր և համահունչ բառերը: Այսպիսով՝ հարկ է, որ հստակեցվի համանունության սահմանման և սահմանազատման պահանջը, որոշվի համագիր բառերի տեղը: Մեր կարծիքով, եթե դիտարկում ենք սույլ համանունության պարզ ձևակերպումը, ըստ որի՝ ձևով նույն, բայց իմաստով տարբեր բառերը համանուններ են: Համագիրները ևս պետք է դասվեն համանունների շարքին, միայն թե այլ հարց կարող է առաջանալ. սրանք լիակատար, թե՞ մասնակի համանունություն են: Ճիշտ է, համագիրները ձևով լիարժեք համընկնում են, բայց հնչման տարբերությունն ակնհայտ է, այդ իսկ պատճառով սրանք կարելի է համարել *մասնակի համանուններ* (ինչպես և համահունչները): Առաջին հայացքից պարզունակ թվացող այս հարցը իրականում շատ կարևոր է և հստակեցման ու միօրինականացման կարիք ունի, որպեսզի հեշտացվի լեզվական նյութի ուսումնասիրումը, մատուցումը, յուրացումը և կիրառությունը:

*Հարանունների* տարբերակումն ու ըմբռնումը ավելի ուշ է տեղի ունեցել. անգամ շատ լեզվաբաններ դրանք որպես առանձին տեսակ չեն համարել և համանուն օրինակները դիտել են կա՛մ համանունների դրսևորում, կա՛մ *համահունչ* բառեր (ինչպես՝ *Գող* սիրտը *դող*): Նման մոտեցումը բարդացնում է ոչ միայն լեզվական նյութի ընկալումը (նաև՝ ուսուցումը), ուստի անհրաժեշտ է հստակ սահմանազատել համանունությունը հարանունությունից (ինչն արդեն գրեթե ամբողջությամբ արված է), տարանջատել համանունությունը, համահունչությունը և հարանունությունը, հստակեցնել համահունչ ու համագիր բառերի տեղն ու դերը, համանունության կամ հարանունության հետ դրանց աղերսները կամ առնչությունները:

Ռուս լեզվաբանական գրականության մեջ հարանուններն ըմբռնվում են երկու առումով՝ նեղ ու լայն: Առաջին դեպքում հարանուն են կոչվում համարմատ և նմանահունչ այն բառերը, որոնց իմաստի մերձավորությունը երբեմն սխալ գործածության ու զուգորդությունների տեղիք է տալիս: Լայն առումով հարանուններ են դիտվում առհասարակ նման արտասանություն ունե-



ցող կամ նմանահունչ բառերը<sup>1</sup>: Հարանունների համար կարևոր չափանիշ է տալիս Ա. Մարգարյանը՝ նշելով, որ «իբրև ձևով շատ մոտ կամ նման, իմաստով հարաբերակից բառեր, հարանունները հիմնականում հատկանշվում են համարմատ կազմությամբ ... նրանք խառնվում են նույն արմատի վրա և իրարից տարբերվում են բառակազմական ձևայիններով կամ հնչյունական ձևափոխություններով. օրինակ՝ *գործոն-գործուն, կտրիչ-կտրիճ, կարկաչուն-կարկաչուն*»<sup>2</sup>:

Ըստ էության ճիշտ է Ս. Աբրահամյանի մոտեցումը, որը հարանուններ է համարում առհասարակ նման հնչյունակազմ ունեցող բառերը՝ դրանք դասակարգելով երկու խմբով՝ ձևային և ձևաիմաստային<sup>3</sup>: Մա հնարավորություն է տալիս խուսափել այն շփոթից, որ ստեղծվում է համանուն-համահունչ-հարանուն բառերը տարբերակելիս: Այս տեսակետին կողմ է նաև Ս. Էլոյանը, որը, զարգացնելով Ս. Աբրահամյանի տեսակետը, գրում է, որ հարանունների մեջ դիտարկում է առհասարակ *նման արտասանություն ունեցող* և իմաստով տարբեր բոլոր բառերը՝ լինեն դրանք ընդհանուր բաղադրիչ ունեցող (հմմտ. *ծանրաքաշ-ծանրաքարշ, շարային-շարքային* և այլն), թե ուղղակի նմանահունչ տարարմատ բառեր (հմմտ. *հարկ-հարգ, հառաչ-առաջ, վարք-վարկ, վանք-վանկ* (վերջինը Ս. Մելքոնյանը համարում է համանուն)<sup>4</sup>): Սակայն Էլոյանը ևս ուղղագիծ չէ իր արտահայտած կարծիքի մեջ, քանի որ վերոշարադրյալ տեսակետն ունենալով հանդերձ՝ համահունչ բառերի մեջ դիտում է նմանատիպ օրինակներ՝ *հորդ-հորթ, շտապ-շտաբ, հարդ-հարթ*<sup>5</sup>, որոնք ավելի ճիշտ կլինի համարել հարանուն, քանի որ տվյալ բառերի դեպքում գոնե համահունչության մասին խոսք լինել չի կարող:

<sup>1</sup> Ս. Էլոյան, *Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն*, Ե., 1989, էջ 100:

<sup>2</sup> Ա. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 122:

<sup>3</sup> Ս. Աբրահամյան, *Ժամանակակից գրական հայերեն*, Ե., 1982, էջ 65-66:

<sup>4</sup> Ս. Մելքոնյան, *Անհարկներ հայոց լեզվի ոճաբանության*, Ե., 1984, էջ 101:

<sup>5</sup> Ս. Էլոյան, նշվ. աշխ., էջ 99:

Մեկ այլ ծայրահեղ մոտեցման պատճառ է, գուցե, անվանման հարցը, երբ համահունչ (նույնահունչ) բառերը համանուններից դուրս իրողություն են ներկայացվում և քննվում իբրև «հնչյունական կազմով նկատելիորեն տարբեր իրարից, բայց համատեղ գործածության շնորհիվ սերտորեն իրար զուգորդվող»<sup>1</sup> իրողություններ, որոնք հիմնականում իրարից մեկ հնչյունով են տարբերվում: Օրինակ՝ *ցյուղ-հյուղ, շող-ցող, լաց-բաց, փուշ-նուշ, չարիք-կարիք*: Այս դեպքում հակասություն կառաջանա. Ինչպե՞ս վարվել մեր կողմից պայմանականորեն մասնակի համանունության ենթատեսակ համարված համահունչ բառերի (*ախտ-աղտ, անող-անոթ*) հետ: Նման իրողությունները, որոնք Ս. Մելքոնյանն անվանում է համահունչ և նույնահունչ բառեր, ըստ էության, այսօր լայն ըմբռնման պարագայում, ինչպես նաև հետևելով Ս. Աբրահամյանին, կամ պետք է համարել հարանուններ, որը ճիշտ է, կամ ոճական նպատակով ստեղծված նույնահունչության դրսևորում, բայց ոչ լեզվաբանորեն որպես համահունչ սահմանված ձևեր: Նման իրողությունները Ա. Մարգարյանը անվանում է *հարանվանումներ* կամ *ձևային հարանուններ*, որոնք «կեղծ կամ կարծեցյալ հարանուններ են»<sup>2</sup>, իսկ այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ *անձնագիր-անցագիր, հնաբան-հնէաբան* և այլն, նա համարում է *գուգակից բառեր*, որոնք միջին տեղ են գրավում բուն հարանունների և հարանվանումների միջև, ինչը սակայն արհեստական բաժանում է: Ս. Աբրահամյանի տեսակետին հակադրվում է Ա. Մարգարյանը՝ գտնելով, որ հարանունների ըմբռնման հարցում ճիշտը *նեղ* ըմբռնումն է, ըստ որի ոչ միայն ձևով մոտ կամ նման, այլև իմաստապես այս կամ այն չափով հարաբերակցվող, առնչակցվող բառերն են հարանուններ համարվում<sup>3</sup>:

Ի մի բերելով ասվածը՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ համահունչ և համագիր բառերը պետք է համարել մաս-

<sup>1</sup> Ս. Մելքոնյան, նշվ. աշխ., էջ 63:

<sup>2</sup> Տե՛ս Ա. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 121:

<sup>3</sup> Ա. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 119:



նակի համանունություն, իսկ հարանունների հարցում նախապատվությունը տալ ռուս լեզվաբանությունից սկզբնավորված *լայն* ըմբռնմանը, որի դեպքում հարանուն են դիտվում առհասարակ նման արտասանություն ունեցող կամ նմանահունչ բառերը (*տեղ-դեղ, ուշ-հուշ* և այլն): Իհարկե, այս դեպքում էլ գուցե կհանգենք ծայրահեղ մոտեցման, երբ ամեն նմանատիպ, բայց իմաստով ոչ մի աղերս չունեցող լեզվական իրողություն կհամարվի հարանուն (ինչպես՝ *վարդ-մարդ, աղոտ-աղոթք, մեզ-մեկ և այլն*):

Կարևոր է համանունների և հարանունների կիրառության և ռճական արժեքի հարցը:

Համանունները մեծ դեր ունեն բառախաղի, հանգավորման, երգիծանքի, ներքին ուժի ապահովման գործում:

Համանունների հիմնական դերը *բառախաղի* կերտումն է, ինչը միաժամանակ կարող է նպաստել և՛ հանգավորմանը, և՛ խոսքի բազմազանությանը, ու կապ չունի՝ բառային, թե՞ քերականական համանունություն է: Այսպես՝ Լոդանում են *Սևանում*, Ջովանում են, *սևանում*, պատկում տաքուկ ավազին, *Սևանում են Սևանում* ([www.heqiat.am](http://www.heqiat.am)): Արձագանքդ խոր ձորերի մեջ, Անդունդների մեջ թող *որոտան*, Շառաչիր, կանչիր, սլացիր անվերջ, Ա՛խ, արար-վարար իմ *Որոտան* (ՀՄ, 1, էջ 7):

Համանունությունը կարող է դրսևորվել բառի և բառակապակցության միջև, սակայն ուշագրավ իրողություն է, երբ հանգավորման և համահնչյունության ապահովման նպատակով հեղինակները համանունություն (ձևական) են ստեղծում *բառի և բաղադրյալ բառի* (կամ բաղադրյալ հատուկ անվան բաղադրիչի) արմատների միջոցով՝ ապահովելով խոսքի սահունությունն ու բազմազանությունը: Օրինակ՝ Կարոտ աչքս կառնի իմ հայրենի *տանը*, Ինչպես ամեն անգամ նորից Ինձ ընդառաջ կգա Որոտանը (ՀՄ, 1, էջ 8): Այնտեղ է հիմա հոգիս թափառում, Ուր գերեզմանն է քաջ Դավիթ *Բեկի*, Մահը մարդուն չի ահաբեկի .... (ՀՄ, 2, էջ 41): Այս վերամբարձ աշխարհին, ... Անբանի *բարձ* աշխարհին Ինչ ասեմ, որ հասկանա (ՀՄ, 2, էջ 29): Եթե առաջին երկու օրինակում

նման հետաքրքիր միջոցով ապահովվել է նաև հանգավորումը, ապա վերջին օրինակում խոսքի մեջ հանդես գալով՝ այն օժտել է բազմազանությամբ, ներքին ռիթմով: Ժողովրդաշունչ գրողների, բանաստեղծների խոսքի բովանդակայնությունն ապահովվում է խոսակցական և գրական բառերի միջոցով կերտված համանունության շնորհիվ: Այսպես՝ *Ծուռ* պատանու Ոտքերի տակ Ծմակն ի վեր *ծուռ* մի կածան ... (ՀՄ, 2, էջ 30):

Ոճագիտական ուսումնասիրություններում սովորաբար առավել գնահատված է *հարանուն* բառերի դերը: Ինչ խոսք, հարանունները կարևոր դեր ունեն հանգավորման, բառախաղի, խոսքի երաժշտականության ու ելևէջի, բազմազանության ու արտահայտչականության ապահովման գործում, հատկապես, եթե հարանունների հարցին մոտենում ենք լայն ըմբռնմամբ, քանի որ ձևային հարանունների գործածություններն անչափ շատ են ոչ միայն չափածոյում, այլև արձակում, իսկ XX դարի հայ պոեզիայի ներկայացուցիչներից շատերը (Հ. Սահյան, Վ. Դավթյան և ուրիշներ) իրենց խոսքի բովանդակայնությունն ու բազմազանությունն ապահովել են լեզվական այս իրողությունների ճիշտ, հմուտ կիրառությամբ: Հարանունները խոսքում կարող են հանդես գալ տարբեր դիրքերում (սկզբում, մեջտեղում և վերջում), սակայն չափածո խոսքում սրանք հիմնականում *հանգաբառեր* են: Այսպես՝ Գարնանը՝ գիծ, աշնանը՝ *հեզ*, Ափերն ի վար եղինք ու *սեզ* ... Թփե՛ր, թփե՛ր, թփե՛ր *վարդի* Ու շապիկը փոխած *բարդի* (ՀՄ, 1, էջ 92): ... Գարնան *ցողով*, Սիրո *դողով*, Եվ անաքատ, Եվ անաղաքտ, ... Երկուսն էլ նուրբ, Մեկը՝ *ծլող*, Բուրմունք սփռող, Մեկը *ծնող* Պտուղ տվող Ու սեր բերող (Անրի): Կամ գուցե, դա դարեր առաջ Ինձնից *գատված* Իմ իսկ դողանջն է, որ ետ է դառնում Մաքուր ու *գտված* (ՎԴ, 1, էջ 17): Մեկ ցած իջավ, մեկ ելավ *վեր*, Ճչաց տխուր ու *կարեվեր*, Եվ տեսնելով, որ արդեն *բուն*, պատի խորշում դրել է *բույն*, Փետուրները քամուն *տված*, Մեր տան վրա տխուր *ծվաց* (ՎԴ, 1, էջ 30):

Մեծ է հարանունների դերը *բառախաղի*, *շուտասելունների* կերտման գործում. Ծանոթ աստղերը, ծանոթ *լուսինը*, Որ ամեն



գիշեր մեր տան *ուսին* էր (ՎԴ, 1, էջ 27): Ձեռ ես առնում *մեծավորին*, Չես խնայում *մերձավորին* (ՀՄ, 1, էջ 45): Ծալվեծավալ լեռները *ծրարել*, Ամեն մի քարափի կոպի տակ, Ծալվել է երկինքը կապուտակ, Մի ծվեն երկինք է *ծվարել* (ՀՄ, 1, էջ 44): Հարանուններով ապահովվում է խոսքի ներքին ռիթմը: Այսպես՝ Կեսորվա *տապով*, Արաքսի *ափով*, Լայնքով, երկայնքով ու կյանքով մեկ ... (ՀՄ, 1, էջ 45):

Հարանուններն անփոխարինելի են խոսքի *երաժշտականության*, *բազմազանության* ապահովման գործում. Մի տարազիր հոգու բաղձանք, Մի ծիծեռնակ ու մի *կռունկ*, Պանդխտության ճամփաներում, Հազար քարի բախված *կրունկ*, Որդեկորույս մայրերի *ողբ*, *Որբերի* սիրտ, *վերքերի* մեջ, - Այդպիսին է Հայաստանը մեր հինավուրց *երգերի* մեջ (ՀՄ, 1, էջ 36):

*Բառախաղի, խոսքի բովանդակայնության* ապահովման հարցում ևս լեզվական այս իրողությունները անփոխարինելի են: Այսպես՝ Նորոգված ու նոր դպրության, Մի *սահանք* է եղել աշխարհում, Եվ գուցե երբևէ կհիշես, Որ այդ սահանքում նաև Մի *Սահյան* է եղել աշխարհում (ՀՄ, 1, էջ 69): Հարանունների կիրառության արժևորման առումով ուշագրավ է Լ. Եզեկյանի այն միտքը, որ սրանք խոսքին կարող են հաղորդել *հակադրություն*՝ արտահայտելով միաժամանակ *երգիծական երանգավորում*. օրինակ՝ Քո *տերությունը՝ անտերությունը*, *Անտուն* լինելն է եղել քո *տունը*, Քո *պետությունը՝ անջրպետություն*, *Հանրապետությունը՝ համրապետություն* (ԳԷ): Բերված օրինակը, սակայն, կարելի է ներկայացնել որպես հակադրության ու պարադոքսի լավագույն դրսևորում, ինչը հարանունության հետ որևէ կապ չունի (ավելի շուտ, այստեղ առկա են հականիշներ և համահունչ ձևեր, որոնցով ոչ միայն հակադրությունն է ապահովվել, այլև խոսքին հաղորդվել է ներքին ռիթմ ու ելևէջ): Այդպես էլ կարող ենք բերել հետևյալ օրինակը՝ Եվ նրանց միջև՝ *անսահման* Մի *սահման* է եղել աշխարհում, Նորոգված ու նոր դպրության, Մի սահանք է եղել աշխարհում (ՀՄ, 1, էջ 69):

Ինչպես համանունությունը, այնպես էլ հարանունությունը

կարող է դրսևորվել *բառի և բառակապակցության միջև*՝ ապահովելով բանաստեղծական տողի հանգն ու բովանդակայնությունը: Այսպես՝ Ինձ կանչում է երկիրն այն *անձրևոտ*, Ուր մի գիշերվա մեջ մարդահասակ, Մի եղեգ է աճում *անձավի մոտ* (ՀՄ, 1, էջ 20): Ալիքները *թափով զալիս*, Վարսերն իրենց *թափ են տալիս* (ՀՄ, 2, էջ 22): Գուցե լեռներում վարգում է մի որբ, Տխուր հովա*տակ* նծույզն է, Եվ կապույտի մեջ փշրվում է խուլ, Վրնջոցը *տաք* (ՎԴ, 1, էջ 17):

Այսպիսով՝ լեզվի արդի փուլում ևս շատ կարևոր է համանուն և հարանուն բառերի տարբերակման, դրանց սահմանազատման ու կիրառության առանձնահատկություններին վերաբերող հարցերի բացահայտումը, քանի որ լեզվական այս իրողությունները կարևոր դեր ունեն խոսքում և ուսումնասիրության հարուստ նյութ են տալիս իմաստաբանությամբ և ռճաբանությամբ զբաղվողներին:

#### ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՎԴ- Վահագն Դավթյան:
2. ՀԹ- Հովհաննես Թումանյան:
3. ՀՄ- Համո Սահյան:
4. ԳԷ- Գևորգ Էմին:

Avagyan Armenuhi- On the functional value of homonyms and homographs.- Departing from the viewpoints on the identification of homonyms and, later on homographs, as well as the divergence and ambiguity of definitions (on homophones and homographs) the present paper highlights the problems of perception, classification of homonyms, their differentiation from homographs and their functional value. The last problem has been set in line with the data found in the Armenian literature (especially poetry of XX century).

Авагян Арменуи- Вокруг вопроса о восприятии и прикладной ценности омонимичных и паронимичных слов.- Имея в виду бытующую



щие в лингвистике мнения и точки зрения о признании омонимов, восприятии паронимов, а также отсутствие по этому вопросу единых и четких разграничений (между паронимами и созвучными словами), в данной статье исследованы вопросы восприятия, классификации омонимии, дифференциации омонимии и паронимии, задачи выявления их прикладной роли. Последний вопрос представлен, принимая в основу данные, предоставленные армянской литературой (в особенности поэзией XX века).

ՀԱՅՈՑ ՏՈՀՄԱՆՈՒՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴԱՇՏԸ  
ԸՍՏ Ն. ԱՂՈՆՑԻ «ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՈՒՍՏԻՆԻԱՆՈՒՄ  
ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ» ԳՐՔԻ

Տոհմական կեցությունը յուրաքանչյուր ժողովրդի պատմության նախնական անհրաժեշտ փուլն է: Հայաստանն իր էթնիկական և աշխարհագրական պայմաններով լավագույն հանգրվաններից էր այդպիսի կացութաձևի համար: Ն. Աղոնցի պատկերավոր բնութագրմամբ՝ «Գտնվելով մեծ ժողովուրդների տեղաշարժերի խաչմերուկում՝ Հայաստանը բռնում է և իր մեջ ներծծում բազմաթիվ էթնիկական հոսանքներ և ցեղային շիթեր»<sup>1</sup>:

Ըստ հայագետի՝ հայ ազգը կազմավորվել է ոչ միայն տարբեր ցեղային, այլև տարբեր էթնիկական տարրերից, որոնց հետքերը պահպանվել են մեր նախարարական տոհմերի անուններում: Գիտնականը քննում է Մ. Խորենացու «Հայոց պատմություն»-ը ցույց տալով, որ այն նախարարության պատմությունը շարադրելու առաջին փորձն է, ապա այն համեմատում է հետազոտողների ուշադրությունից սպրդած, սակայն, այնպիսի կարևոր պատմական փաստաթղթերի հետ, որպիսիք են Գահնամակներն ու Ջորանամակները:

Գահնամակները նախարարական տոհմերի հաշվեգրումը ներկայացնող փաստաթղթեր են՝ ըստ նրանց զբաղեցրած դիրքի, իսկ Ջորանամակները նախարարական տների ցանկերն են՝ ըստ իրենց զինուժի. նախարարական ամբողջ զորքը բաժանված է եղել չորս թևերի կամ դռների, որոնք երկիրը պիտի պաշտպանեին չորս կողմերից:

Ն. Աղոնցի համոզմամբ՝ քերթողահայրը ծանոթ է եղել ոչ միայն Գահնամակին, այլև Ջորանամակին: Նա մեջբերում է

<sup>1</sup>Ն. Աղոնց, *Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում*, Ե., 1987, էջ 435-436:



պատմահոր՝ նախարարական տոհմերի ցանկը՝ ամփոփված Բ գրքի Է և Ը գլուխներում:

Ն. Ադոնցն այս երկում կենտրոնանում է միայն մի քանի հոչակված տոհմերի անունների ստուգաբանության վրա: «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» երկն առաջնահերթ պատմագիտական արժեք ունի, հետո միայն բանասիրական, ուստի մենք կփորձենք առավել ամբողջացնել նրա ընձեռած լեզվաբանական նյութը:

Ն. Ադոնցը նախ քննում է տոհմական ժամանակաշրջանի ծնունդ մի քանի կարևոր հասկացությունների անուններ՝ malxaz, aspet, tēr, \*mamak՝ վերականգնելով դրանց նախնական նշանակությունը: Այս չորս եզրույթները, ըստ նրա, սկզբում նշանակում էին իշխանություն կրող անձնավորություն երկրի տարբեր հատվածներում: Malxaz-ը Խորխոռունի իշխանների տոհմական տիտղոսն էր, որ նշանակում էր ընդհանրապես «տիրող, իշխան, թագավոր», և ծագում է ասորական malxazu-ից կամ արաբական melik-ից: Նրան համապատասխանող տիրույթը ավելի փոքր միավորով, ըստ Ն. Ադոնցի, աղխ-alx-ն է՝ \*haxl-ից, որ նույն ծագումն ունի, ինչ որ վրացերեն saxli-տուն-ը: Այս նույն արմատից է աղախին-ը՝ alaxin-ը, այն անձը, որ սկզբնապես պատկանում էր alx-ին, հետագայում՝ սպասուհի:

Մալխազ-ի Խորխոռունիների տոհմական տիտղոս լինելու մասին վկայություն կա նաև «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան»-ում, որտեղ նշված է, որ մաղխազը Արշակունի թագավորների թիկնապահ զորքի պետն է, որ ժառանգաբար ընտրվում էր Խորխոռունի տոհմից<sup>1</sup>, մինչդեռ «Առձեռն բառարան»-ում «մալխազ»-ից հղում է տրված «մաղխազ»-ին և բացատրության մեջ գրված է, որ նշանակում է թագավորի պահպանների զլխավորը, բայց հետաքրքրականն այն է, որ հետայսու հղում է տրված նաև «մախազ»-ին՝ իբրև ցոփի ու անա-

<sup>1</sup> Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Ե., 1974, հ. 3, էջ 468:

ռակի<sup>1</sup>: Կարծում ենք՝ վերջին հղումը պատահական չէ, հիշենք թեկուզ միայն Սուրեն Խորխոռունուն, որ 380-ականներին բյուզանդական մասի թագավոր Արշակ Գ-ից հափշտակեց նրա ունեցվածքն ու անցավ պարսկական մասի թագավոր Խոսրով Դ-ի կողմը: Այսուհանդերձ, Խորխոռունիների տոհմը միայն բացասական կերպարներով չի ներկայանում, ավելի մեծաթիվ են հակառակ բևեռը ներկայացնողները, օրինակ Խորեն Խորխոռունին, ում հայ եկեղեցին դասել է սրբերի շարքը և այլք: Անշուշտ, հնչյունական սերտությունն է առաջին հերթին հիմք դարձել մալխազն (մաղխազ) ու մախազը աղերսելու:

Մյուս տերմինը՝ *aspet*-ասպետ, նույնպես տոհմական տիտղոս է՝ այս անգամ Բագրատունյաց իշխաններին պատկանող: Այս բառը, Ն. Ադոնցի համոզմամբ, անհիմն կերպով տարբեր մեկնություններ է ստանում: Իրականում, ըստ նրա, այն կազմված է *as* և *pet*-ից, որի երկրորդ մասը նշանակում է *զույս*, իսկ առաջինը փորձ է արվում համեմատելու նախարարական կենցաղից վերցրած մի այլ և ոչ պակաս կարևոր տերմինի՝ *sepuh*՝ սեպուհ-ի առաջին վանկի հետ: *Սեպուհ* բառի ծագումը, Ադոնցի փաստմամբ, ճշտված է, այն ծագում է ավելի հին *se-puhr* ձևից, իրանական *սիթաթա*-ն է, որտեղ *սիթա*՝ *պուհ*, նշանակում է *որդի*, իսկ *սիթ*-ը տոհմական կազմակերպության օղակներից մեկն է, հետևաբար *se*-ն *սիթ*-ի կրճատ ձևն է:

Գիտնականի վկայմամբ *սեպուհ* տերմինը հայ գրականության մեջ պահպանվել է նաև *aspurak*՝ Ասպուր-ակ ձևով: Նախաշեշտային ու-ի գոյությունը ցույց է տալիս, որ *ու*-ն եղել է երկու բաղաձայններից առաջ, այսինքն՝ բառը հնչում է որպես *aspuhrak*: Մասնիկի գեղջումով մնացել է *spuhr*, որն անտարակույս կարելի է համեմատել *sepuh*-ի հետ՝ վերջինիս հնագույն *sepuhr* ձևով: *-as* և *-se* սկզբնավանկերի նույնությունը, ըստ Ադոնցի, անկասկած է:

Ինչ վերաբերում է *ասպետ*-ին, ապա Հ. Աճառյանը նույնպես

<sup>1</sup> Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1865, էջ 536:



հակված է այն իրանական փոխառություն դիտելուն, սակայն՝ առաջին բաղադրիչի այլ մեկնությամբ: Ըստ նրա՝ \*aspapati՝ «ձիատեր» բառը (aspa՝ ձի և pati՝ տեր, պետ) լիովին բացահայտում է *ասպետ*-ի կազմությունը: Հին պարսկերեն նշյալ բառը համառոտվելով դարձել է aspati<sup>1</sup>:

Հետաքրքիր է, որ *Ասպուրակ*-ը գործածվում է նաև սկզբնատառով՝ *Վասպուրակ*, և ընդհակառակն՝ ոչ հայկական հուշարձաններում Վասպուրական նահանգի անունը, որ հանգում է միննույն բառին, մեջքերվում է առանց սկզբնահնչյունի՝ Ἀσπουρ<ακ<αν: Aspur-ի կողքին vaspur ձևի գոյությունն ավելի ակնբախ է դարձնում այդ երկուսի՝ viθapuθra-ից ծագումը: Ըստ Ն. Ադոնցի՝ հնչյունական մի երևույթի համաձայն՝ բառասկզբի *ս*-ն խորթ է հայոց լեզվի հնչյունական համակարգին, իրանական viθapuθra-ն պետք է որ հայերին անցնէր isapuhr, asapuhr ձևով կամ անշեշտ *ա*-ի զեղչումով՝ ispuhr, aspuhr տարբերակով:

Aspuhr-ի և sepuhr-ի կամ as-ի և se-ի նույնությունը պարզելուց հետո Ն. Ադոնցը հստակեցնում է նաև aspet տերմինի ստուգաբանությունը: Aspet-ը ծագում է viθa-paxti-ից այնպես, ինչպես aspur-ը՝ viθapuθra-ից, այլ կերպ՝ aspet, ըստ նրա, նշանակում է viθ-ի կամ «տոհմի գլուխ, պետ», իսկ sepuh՝ «տոհմի որդի»: *Վսեմ*, *վսամ* բառը, որի լիարժեք ձևն է *վսեամ*, Ադոնցի խորին համոզմամբ, իրանական \*viθya-ma-ն է և վերաբերում է viθ-ին այնպես, ինչպես zantuma-ն՝ zantu-ին: Նրա սկզբնական նշանակությունն է՝ «տոհմի անդամ, տոհմիկ», հետագայում՝ «մեծատոհմիկ, վեհ»: Հավանաբար նաև վէս-հպարտ=viθya, \*vaxiaviθ-ից՝ -ya մասնիկով: Գիտնականի համոզմամբ՝ *վսեմ*-ի նման նաև *վէս*-ը սկզբնապես ցույց էր տալիս տոհմին պատկանելը:

Կարծում ենք՝ առաջին իսկ հայացքից *ասպետ-սեպուհ* եզրերի թե՛ հնչյունական, թե՛ իմաստային ընդհանրությունը համոզիչ չէ, վերջինը միզուցե և հնարավոր է ինչ-որ տեղ իշխանական ծագմամբ պայմանավորված, սակայն իրանական միննույն

<sup>1</sup> Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, Ե., 1926, հ. 1, էջ 274:

viθapυθpa-ից բխեցնել երկու տարբեր բառերը, որոնք գոնե իմաստաբանական միևնույն դաշտում չեն, խիստ կասկածելի է: Բնչ վերաբերում է ձևային կամ հնչյունական կադապարին, ապա եթե քսθpa-պետ սերտությունը թույլ է տալիս ասպետ-ը բխեցնել viθapυθpa-ից, ապա նույնը չենք կարող ասել սեպուհ-ի մասին. քսθpa-պուհ անցումը արժանահավատ չէ: Հապացույց ասվածի՝ Հ. Աճառյանի՝ ասպետ-ի վերոհիշյալ, մեր կարծիքով, ճշգրիտ ստուգաբանությունը:

*Տէր-ը Ն.* Ադոնցն իրավամբ ածանցված է համարում *տի-ից* *և այր-ից*: Երկրորդ մասը հայոց լեզվում նշանակում է *մարդ, այր*, իսկ *տի-ի* իմաստը, ըստ նրա, գրեթե անըմբռնելի է, ավելին՝ պարզ չէ, թե ինչ առնչություն ունի *այր* և *կին* բառերի հետ, որոշի՞չ է նրանց համար, թե՞ հակառակը՝ նրանք են իր համար որոշիչ: Ըստ կազմության այս բառերը Ադոնցին հիշեցնում են վրացական *mama-upali* և *deda-upali*: Վրացական *upali*-ին և՛ իմաստով, և՛ ծագումնաբանությամբ համապատասխանում է սեմական *πατρι-տիրակալ* բառը: Սեմիտները այսպես կոչում էին իրենց տոհմերը հովանավորող աստվածներին: Այս բառը, որ սեմիտների համար «*աստվածություն, երկնքի տիրակալ*» էր նշանակում, վրացիները փոխանցել են թագավորին՝ որպես երկրի տիրակալի: Ն. Ադոնցի կարծիքով՝ ըստ երևույթին, նման մի բան էլ պատահել է նաև հայկական *տի-ի* հետ: Հնչյունական կազմով և իմաստով՝ հայերենի *տի-ի* ծագումը, ըստ գիտնականի, կարելի է բխեցնել հնդեվրոպական *di-* բառարմատից: Նրանից ածանցված բառերը հանգում են երկու հիմքի՝ *di* և *div*: Երկուսն էլ ընդգրկում են լույսի-ցերեկվա և երկնքի-աստծո հասկացությունները: Հայերենում կան երկու բառահիմքերն էլ՝ և՛ տիվ-ցերեկ, և՛ տի-ք հոգն. ձևով. *tant*-տարիք, այսինքն օրեր:

*Տի-ն* ի սկզբանե, ինչպես լատինական *deus*-ը, Ադոնցի վկայմամբ, արտահայտում էր բարձրագույն էակի՝ Աստծո գաղափարը, իսկ հետո սկսեց գործածվել նաև «*թագավոր*» և առհասարակ «*երկրային տեր*» նշանակությամբ, այսինքն՝ նա էլ արժանացավ այն բախտին, ինչ որ վրացական *upali*-ն: Ն. Ադոնցը կարծում է,



որ *տի*-ի այս վերջին նշանակությունը փոքր-ինչ նսեմացնելու համար սկսեցին նրան կցել *այր մարդ* բառը տի-այր տեր: Հետաքրքրական է այն, որ այդ գործընթացը կրկնվեց: Հետագայում, երբ *տի-այր* բառի գործածությունից դուրս եկավ *տ*-ն, և սկսեց հավասարապես նշանակել թե՛ երկրի և թե՛ երկնքի տեր, ապա հիշյալ երկու գաղափարները տարբերելու համար կրկին հանդես եկավ նույն *այր* բառը, և կազմվեց *տիր-այր* բառը, որ գրականության մեջ հայտնի է որպես հատուկ անուն, բայց անկասկած է, ըստ գիտնականի, որ սկզբում այն գործածվել է առհասարակ իշխողի, տիրողի իմաստով:

Ն. Ադոնցի այս ստուգաբանությունը խիստ ուշագրավ է այն առումով, որ *տի*-ն հայտնի էր մեզ որպես ածական՝ «մեծ», որի մասին վկայում է Հ. Աճառյանը՝ այդու, սակայն, հավելելով, որ ծագումն անորոշ է: Նա նշում է նաև Պետերմանի այն չափազանց հետաքրքիր ու կարևոր վարկածը, թե *տի*-ն հավասարազոր է ժխտական *տ*-ին՝ դրանով իսկ նշանակելով «ոչ այր, այլ իշխանավոր»:

«Տեր» բառի իմաստը՝ «իշխող, պետ» և այլն, արդեն համոզիչ փաստարկ է ըստ Ադոնցի, որ *տեր*-ը, այսպես ասած, աստվածային այրն է, իսկ Պետերմանի վարկածը, որքան էլ գայթակղիչ, այդուհանդերձ, խոցելի է, և դա ոչ թե *տի*-ի *տ* ժխտականին հավասարագործության, այլ *տեր* բառի մեկնության պատճառով՝ «ոչ այր, այլ իշխանավոր»: Բայց եթե ընդունենք, որ *իշխանավոր* ասելով նա նկատի ունի երկրային իշխանությունը և երկրային տիրոջը հակադրում է երկնային այր-ին, այդ դեպքում պարզ կլինի նաև այդ մեկնությունը:

Mamak- *մամակ*-ը Ադոնցի՝ վերը քննած լեզվական վերապրուկների շարքին է դասվում: Պատմական գրականության մեջ այն հանդիպում է որպես Մամիկոնյան տոհմին հատուկ անձնանուն: Սկզբում այն իշխանական տոհմերից մեկի տիտղոսն էր, հետագայում, քննարկված երկու տիտղոսների նման, դարձավ տոհմական անձնանուն, *մամակ* կամ *մամիկ*-ը դարձավ *Մամիկոն-եան*, ինչպես *ասպետ*-ից՝ *Ասպետունի* կամ *մաղխագ*-ից

*Մաղխագունի*<sup>1</sup>: Ն. Ադոնցի կարծիքով՝ mama-k-ը ոչ այլ ինչ է, քան իբերական mama, *հայր* բառի հայացված ձևը. Այս բառը նույնպես գալիս է տոհմական ժամանակաշրջանից՝ նշանակելով *տոհմի հայր*, *տոհմապետ* և հոմանիշ է վրացական mama-saxlisi-ին:

Ուշագրավ է, որ հայկական ավանդության համաձայն էլ՝ Մամիկոնյանները ծագում են *Մամիկ*-ից: Այս ստուգաբանությունը հաստատվում է ավանդությամբ և նոր լույս սփռում իշխանական հայտնի տան ծագման մասին եղած առասպելի վրա:

Ըստ հայկական ավանդությունների՝ Մամիկոնյանները ծագում են «Ճեներից»: Փ. Բուզանդի երկում Մամիկոնյաններն իրենց մասին ասում են, թե ծագում են Ճենաց աշխարհի թագավորներից: Ըստ Ադոնցի՝ Բուզանդի խոսքերից չի երևում, թե ինչ է նշանակում «աշխարհին Ճենաց»: Անանունի հաղորդածից ակնհայտ է, որ դրանով պիտի հասկանալ Պարսկաստանից արևելք Բալխից այն կողմն ընկած երկրներից մեկը, այսինքն՝ Չինաստանը: Այս գրույցի նպատակը, ըստ Ադոնցի, ներկայացնելն է, թե ինչպես Մամիկոնյանները Չինաստանից եկան և հաստատվեցին Տայքում՝ իրենց տոհմական կալվածքում: Ն. Ադոնցի կարծիքով՝ ավանդության մեջ հիշված Ճենաց աշխարհի մեկնաբանության հարցում թյուրիմացություն կա: Նախնական ավանդության մեջ *Ճենք* ասելով հասկանում էին ոչ թե հեռավոր չինացիներին, այլ հարևան ծաներին, որոնք ապրում էին Մամիկոնյանների տոհմական կալվածքից՝ Տայքից ոչ հեռու: Մամիկոնյանների տոհմական հատկությունները՝ դյուրաբորբոք խառնվածքը և արտասովոր քաջությունը, ցույց են տալիս, որ նրանք ավելի շուտ ազգակից են դեռևս Զ դարում իրենց ռազմատենչությամբ աչքի ընկնող ծաներին, քան հեզաբարո չինացիներին:

Հ. Աճառյանը նույնպես Մամակ անվանն անդրադառնում է՝ միայն վկայությունների տեսքով սակայն՝ նշելով, որ մի դեպքում այն արական անուն է, մյուս դեպքում, թերևս, իգական, իսկ Մամիկ-ը դիտարկում է ոչ իբրև Մամակ-ի հնչյունափոխված

<sup>1</sup> Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 464:



տարբերակ, այլ առանձնակի անձնանուն՝ որպես *մամ*, *տատ* բառերի փաղաքշական: Մյուս կողմից Մամիկոնյանների՝ Չինաստանի հետ ունեցած աղերսի ապացույցն է նաև Հ. Աճառյանի վկայությունը, թե *Մամիկոն* անվան հին ձևը *Մամգուն*-ն է՝ չինական ծագում ունեցող: Նա համեմատում է չին. Man-gun «հարավային նարիական այլազգիների իշխան» և gun-Man «իշխան Մաների»<sup>1</sup>:

Կարծում ենք՝ միայն խառնվածքի ընդհանրության հիման վրա չի կարելի խոսել ցեղերի ազգակցության մասին, առավել ևս, եթե ունենք Կովկասում լայն տարածում գտած *Մամիկոն* անունը՝ իր՝ չինական ծագման *Մամգուն* հին տարբերակով, որը լավագույն ապացույցներից է Մամիկոնյանների Չինաստանից Տայք տեղափոխության:

Ն. Ադոնցի համոզմամբ՝ Βαγαδάτης անունը լեզվական անկանոնություններին դեռևս չենթարկված հայկական Բագա-րատի Bagarata-ի սկզբնական ձևն է, որ ծագում է Bagadata-ից *աստծու տված*՝ бага-ից և data-ից-հուն. Θεόδοτος: Տիգրանի՝ այս անունը կրող ստրատեգը Բագ<ա>րատունիների նշանավոր տոհմի նախահայրն է: Հանձին նրա արդարացվում են հայկական երկու միմյանց հակասող ավանդությունները Բագրատունիների ծագման մասին: Ըստ Անանունի՝ Բագրատունիները ծագում են Հայկից՝ հայերի նախահորից: Մյուս ավանդությունը, որ պահպանվել է Խորենացու երկում, վկայում է նրանց հրեական արյան մասին: Հենց տոհմի անունը, հատկապես նրա տոհմական aspet տիտղոսը, ցույց է տալիս, որ այդ հարստությունը առաջ է եկել հայ-իրանական եթնիկական հողի վրա: Նրանց սկզբնական հայրենիքը, ըստ երևույթին, գտնվում էր Ատրպատականի ծայրամասում: Ն. Ադոնցը հակված է ստուգաբանական կապ գտնելու նաև Բագարատի և Բագրևանդի միջև:

Ըստ գիտնականի *Արծրունի* բառի ստուգաբանությունը դեռ ճշտված չէ: Այդ անվան ծագումը մեկնաբանելու բազմաթիվ

<sup>1</sup> Հ. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան*, Ե., 1942, հ. 3, էջ 180:

փորձերից և ոչ մեկը, նրա կարծիքով, արժանահավատ չէ: Անու-  
նը չի ստուգաբանում նաև Հ. Աճառյանը:

Մեր կարծիքով՝ *Արծրունի*-ն ի սկզբանե եղել է *Արծվունի*,  
որովհետև Արծրունիների զինանշանը պատկերում է արծվի,  
մյուս կողմից, ըստ Արծրունիների տոհմական ավանդապատում-  
ների, Արծրունիների իշխանական տունը ծագում է Տորք Անգե-  
ղից: Իսկ Տորք Անգեղի մեր քննությունը ցույց է տվել, որ Տորքի  
հրեշտակը՝ նամակատարը, ինչ-որ թռչունի տեսքով էր պատկեր-  
վում՝ անգղի, արծվի և այլն<sup>1</sup>:

Երբ մ.թ.ա. 68 թվականին հռոմեական զորավար Կորբու-  
լոնը՝ Լուկուլլոսի հաջորդը, Արտաշատից նահանջեց Տարոնի  
ուղղությամբ, ստիպված եղավ անցնել մարդերի երկրով: Մար-  
դերը, որ դեռ այդ ժամանակ զբաղվում էին ավազակությամբ,  
հարձակվեցին հռոմեացիների վրա, բայց հակահարձակման են-  
թարկվելով՝ փախան և թաքնվեցին լեռներում: Սրանից երևում է,  
որ այդ ժամանակ մարդերը արդեն բնակվել էին այն վայրերում,  
որոնք ավելի ուշ հայերը կոչում էին *Մարդաստան* կամ *Մար-  
դոցեք*, այսինքն՝ *մարդերի երկիր*: Այս մարդերից է իր ծագումն  
առել իշխանական այն տունը, որի ներկայացուցիչը կրում էր  
*մարդպետ*, *mardpet*, այսինքն՝ *մարդերի պետ* անունը: Հետագա-  
յում այս անունը նույնպես դարձավ տոհմական տիտղոս, և  
մարդպետների տոհմն ու նրանց տիրույթները կոչվեցին *Մարդ-  
պետ-ական*:

Մարդերի հետ միասին Զագրոս և Նպատ լեռների միջև  
ապրում էին *κέραιοι* կուրտիները, որոնք մարդերի նման հաս-  
տատվել էին Հայաստանի սահմանագլխին՝ *Կորճեքում*: Սկզբում  
կուրտիների երկրում և հետագայում նրանց հարևանությամբ  
ապրում էին *matiani*-ները: Հին հեղինակների տվյալները հաս-  
տատվում են նոր հետազոտողների եզրակացություններով այն  
մասին, որ *mati* ժողովուրդը ոչ միայն արյունով, այլև անունով

<sup>1</sup> Տորք Անգեղը՝ Տարկուի հայկական նախատիպ (հողվածը հանձնված է տպա-  
գրության, ՎԷՄ):



ազգակից է մադերին: Նույն անվան այլ ձևն է՝ *manda*: Ըստ Ն. Ադոնցի՝ *Մադա*-ն այնպես է հարաբերվում *manda*-ին, ինչպես՝ *mati*-ն՝ *manti*-ին: Դրանց հետ սերտորեն կապվում են հայոց Ամատունի՝ *A-mat-uni* և Մանդակունի՝ *Mand-ak-uni* իշխանական տների անունները: Մադերը ծանոթ էին հայերին սովորաբար *մարեր* անունով, ինչպես գիտնականն է վկայում, իսկ *mar*-ը նույնպես ծագում է *mada*-ից: Հայկական այն ավանդությունը, ըստ որի՝ *Մուրացան* իշխանական տոհմը ծագել է մարերից, Ադոնցին անհիմն չի թվում: Այն վայրը, որտեղ բնակություն հաստատեցին մարերը, հայերեն պիտի հնչեր *Մարոց*, ինչպես որ մարդերի հայրենիքը կոչվում էր *Մարդոց*: Այստեղից էլ *Մարոցեան*, կամ պարսկ. *ān-ով՝ Մարոց-ան* և ավելի ուշ՝ *Մուրացան*:

Ադոնցի հաղորդմամբ՝ Արշակունիների նախահայրը կոչվում էր ոչ թե Տրդատ, այլ Վաղարշակ: *Valarš-ak*-ը *Vologaesa*-ի, որը համապատասխանում է հայկական Վարդ-գէսին կամ Վառգոշին, ինչպես նաև պարսկ. *Valaš*-ի ժողովրդական ձևն է:

Ըստ Հ. Աճառյանի՝ *Արշակ* անունն առաջացել է հին պարսկերեն *Aršaka* ձևից, որը, ըստ Մյուլլերի, նվազականն է *arša* «արջ» բառի: Ըստ այսմ՝ *Արշակ* նշանակում է բուն «արջուկ» և այս իմաստով համապատասխանում ճիշտ լտ. *Ursula* «փոքրիկ արջ» անձնանվանը: Բայց Հ. Աճառյանն առավել հավանական է համարում Արշակ անվան՝ *arša* «արու» բառից առաջացած լինելը (*Meillet*-ի վարկածը): Այս դեպքում *Արշակ*-ը համապատասխանում է *Արսեն* անվանը<sup>1</sup>:

Քանի որ տոհմանունները դեռևս լիարժեք ուսումնասիրված չեն, այստեղ իբրև եզրափակում ուրվագծենք նրանց իմաստա-կառուցվածքային պատկերը: Այսպես՝

• Տեղանուններից բաղադրված տոհմանուններ՝ Աղձնեաց, Բզնունեան, Մոկաց, Ամատունի, Գուգարաց, Զարեհաւանեան և այլն,

<sup>1</sup> Հ. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան*, հ. 1, էջ 290:

• տեղանուն-տոհմանուն՝ Տայք, Կասպք, Բասեան, Վանանդ  
և այլն,

• անձնանուններից բաղադրված՝ Երվանթունի, Մամիկոն-  
յան, Արշակունի և այլն,

• կենդանանուններից բաղադրված՝ Արծրունի, Յուլն, Վագ-  
րասպունի,

• ազգակցական կապ արտահայտող բառից կազմված՝ Տայ-  
գրեան,

• հատկանիշ արտահայտող տոհմանուններ՝ Քաջբերունի,  
Համբուժեան, Չիւնական:

Տոհմանունների կառուցվածքային վերլուծությունն էլ ցույց  
տվեց, որ դրանք պարզ ածանցավոր կազմություններ են, ընդ  
որում մեծ մասը բաղադրված է *-եան* ածանցով, երկրորդ տեղում  
*-ունի*-ով կազմություններն են, ապա՝ *-աց*, *-ական*, *-ք* և այլն:  
Մեկական օրինակներ էլ կան բարդ (Տամբեր) և բարդ ածան-  
ցավոր կաղապարներով (Քաջբերունի):

Իբրև ամփոփում նշենք

Ա. Տոհմանունները, լինելով լեզվաբանության դեռևս բավա-  
կանաչափ չուսումնասիրված և միաժամանակ բազմաշերտ բնա-  
գավառներից մեկը, առանձին հետազոտության կարիք ունեն:

Բ. Ն. Ադոնցն առաջինն արծարծեց տոհմանունների ստու-  
գաբանության խնդիրը՝ միաժամանակ տալով դրանցից մի քա-  
նիսի չափազանց հետաքրքիր մեկնություններ:

Գ. Ն. Ադոնցի՝ տոհմական տիտղոսներից ի մասնավորի  
*տեր* բառի ստուգաբանությունն անկասկած լուրջ մտորումների  
տեղիք է տալիս ոչ միայն իր եզակիությամբ, այլև շնորհիվ իր  
ստուգաբանական անսասան հիմքերի:

Դ. Հ. Աճառյանի վկայությունը մաների մասին՝ որպես հա-  
րավային արիական այլազգիների, ըստ էության, Մամիկոնյան-  
ների կապը շեղում է թե՛ չինացիներից, թե՛ ծաներից: Մնում է  
միայն հասկանալ, թե ովքեր են հարավային արիական այդ այլ-  
ազգիները:

Ե. Տոհմանունների իմաստա-կառուցվածքային պատկերը



գծելով՝ կարող ենք առանձնացնել իմաստային վեց հիմնական և կառուցվածքային երեք խմբեր:

Багманян Вануи- Семантическое поле родовых имен по книге Н.Адонца "Армения в период Юстиниана".- Родовые имена, представляя собой древнейший и недостаточно изученный слой в армянской лексике, нуждаются в отдельном лингвистическом исследовании. Н.Адонц первым поднял вопрос этимологии армянских родовых имен, он автор чрезвычайно интересных толкований многих родовых имен.

Составив смысловую и структурную классификацию родовых имен, мы получили 6 смысловых и 3 структурных групп. Смысловые группы объединяют те родовые имена, которые состоят из наименований местностей, наименований местностей-родовых имен, личных имен, из зоонимов и родовых имен обозначающих отличающие черта данного рода. Структурные группы в частности представлены в простых производных формах, и единичными примерами представлены формами сложных и сложнопроизводных типов.

Baghmanyan Vanuhi-The semantic field of the genealogical names according to N. Adonts's book "Armenia in the reign of Houstinian".- Generic names, representing the oldest and insufficiently studied layer in the Armenian vocabulary require a separate linguistic research. N.Adonts first raised the issue of the Armenian etymologies of generic names, he is the author of totally interesting interpretation of generic names.

Forming semantic and structural classification of generic names, we got six of semantic and structural three groups. Among the semantic fields are genealogical names originated from the place names, place-genealogical names and proper names, genealogical names originated from the names of animals, genealogical names expressing family relations or certain characteristics. And the structural groups, on the other hand, appear in the form of derivative types, complex and complex-derivative names are represented with one example each.

**ԳՐԱԲԱՐԻ ԴԱՐՁՎԱԾՆԵՐԻ ԵՎ ՈՃԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՅ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ**

Հայ լեզվաբանության մեջ դարձվածների գիտական համակարգված ուսումնասիրման սկիզբն ընդունված է համարել 20-րդ դարի 50-ական թթ., թեև դեռ Արսեն Այտընյանն իր «Քննական քերականությունն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի» աշխատության մեջ անդրադառնում է դարձվածներին՝ դրանք կոչելով «ոճեր»։ Նա ոճը՝ դարձվածը, բնորոշում է իբրև «երկու բառէ բաղադրություն մը որ ի սովորութենէ որոշ նշանակութիւն մ'առած է. գործօրինակ. ունկն կամ ականջ դնել, որ մըտիկ անել կը նշանա կէ»<sup>1</sup> ապա զուգահեռ է տանում աշխարհաբարի և գրաբարի ոճերի (դարձվածների) միջև, երկուսից օրինակներ բերում և նշում. «Որչափ որ նշանաւոր է գրաբար հայերէնն անթիւ ոճերու առատութեամբը, նոյնչափ աղքատ և գրեթէ ի սպառ զուրկ է նոր լեզուն։ Բայց կրնան գրաբարի ոճերն ալ վայելչապէս և զգուշութեամբ գործածուիլ»<sup>2</sup>։ Ի՞նչ Բաղիկյանը «Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները» աշխատության մեջ հայերենի դարձվածների ուսումնասիրման համառոտ պատմությունն ուրվագծելիս Ա. Այտընյանին համարում է «դարձված» եզրն առաջին անգամ կիրառած լեզվաբան. «Հայ լեզվաբանության մեջ *դարձված* տերմինին առաջին անգամ հանդիպում ենք անվանի հայագետ Արսեն Այտընյանի «Քննական քերականություն» գրքում, որն օգտագործվում է որպէս ոճին զուգահեռ (հոմանիշ) տերմին»<sup>3</sup>։

<sup>1</sup> Ա. Այտընեան, *Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի*, Վիեննա, 1866, էջ 317։

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 317-318։

<sup>3</sup> Ի. Բաղիկյան, *Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները*, Ե., 1986, էջ 29։



Մանուկ Աբեղյանը «Հայոց լեզվի տեսության» մեջ առանձին վերնագրով, սակայն համառոտ ներկայացնում է հայերենի դարձվածները՝ իբրև հարադրական բայերից առաջացած և նոր իմաստ ձեռք բերած կապակցություններ<sup>1</sup>:

Դարձվածների մասին առաջին համեմատաբար ծավալուն ուսումնասիրություններն Ա. Մուրվալյանի երկու աշխատություններում են «Հայոց լեզվի բառային կազմը» (Երևան, 1955) և «Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն» (Երևան, 1959), ապա հետևում են միայն այս հարցին նվիրված այնպիսի ուսումնասիրություններ, ինչպիսիք են Ե. Գևորգյանի «Հայերենի դարձվածքները» (Երևան, 1969), Պ. Բեդիրյանի «Ժամանակակից հայերենի դարձվածաբանությունը» (Երևան, 1971), Խ. Բադիկյանի «Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները» (Երևան, 1986):

Մինչ օրս կատարված այս բոլոր ուսումնասիրություններում, ինչպես նաև բուհական դասագրքերում համակողմանի քննության են ենթարկվել ժամանակակից հայերենի դարձվածները, իսկ մեր լեզվի պատմության նախորդ փուլերի գրաբարի և միջին հայերենի դարձվածաբանությունը նման բազմակողմանի քննության առարկա չի դարձել: Ուսումնասիրողները անդրադարձել են գրաբարի ու միջին հայերենի դարձվածներին, սակայն ուսումնասիրությունների նպատակակետն ու ելակետը եղել են աշխարհաբարի դարձվածները:

Այսպես, Ա. Մուրվալյանը «Հայոց լեզվի բառային կազմը» աշխատության մեջ<sup>2</sup> դարձվածները ներկայացնում է իբրև հարադրյալ բայերի յուրահատուկ դրսևորումներ, որոշում դրանց կառուցվածքային առանձնահատկությունները, տալիս այն բայերը, որոնք առավել հաճախ են հաղես գալիս հարադրյալ բայերի կազմում, զուգահեռաբար բերում օրինակներ գրաբարից, ցույց տալիս դրանց փոփոխություններն արդի հայերենում: Սակայն պետք

<sup>1</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, *Երկեր*, հ. Զ, Ե., 1974, էջ 124-126:

<sup>2</sup> Ա. Մուրվալյան, *Հայոց լեզվի բառային կազմը*, Ե., 1955:

է նշել, որ նա հաճախ հստակորեն չի սահմանազատում հարադրյալ բայերն ու դարձվածները, այս եզրերը գործածում է իրար փոխարեն, օրինակներում բերում նաև այնպիսի հարադրյալ բայեր, որոնք դարձվածներ չեն (օրինակ՝ տալ բայով կազմված հարադրյալ բայերից որոշները դարձվածներ չեն՝ բարև տալ, թիկն տալ, հեռագիր տալ, վնաս տալ, իմաց անել)<sup>1</sup>, իսկ գրաբարից բերված նրա օրինակներն էլ չեն օգնում որոշակի օրինաչափությունների վերհանմանը կամ պարզապես նման նպատակով չեն բերվում:

Ա. Մուրվալյանի մյուս աշխատանքում՝ «Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն», դարձվածաբանության հարցերն ավելի մանրամասնորեն են ներկայացված: Առանձին ենթաբաժնով՝ «Գրաբարի դարձվածքները և գրական նոր հայերենը»<sup>2</sup> նա անդրադառնում է գրաբարյան դարձվածներին, սակայն հիմնականում խոսում է այն դարձվածների մասին, որոնք գրաբարից անցել են աշխարհաբարին: Այս քննության ժամանակ նա առանձնացնում է գրաբարից աշխարհաբարին նույնությամբ անցած դարձվածները փոփոխություններով անցածներից, ապա օրինակներով բերում փոփոխությունների տեսակները՝ զուտ ձևաբանական (ի վաճառք հանել – վաճառքի հանել, ի վարձու տալ – վարձով տալ, ի կորուստ մատնել – կորուստի մատնել և այլն), հնչյունաբանական և ձևաբանական (ի քուն մտանել – քուն մտնել, իմաց առնել – իմաց անել, ի վեր կացուցանել – վեր կացնել), դարձվածի կազմում բառի փոփոխությամբ (ակն ունել – աչք ունենալ, կալ ի գլուխ – գլուխ կանգնել, ի կենաց արկանել – կյանքից գրկել): Իսկ վերջում բերում է այնպիսի օրինակներ, որոնք, գործածվելով գրաբարում, ժամանակի ընթացքում մոռացվել և չեն անցել ժամանակակից հայերենին:

Հայերենի դարձվածներին՝ որպես հարադրավոր բայերի մի

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 199:

<sup>2</sup> Ա. Մուրվալյան, *Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն*, Ե., 1959, էջ 57-62:



տեսակի, անդրադառնում է նաև Ալ. Մարգարյանը «Հայերենի հարադիր բայերը» աշխատության մեջ. «Հարադրավոր բայերի դարձվածաբանական և իմաստա-ոճաբանական արժեքը» գլխում<sup>1</sup> արժեքավոր դիտարկումներով ներկայացնում է հայերենի դարձվածները, հիմնականում ճշգրտում հարադրավոր բայերի հետ ունեցած ընդհանրություններն ու տարբերությունները, կատարում կառուցվածքային և իմաստաբանական քննություն: Որոշ գրաբարյան դարձվածներ ներկայացնում է ծանոթությունների տեսքով արդի հայերենի համապատասխան դարձվածի կամ դարձվածային խմբի համար տալով գրաբարյանը և նշելով տեղի ունեցած փոփոխությունը:

Վ. Քոսյանը «Գրաբարի բառակապակցությունները» աշխատութեան մեջ<sup>2</sup> մանրամասն քննում և ներկայացնում է գրաբարի բառակապակցական կաղապարները, որոնք նույնական են նաև դարձվածների համար և կարևոր կարող են լինել գրաբարի դարձվածների կազմության կաղապարների քննության ժամանակ, սակայն որպես այդպիսին դարձվածի կազմության քննությունը նրա ուսումնասիրության նյութ չէ:

Ինչպես տեսնում ենք, դարձվածաբանական քննության սկզբնական փուլում ուսումնասիրողներին գրաբարյան դարձվածները հետաքրքրում են որպես արդի դարձվածների աղբյուրներից մեկը, և ուսումնասիրության հիմանական շեշտը դրվում է համեմատության վրա, թե դարձվածների այս կամ այն խումբը ինչ փոփոխություններով են անցել ժամանակակից հայոց լեզվին: Համեմատական քննությունը միանգամայն տրամաբանական է սկզբնական փուլի համար, բայց արդի հայերենի դարձվածաբանության քննության զարգացման հետ այս մոտեցումը չի փոխվում, զարգացում չի ունենում:

1973 թ-ին հրատարակված «Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն» աշխատության մեջ Պ. Բեդիրյանն արդի

<sup>1</sup> Ալ. Մարգարյան, *Հայերենի հարադրավոր բայերը*, Ե., 1966, էջ 198-241:

<sup>2</sup> Վ. Քոսյան, *Գրաբարի բառակապակցությունները*, Ե., 1980:

հայերենի դարձվածների առաջացման աղբյուրների մասին խոսելիս նախ նշում է «կենդանի ընդհանուր լեզուն իր կիրառության բոլոր ոլորտներով»<sup>1</sup>, ապա «լեզվի նախընթաց գոյավիճակները՝ գրաբարը, միջին հայերենը»<sup>2</sup>, ինչպես նաև «խոսակցական լեզուն և բարբառները»<sup>3</sup> և «շփվող լեզուներից փոխառությունները»<sup>4</sup>։ Նա ընդամենը մի քանի օրինակով ցույց է տալիս, որ գրաբարից և միջին հայերենից դարձվածները աշխարհաբարին անցել են կա՛մ նույն կերպ՝ պահելով քերականական և բառային ձևերը, կա՛մ որոշ փոփոխությունների ենթարկվելով, սակայն ամբողջական ցանկով չի ներկայացնում գրաբարից աշխարհաբարին փոփոխված կամ անփոփոխ ձևով անցած դարձվածները, փոփոխությունների օրինաչափությունները և այլն։

Գրաբարի դարձվածներին անդրադարձել են նաև գրաբարյան որևէ մասնավոր երկի լեզվաոճական քննություն կատարելիս, ինչպես Վ. Համբարձումյանը «Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմության» լեզուն և ոճը» աշխատությամբ, որտեղ առանձին ենթազվիսում՝ «Դարձվածային միավորները»<sup>5</sup> մանրամասն ներկայացրել և քննել է երկում գործածված դարձվածները՝ ծագումը, գործառական-ոճական և կառուցվածքային առանձնահատկությունները։

Ժամանակակից հայերենի դարձվածներին վերաբերող ուսումնասիրությունները վերը նշվածներով չեն ավարտվում, մինչ օրս կատարվում են արդի հայերենի դարձվածների, ինչպես նաև հայերեն և որևէ օտար լեզվի դարձվածների համեմատական քննություններ, հրատարակվում են ուսումնասիրություններ,

<sup>1</sup> Պ. Բեդիրյան, *Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն*, Ե., 1973, էջ 49։

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 57։

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 62։

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 63։

<sup>5</sup> Վ. Համբարձումյան, *Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմության» լեզուն և ոճը*, Ե., 2013, էջ 59-75։



հողվածներ, որոնք սակայն գրաբարյան դարձվածներին չեն առնչվում:

Փաստորեն, 20-րդ դարի կեսերից սկսած հայ լեզվաբանության մեջ բավականին համակողմանի քննության է ենթարկվում հայերենի արդի դարձվածաբանությունը, ճշտվում են բազմաթիվ տեսական հարցեր, վեր են հանվում արդի հայերենի դարձվածների կառուցվածքային օրինաչափություններն ու իմաստային յուրահատկությունները, կազմվում են դարձվածաբանական բառարաններ, գրվում աշխատություններ, մենագրություններ և հոդվածներ. նույնը չենք կարող ասել գրաբարի և միջին հայերենի դարձվածների քննության դեպքում:

Գրաբարի դարձվածներին արդի հայերենի դարձվածաբանության խնդիրներով զբաղվող լեզվաբանները հիմնականում անդրադարձել են այն պատճառով, որ թեև արդի դարձվածների սովոր մասը ժողովրդախոսակցական ծագում ունի, կապվում է աշխարհաբարի հետ, այնուամենայնիվ որոշ մասն էլ փոփոխություններով կամ անփոփոխ ժառանգել է լեզվի պատմության նախորդ շրջաններից:

Այդ անդրադարձը եղել է խիստ համառոտ, կոնկրետ որևէ հարցի կամ մասնավոր երկի դարձվածներին վերաբերող, համակարգային բնույթ չի կրել, և մինչ օրս չի կատարվել գրաբարի դարձվածների լուրջ ուսումնասիրություն, որը վեր կհաներ գրաբարյան բոլոր դարձվածների կառուցվածքային օրինաչափություններն ու կաղապարները, իմաստաբանական առանձնահատկությունները, ոճական արժեքը. մի խնդիր, առանց որի թերի են թե՛ գրաբարի բառազանձի մի շատ յուրօրինակ ու տվյալ դարաշրջանի լեզվամտածողությունը ներկայացնող կարևոր հատվածի ուսումնասիրությունն ու ներկայացումը. թե՛ արդի դարձվածաբանությունը քննող այն մասը, որն անմիջականորեն պայմանավորված է նրանով:

Այդուհանդերձ, արդի հայերենի դարձվածաբանությամբ զբաղվող ուսումնասիրողներն իրենց աշխատություններում երբեմն շատ կարևոր դիտարկումներ, մոտեցումներ և համեմատու-

թյուններ են կատարում գրաբարյան դարձվածների վերաբերյալ, որոնք արժեքավոր և հիմնային են լինելու գրաբարի դարձվածների քննությամբ զբաղվողների համար:

Harutyunyan Knar - A Brief History of Research of Old Armenian phrases in the Armenian Linguistics. - In our report we briefly present those linguists' works, that examine Old Armenian phrases and idioms, such as A. Murvalyan, A. Margaryan, V. Qosyan and others. Then we show that unlike Modern Armenian phrases, which have been deeply examined since the 50's of the 20th century, Old Armenian phrases haven't been examined so detailed and only some of them have been examined, mainly by comparison with Modern Armenian phrases.

Арутюнян Кнар — История исследования древнеармянских фразеологических единиц в армянской лингвистике. — Мы кратко представляем работы тех лингвистов, которые изучали древнеармянские фразеологические единицы, и таких как А. Мурвалян, А. Маргарян, В. Косян и другие. Затем анализируя факты, мы показываем, что в отличие от современных фраз, которые были глубоко изучены начиная с 50-ых годов 20-ого века, древнеармянские фразеологические единицы не были изучены так подробно, а только некоторые из них были рассмотрены, в основном по сравнению с современными фразами.



**ՆՈՐԱՀԱՅՏ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԺԷ  
ԴԱՐԻ ՁԵՌԱԳՐԵՐՈՒՄ**

Հայ քերականագիտության մեջ շարահյուսական հարցերի քննությունը որպես քերականության առանձին բաժին հնչյունաբանության, ձևաբանության համեմատ սկսվում է ավելի ուշ՝ լատինատիպ քերականությունների շրջանում, քանի որ Դիոնիսիոս Թրակացու աշխատության մեջ քերականական հարցերից մասնավորապես քննվում էին հնչյունաբանության և ձևաբանության վերաբերող հարցերը, շարահյուսական հարցերին անդրադառնում են Սիմեոն Ջուղայեցու կամ Կղեմես Գալանոսի ժամանակներից սկսած<sup>1</sup>, իսկ շարահյուսությունը որպես քերականության առանձին բաժին հայերենագիտության մեջ առաջին անգամ քննում է Հովհաննես Քոնեցիի իր «Համառոտ հաւաքումն» երկում<sup>2</sup>:

Շարահյուսությունը սերտ աղերսներ ունի փիլիսոփայության և տրամաբանության հետ: Ինչպես նշում է Լ. Խաչերյանը, դրանով է պայմանավորված, որ շարահյուսագիտական շատ տերմիններ ու հասկացություններ (նախադասություն, ենթակա, ստորոգյալ, որոշիչ և այլն) առաջին անգամ գործածվել են փիլիսոփայական և տրամաբանական աշխատություններում<sup>3</sup>:

Հույն փիլիսոփաները մտքի բոլոր ձևերն ու օրենքները դրսևորում և մարմնավորում էին լեզվի միջոցով, և բնական է, որ դրանք վերլուծելիս, վերլուծում էին նաև լեզուն: Եվ պատահական չէ, որ շարահյուսական տերմինների հիմնական և ամենա-

<sup>1</sup> Լ. Խաչերյան, Հայ շարահյուսագիտական մտքի վաղ շրջանի պատմությունից, *Բանբեր Մատենադարանի*, N 6, Ե., 1962, էջ 97:

<sup>2</sup> Հովհաննես Քոնեցի, *Յադագս քերականին*, Ե., 1977, էջ 112:

<sup>3</sup> Լ. Խաչերյան, նշվ. տեղում, էջ 98:

կարևոր մասը գիտական շրջանառության մեջ են դրել ոչ թե քերականները, այլ փիլիսոփաներն ու տրամաբանները: Հայ փիլիսոփաներից առանձնապես կարևորվում է Դավիթ Անհաղթի մասնակցությունը, որն իր «Մահմանք իմաստասիրութեան» աշխատության մեջ քննության է առնում «բան», «անուն», «սահմանում» տերմինները և լրացումները (որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ)<sup>1</sup>:

Հունաբան քերականները շարահյուսությանը անդրադարձել են միայն նախադասության՝ «բանի» սահմանումով: Դիոնիսիոս Թրակացին տալիս է միայն նախադասության սահմանումը և թվարկում խոսքի մասերը: «Բան» տերմինը օգտագործում էին ինչպես նախադասության, այնպես էլ խոսքի մասերի համար առանց հստակ տարբերակման: Այս ըմբռնումը դարեր շարունակ գերիշխել է քերական-մեկնիչների աշխատություններում, մինչև որ շարահյուսությունը, անջատվելով ձևաբանությունից, հանդես է գալիս իբրև առանձին և ինքնուրույն բնագավառ<sup>2</sup>:

Հայ շարահյուսագիտության պատմության տեսանկյունից հատկապես մեծ կարևորություն ունի Վարդան Արևելցու «Վասն բանին մասանց» արժեքավոր աշխատությունը: Այս աշխատությունը հայոց լեզվի շարահյուսության սկզբունքների նկարագրության առաջին ինքնուրույն փորձն էր. առաջին անգամ խոսքի մասերը քննվում են ոչ թե ձևաբանության, այլ շարահյուսության առանձնահատկություններից ելնելով<sup>3</sup>: Իսկ Գ. Ջահուկյանն այն համարում է «հայոց լեզվի համառոտ շարահյուսության նախատիպ»<sup>4</sup>:

Ուշ միջնադարի լատինատիպ գրեթե բոլոր քերականություններում հայերենի շարահյուսությանը առանձին բաժիններ

<sup>1</sup> Տե՛ս Դավիթ Անյաղթ, *Մահմանք իմաստասիրութեան*, Ե., 1960, էջ 28:

<sup>2</sup> Լ. Խաչերյան, նշվ. տեղում, էջ 110:

<sup>3</sup> Տե՛ս Լ. Խաչիկյան, Վարդան Արևելցու «Վասն բանին մասանց» աշխատությունը, *Տեղեկագիր*, Սերիա 1, N 2, Երևան, 1943, էջ 81:

<sup>4</sup> Գ. Ջահուկյան, *Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V-XV դդ.)*, Ե., 1954, էջ 253:



էին հատկացվում. հիմնականում քննվում էին խոսքի մեջ բառերի կապակցության եղանակները՝ «համաձայնություն և կառավարություն մասանց բանին»<sup>1</sup>: Լատինաբան քերականները տարբերակում էին խոսքի մասերի համաձայնության չորս տեսակ՝ «անուան ընդ մակադրական անուան» (գոյականի և ածականի), «անուանատրի և բայի» (գոյականի և բայի), վերբերականի և առաջընկելոյն (հարաբերականի և նախընթացի), հարցման և պատասխանի: Շարահյուսական երևույթները հիմնականում ներկայացվում էին՝ հետևելով Հովհաննես Քոնեցու քերականությանը:

Ուսումնասիրության համար առանձնացրել ենք ԺԷ դարի չորս ձեռագիր, որոնք ընտրել ենք Երևանի Մատենադարանից (այսուհետ՝ ՄՄ) և Զմմաթի վանքի Մատենադարանից (այսուհետ՝ ԶԶԱն): Այդ ձեռագրերն են՝ ՄՄ 2284 (1690ից առաջ)<sup>2</sup>, ՄՄ 2286 (1637, Էջմիածին)<sup>3</sup>, 2295 (1683, Գաղատիա), ԶԶԱն 547 (1653 թ., Նոր Զուղա)<sup>4</sup>: Ձեռագրերի ընտրությունը կատարել ենք՝ սկզբունք ընդունելով դրանցում շարահյուսական նորահայտ տերմինների առկայությունը<sup>5</sup>: Վերոհիշյալ ձեռագրերից քաղել

<sup>1</sup> Կղեմես Գալանտ, *Քերական եւ տրամաբանական ներածություն առ յիմաստասիրությունն շահելոյ*, Հռոմ, 1645, էջ 113, Յոհաննես վրդ. Կոստանդնուպոլսեցի, *Ջտություն հայկաբանութեան կամ քերականություն հայկական*, Հռոմ, 1674, էջ 156:

<sup>2</sup> Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Կ. Ս., 1984, էջ 45-50:

<sup>3</sup> Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Կ. Ե., 2012, էջ 766-770:

<sup>4</sup> Ցուցակ հայերեն ձեռագրաց Զմմաթի վանքի Մատենադարանին, Կ. Բ., «Անտոնեան հաւաքածոյ», Վիեննա, 1971, էջ 155-156:

<sup>5</sup> Տերմինների նորահայտ լինելու հանգամանքը ստուգելու համար առաջնորդվել ենք հետևյալ հրատարակությունների տվյալներով՝ Լեզվաբանական բառարան (Ե., 1975), Ա. Մուրադյան, *Հունաբան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում*, «Տերմինների այբբենական ցանկ (հայերեն-հունարեն)» (Ե., 1971), Նոր Հայկազեան բառարան, Կ. Ս.-Բ. (Վենետիկ, 1936, 1937), Լ. Հովհաննիսյան, *Գրաբարի բառարան. Նոր Հայկազյան բառարանում չվկայված բառեր* (Ե., 2010), Լ. Բարսեղյան, *Հայերեն ուղղա-*

ենք շարահյուսական շուրջ քսան տերմին, որոնցից երկուսը բնութագրում են բառերի շարահյուսական դերը՝ առնվիք և հարկաւորք, իսկ մյուսները նախադասության տեսակների անվանումներ են: Տերմինների մի մասը տրվում է սահմանումներով և օրինակներով հանդերձ, մի մասը միայն օրինակներով, իսկ մի քանիսն էլ չունեն ոչ սահմանում և ոչ էլ օրինակ, միայն անվան հիշատակություններ կան:

Տերմինների շարքում կա երկու տերմին, որոնք անվանում են շարահյուսական նույն առանձնահատկությունն ունեցող խոսքի մասեր:

Հարկաւորք- խոսքի մասեր, որոնք կապակցվում են պարտադիր խնդրառությամբ. «հարկաւորք են, որք ի շարադրութեան առանց միմեանց անկարէ իմանալ զնոսա, որգոն՝ սիրեմ զքեզ, քանզի եթէ ոք ասիցէ սիրեմ, հարկ է զի կամ յառաջ ասացեալ իցէ հայցական հոլով ինչ կամ զկնի ասասցէ...» (BzAn 547, 48ա):

Առնվիք- խոսքի մասեր, որոնք կապակցվում են առդրությամբ. «իսկ առնվիք են, որք առնանին պատկապէս և ոչ հարկաւորաբար, որզան՝ յոյժ սիրեմ զքեզ, արդ զքեզն սիրեմ բային հարկաւոր է, իսկ յոյժն առնվի..., 50ա. առնվի՝ ընդունելութիւն, դերանուն, յօդ և նախադրութիւն...» (BzAn 547, 48բ):

Շարահյուսական մյուս բոլոր տերմինները նախադասության տեսակների անվանումներ են՝

Յայտնական բան- նախադասության տեսակ, որի միտքը բացահայտ արտահայտված է լիմաստ բառերով. «յայտնական է,

---

*գրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարան* (Ե., 1973), Առաքել Մինեցի, *Յաղագս քերականութեան համառատ լուծմունք*, «Բառարան» (Լոս Անճելոս, 1982), Եսայի Նչեցի, *Վերլուծութիւն քերականութեան*, «Բառացանկ քերականական տերմինների և դժվարիմաց բառերի» (Ե., 1966), Յովհաննէս Երզնկացի, *Հաւաքումն մեկնութեան քերականի*, «Բառարան» (Լոս Անճելոս, 1983), Յովհաննէս Մործորեցի, *Համառատ տեսութիւն քերականին*, «Բառացանկ քերականական տերմինների և դժուարիմաց բառերի» (Լոս Անճելոս, 1984), Յովհաննէս Քոնեցի, *Յաղագս քերականի*, «Երկուս վկայված քերականական տերմինների ցանկ» (Ե., 1977), Ն. Ադոնց, *Երկեր*, հ. Գ., «Յանկք անուանց և բառից» (Ե., 2008):



որ պարզաբար զբառից բազմութեանց է ընդունող...» (ՄՄ 2286, 139ա), «յայտնական բանն կատարեալ բան է, որ պարզաբար նշանակէ և բառիւք, զոր ինչ միտ ծանուցանել կամեսցի...» (ՄՄ 2295, 52բ):

Անյայտ բան- նախադասության տեսակ, որի միտքը արտահայտված է սպասարկու բառերով՝ ձայնարկություններով, և սակարելի է անվանել նաև բառ- նախադասություն. «անյայտ է մեկ բառ, որ անպարզապէս բառից շարադրութիւն ունի, որպէս՝ վայ և ձայն ծիծաղական և լալական և նշանք առանց խաւսից և այլ բան են անյայտ, բայց մտաւք այսպէս իմանամք՝ ես ցաւիմ, ես ծիծաղիմ, ես լամ և այլն» (ՄՄ 2286, 139ա), «բան են անյայտ, զի մտօք իմանամք, եթէ ես ծիծաղիմ, ես լամ, ես ցաւիմ, ես զարմանամ...» (ՄՄ 2295, 52ա):

Զմամառի Անտոնյան հիմնական հավաքածուից առանձնացրած BzAn 547 ձեռագրում գտել ենք շարահյուսական նորահայտ տասնմեկ տերմին, որոնք կրկին նախադասության տեսակների անվանումներ են: Այսպէս՝ քերականը ձեռագրում առանձնացնում է կատարյալ և անկատար նախադասություն (կատարյալը բարդ ստորադասական նախադասության գլխավոր նախադասությունն է, ինչպէս նաև առհասարակ կատարյալ նախադասություն, իսկ անկատարը երկրորդական նախադասությունն է, որն առանց գլխավորի լիարժեք իմաստ չունի), որոնք էլ իրենց հերթին տեսակների են բաժանվում. նորահայտ են հետևյալները՝

Սահմանական բան- կատարյալ նախադասության տեսակ՝ պատմողական նախադասություն. «սահմանական է տրամաբանականն, զոր գաղափար եղաք կատարեալ բանին, զկնի որոյ հանգչին այոյն և ոչն, հիկէն՝ բուսանի ծառ կենաց, կարելի է ասել այո կամ ոչ...» (Bz 547, 63ա):

Ամանակաւոր բան- անկատար նախադասության տեսակ, որի ստորոգյալն արտահայտված է դիմավոր բայով, քանի որ սահմանում և օրինակներ չունի, ենթադրաբար կարծում ենք, որ խոսքը դիմավոր նախադասության մասին է (Bz 547, 63բ):

Անամանակ բան- անկատար նախադասության տեսակ, անվանական միակազմ նախադասություն (Bz 547, 63բ):

Այնուհետև ամանակավոր և անամանակ նախադասությունները իրենց հերթին տեսակների է բաժանում. այսպես՝

Կոչական բան- անկատար անամանակ (անդեմ) նախադասության տեսակ. «կոչական, որգոն՝ ո՛վ Տեր...» (Bz 547, 64ա):

Ստորոգական բան- անկատար անամանակ (անդեմ) նախադասության տեսակ, գերադաս անդամին վերագրվում է հատկանիշ առանց դիմավոր բայի. «ստորոգական, հիկէն՝ սպիտակ մարդ, Ստեփաննոս այր լի շնորհօք, եւ ստորոգական ասի և անամանակ, քանզի սպիտակն զմարդոյն ստորոգի, թարց ամանակաւոր բայի, եւ ամանակաւորն եւ բաժանի յերկուս՝ ի հարցականն և յինքնածականն...» (Bz 547, 64ա):

Ինքնածական բան- անկատար ամանակավոր (դիմավոր) նախադասության տեսակ. «իսկ ինքնածական է, որ ոչ իբրև գիարցումն յայլմէ խնդրէ պատախանի, զի կատարեսցի, այլ ինքն բերէ ի վերայ զկատարելութիւն բանին, որպէս ուսանելոց եմք ի բացայայտութեան, սոցա իսկ ինքնածականքն լինին ընդունելութեամբն, առբայիւն, շաղկապաւն և դերանուամբն...» (Bz 547, 64բ):

Ընդունելական բան- անկատար անամանակ (անդեմ) նախադասության տեսակ, դերբայով արտահայտված նախադասություն. «յընդունելական է առ ընդունելական, որգոն՝ իմացեալ զխորհուրդս նոցա և տեսեալ, թէ ոչ...» (Bz 547, 81բ):

Առբայական բան- անկատար ամանակավոր (դիմաւոր) նախադասության տեսակ, առբայով արտահայտված նախադասություն. «յառբայական է առբայականն, որգոն՝ իբրև զարթեալ բանտապետն և ետես գործունս բանտի...» (Bz 547, 82ա):

Որական բան- անկատար ամանակավոր (դիմաւոր) բանի տեսակ, որը կազմված է դերանունով. «յորական է առ որական, որզան՝ որ հաւատայ ինձ և առնէ զբանս իմ...» (Bz 547, 82ա):

Շաղկապաւոր բան- բարդ նախադասության տեսակ, որի բաղադրիչները կապակցվում են շաղկապով (Bz 547, 72ա):

Անշաղկապ բան- բարդ նախադասության տեսակ, որի բա-



դադրիչները կապակցվում են առանց շաղկապի, շարահարությամբ (Bz 547, 72ա):

Այնուհետև 2284 ձեռագրում քերականը առանձնացնում է նախադասության հինգ տեսակի անվանում, որոնցից նորահայտ են երկուսը՝

Ստորակցական բան- պայմանի երկրորդական նախադասություն. «Բանն ստորակցական ունի յինքեան զանկատարութիւն իմն դիտաւորութեան, որգոն՝ եթէ ժողովրդեան իմոյ լուեալ էր ինձ...» (ՄՄ 2284, 41բ):

Անեզրական բան- անդեմ նախադասություն. «Բանն անեզրական ունի յինքեան զանորոշութիւն իմն դիմի, որգոն՝ բարի է յուսալ ի Տէր...» (ՄՄ 2284, 41բ):

Այսպիսով, ԺԷ դարի չորս ձեռագրից առանձնացրել ենք շարահյուսական շուրջ քսան նորահայտ տերմին, որոնցից երկուսը շարահյուսական նույն առանձնահատկությունն ունեցող խոսքի մասերի, իսկ մյուս տերմինները նախադասության տեսակների անվանումներ են: Տերմիններից երկուսը ածանցավոր բառեր են՝ հարկավորք, առնիք, մյուսները բառակապակցություններ: Այս տերմիններից շատերը, լինելով քերականագիտությանն արդեն հայտնի տերմինների նոր անվանումներ, դրանց հետ կազմում են հոմանշային շարքեր՝ պատմողական նախադասություն- սահմանական բան, անվանական միակազմ նախադասություն- անամանակ բան: Նորահայտ տերմինները ոչ միայն լրացնում են տերմինակազմության տարբերակային պատկերը, այլև պարզաբանում են որոշ հասկացությունների ձևակերպման վաղ սկզբունքներն ու առանձնահատկությունները և ըստ այդմ նպաստում, որ ամբողջանա հարցի գնահատման պատմական տեսանկյունը:

Маукян Татевик- Новоизвестные синтаксические термины в рукописях 17-ого века.- В статье исследованы 4 рукописи 17-го века, из них взяты 20 новых синтаксических терминов. Одна часть терминов приведена с определениями и с примерами, вторая часть -

только с примерами, а некоторые не имеют не определения, не примера, только упомянуты их названия. Среди терминов есть две, которые характеризуют синтаксическую роль слов, а остальные - название видов предложения.

Manukyan Tatevik- Newfound syntactic terms in the manuscripts of the 17th century.- Four manuscript of the 17th century were explored in the article, 20 new syntactic terms were taken from them. One part of these terms have both definitions and examples, the second part - only examples, and some of them have no definition and examples and only are referred to by their name. There are two terms among them that characterize the syntactic role of words, and the rest are names of sentences' types.



ԲԱՅԱԿԱԶՄԱԿԱՆ -Վ- ԱԾԱՆՑԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ  
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Լեզուները անընդհատ զարգանում և կատարելագործում են իրենց քերականական կառուցվածքը, հարստացնում և համալրում իրենց բառապաշարը: Լեզվի փոփոխելիության հատկանիշը լեզվաբանության առանցքային խնդիրներից է: Բառապաշարը ավելի զգայուն է փոփոխությունների նկատմամբ, և նորամուծությունները առաջին հերթին արտացոլվում են հենց լեզվի բառապաշարի մեջ<sup>1</sup>: Գրական հայերենի պատմությունը վկայում է, որ հայոց լեզվի բառային կազմի զարգացումը գերազանցապես տեղի է ունենում ներքին միջոցների գործադրմամբ, մանավանդ որ հայերենը մշտապես ձգտում է ստեղծել փոխառյալ բառերի հայերեն համարժեքները: Հայտնի է, որ նորաբանություններ ստեղծվում են հասարակական կյանքի տարբեր բնագավառներում կիրառություն ստացած առարկաներ և երևույթներ անվանելու համար կամ գործածություն ունեցող հասկացությունները նոր բառերով ու արտահայտություններով անվանելու համար<sup>2</sup>: Այդ նոր բառերը կազմվում են լեզվի միջոցներով, բառակազմական գործող կաղապարներով<sup>3</sup>:

Հայերենի բայակազմությունը մշտապես եղել է հայերենագետների ուսումնասիրության կենտրոնում: Տարբեր նախատիպերից (առավելապես անվանական հիմքերից) նոր բայեր կազմելու գործուն ածանց-վերջավորություններ են ընդունված *-ել* և *-անալ* մասնիկները, պակաս գործուն՝ *-ալ* մասնիկը<sup>4</sup>: *Ել* մասնիկը

<sup>1</sup> Տե՛ս Էդ. Աղայան, *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, Ե., 1984, էջ 167:

<sup>2</sup> Տե՛ս Լ. Եզեկյան, *Ոճագիտություն*, Ե., 2003, էջ 134-135:

<sup>3</sup> Տե՛ս Ա. Մուրխայան, *Ժամանակակից հայոց լեզու*, Ե., 2008, էջ 159:

<sup>4</sup> Տե՛ս Ա. Մուրվալյան, *Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն*, Ե., 1959, էջ 132-137: Ա. Աբրահամյան, *Բայը ժամանակակից հայերենում*, Ե.,

բայական նոր բառայթներ կազմելիս երբեմն զուգորդվում է –*ավոր*-, –*ացն*-, –*ատ*– բայական ածանցներով<sup>1</sup>, ինչպես՝ *սարքավորել*, *պարենավորել*, *տեղավորել*, *տողատել*, *փողատել*, *ճարպատել*, *յուրացնել*, *հատկացնել*, *օկուպացնել* և այլն: Հայ քերականագիտության մեջ բայական –*վ*– ածանցը համարվել է առաջին հերթին սեռանիշ ածանց: Վերջին շրջանում հրապարակվող մի շարք ուսումնասիրություններում անդրադարձներ են կատարվել *վ+ել* բայական մասնիկի՝ տարբերի հիմքերից նոր բայեր կազմելու իրողությանը<sup>2</sup>: Սույն հոդվածում մեր նպատակն է ընդգծել գրական նորմի սահմաններում *վ+ել* մասնիկի գործուն բայակազմական կադապար դառնալու միտումը: Մեր ուսումնասիրության հիմքում դրել ենք հիմնականում նորաբանությունների բառարանային նյութը<sup>3</sup> և այնպիսի բայեր, որոնք բառարանային գրանցում չունեն:

Ինչպես վերը նշեցինք, –*վ*– ածանցը նախապես ընկալվել է որպես սեռանիշ ածանց, արդի փուլում այն սկսել է քննվել նաև որպես բայակազմական գործուն կադապարի (*վ+ել*) բաղադրիչ: Իբրև սեռանիշ ածանց՝ –*վ*–ն գրաբարին հատուկ չի եղել: Այս մասնիկի կիրառությունը բնորոշ է միջին հայերենին, բարբառներին, արևմտահայ և արևելահայ գրական լեզուներին: –*վ*– կրավորական ածանցի ձևավորումը՝ որպես բայասեռի քերականական իմաստի նշան, կարևոր է նաև հայերենի տիպաբանական զարգացման տեսանկյունից: Այս ածանցի ծագման վե-

1962, էջ 48: Գ. Զահուկյան, *Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն*, Ե. 1989, էջ 194, 200: Մ. Ասատրյան, *Ժամանակակից հայոց լեզու*, Ե., 1989, էջ 197:

<sup>1</sup> Տե՛ս Գ. Զահուկյան, *նշվ. աշխ.*, Ե., 1989, էջ 194:

<sup>2</sup> Տե՛ս Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում, Ե. 1973, էջ 114: Մ. Էլոյան, *Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն*, Ե. 1989, էջ 215-216: Ռ. Իշխանյան, *Տեքստի լեզվական արվեստը*, Ե., 1972: Մ. Մինասյան, –*վ*–երկրորդական ձևությոնը հայերենում, Ստեփանակերտ, 2008, էջ 22:

<sup>3</sup> Տե՛ս Մ. Էլոյան, *Արդի հայերենի նորաբանությունների բառարան*, Ե., 2002 : Փ. Մելիքիսանյան, *Նոր բառերի բացատրական բառարան*, Ե. , 1996:



րաբերյալ կարծիքներից կարելի է առանձնացնել հետևյալ տեսակետները.

ա) այն ծագել է գրաբարյան *ու* լծորդության բայերի (*թող+ու+ի+լ*) համապատասխան լծորդից (Պետերման, Հյուբշման և Կարստ):

բ) այն առանձնացել է գրաբարյան *դարձուած, յորինուած, շինուած* և այլ բառերի *-ուած* ածանցից (Ա. Այտնյան, Ս. Պալասանյան, Ա. Աբրահամյան, Գ. Ջահուկյան):

գ) Ն. Մառը *-վ*-ի ծագումը կապում է որոշ բառերի *իւ* հնչյունախմբի *իւ>ու>վ* փոփոխության հետ<sup>1</sup>:

Ձևավորման նախնական վիճակում *ու(վ)* ածանցը իրացել է *-իլ* բայական մասնիկի հետ, *-վել* ձևը առաջացել է *ուիլ>վիլ(ւիլ)>վել* փոխանցումով:

Ժամանակակից հայերենում *-վ*- ածանցի քերականական իմաստը միատարր չէ: Հայտնի իրողություն է, որ ներգործական սեռի բայը, *-վ*- ածանցը ստանալով, կարող է կրավորականություն, այսինքն՝ կրելու գաղափար չարտահայտել, ինչպես՝ «*Նա դժկարությամբ էր շարժվում առաջ*»: Այս երևույթը հայ քերականները մեկնաբանում են, որ *-վ*- ածանցը, լինելով կրավորական սեռի դրսևորման քերականական միջոց, միաժամանակ ստանձնել է չեզոք սեռի քերականական արտահայտության դերը<sup>2</sup>: Մ. Ասատրյանը նկատել է, որ *-վ*- ածանցը, կրավորական սեռի դրսևորման քերականական միջոց լինելով, ծագումնաբանորեն անգամ միայն այդ ֆունկցիան չի ունեցել, որովհետև միջին հայերենում ներգործականներից *-վ*- ածանցով կազմված մի շարք բայեր արտահայտել են անդրադարձ (*լվացվիլ, շփվիլ* և ալն) և չեզոք սեռի իմաստներ (*բացվիլ, լցվիլ, պսակվիլ* և այլն):

<sup>1</sup> Տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 619: Տե՛ս նաև Հայոց լեզվի պատմական քերականություն, հ.2, Ե. 1975, էջ 365-377:

<sup>2</sup> Տե՛ս Հովհ. Բաքսեղյան, *Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն*, Ե., 1953, էջ 131: Նույն իրողությունը նշում է Ա. Աբրահամյանը, միայն չեզոք սեռ տերմինի փոխարեն կիրառում է միջին-անդրադարձ սեռային առում տերմինը: Տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 640:

Ուրեմն –վ/- ածանցը «մաքուր» կրավորական սեռի արտահայտման ցուցիչ չի եղել անգամ հայերենի այն հատվածներում, որոնք անցողական բայերի չեզոք սեռի համար առանձին ձևեր են ունեցել<sup>1</sup>: Ժամանակակից հայերենում ներգործական բայերը չունեն չեզոք սեռի ձև, և այդ է պատճառը, որ նրանց չեզոք սեռը արտահայտվում է կրավորական ձևի միջոցով<sup>2</sup>: Այլ կերպ ասած՝ բայասեռի եռանդամ հակադրությունը ժամանակակից հայերենում չունի ձևային ավարտվածություն<sup>3</sup>:

Մ. Աբեղյանը նկատում է՝ որոշ թվով ներգործական բայեր, ինչպես՝ *բնակել, հնազանդել, հաշտել, պապանձել, հրաժարել* և այլն, այլևս գործածական չեն լեզվի մեջ, հետևաբար դրանց կրավորականները ստացել են չեզոք բայի նշանակություն (*բնակիլ > բնակվել, հնազանդիլ > հնազանդվել, հաշտիլ > հաշտվել, պապանձիլ > պապանձվել, հրաժարիլ > հրաժարվել*)<sup>4</sup>: Վ. Առաքելյանը նշում է, որ բայասեռը հաստատուն քերականական կարգ չէ և չի ուղեկցում տվյալ բային որպես կայուն հատկանիշ, և բայերը ոչ միայն սեռափոխվում են, այլև երբ սեռային հին նշանակությունը մթագնում և աստիճանաբար վերանում է, բայերը երբեմն դուրս են գալիս գործածությունից կամ նոր ձևավորման են ենթարկվում, օրինակ՝ դասական շրջանի *համարձակել, վախճանել* և այլ բայերի ներգործական կիրառությունը մեռած է, բնականաբար վերացել է նաև կրավորական նշանակությունը, ուստի *համարձակվել, վախճանվել* տարբերակները ժամանակակից հայերենում ունեն միայն չեզոք սեռի նշանակություն<sup>5</sup>: Այս դի-

<sup>1</sup> Հ. Աճառյանը միջին հայերենի բայական համակարգը քննելիս նշում է. «... գրաբարի մեջ բայի սեռը անորոշ էր . միջին հայերենը ստեղծել է երեք սեռ. Կրավորականի համար *ուիլ* ձևը ստեղծելուց հետո, ներգործականին հատկացրել է *ել* և չեզոքին՝ *իլ* վերջավորությունը» (շարժել-շարժիլ-շարժուիլ): Տե՛ս Հ. Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, մաս 2, Ե., 1951, էջ 248:

<sup>2</sup> Տե՛ս Մ. Ասատրյան, *Բայի սեռերը ժամանակակից հայերենում*, Ե., 1959, էջ 161:

<sup>3</sup> Տե՛ս Ռ. Մաքաչետոյան, *Արևմտահայերենի դասագիրք*, Ե., 2006, էջ 144:

<sup>4</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 308:

<sup>5</sup> Տե՛ս Վ. Առաքելյան, *Սեռի քերականական կարգը և բայածանցները գրաբարում*, Պատմա-բանասիրական հանդես, N2, 1980, էջ 74-75:



տարկումները պատճառաբանում են -վ/- ածանցի նաև չեզոք սեռի ցուցիչի դերը, որը ժամանակի ընթացքում, բայասեռի նշան լինելուց բացի, ձեռք է բերել նաև բառակազմական-բաղադրական մասնիկի գործառույթ<sup>1</sup>:

Բայի սեռերը քննող քերականական աշխատությունների՝ չեզոք սեռը ներկայացվող բաժիններում առանձնացվում են մի շարք կրավորակերպ չեզոք բայեր, ինչպես՝ *բնակվել, զանգատվել, գծվել, գծտվել, գունատվել, դիտավորվել, դիվահարվել, դողարվել, զբաղվել, զգածվել, զմայլվել, ընդհարվել, թաքնվել, թնդվել, խաղաղվել, խելագարվել, խելացնորվել, խղճահարվել, համարձակվել, հաշտվել, հաջողվել, հարձակվել, հարմարվել, հոժարվել, հուսահատվել, հիասթափվել, հպատակվել, հրաժարվել, ճարահատվել, մարտիրոսվել, մածվել, մերձավորվել, մտադրվել, նմանվել, չքվել, պապանձվել, ջրգողվել, սզավորվել, սնավորվել, սթափվել, սիրահարվել, սխալվել, սսկվել, վախճանվել, վարժվել, վիատվել, ուշաթափվել, փշաքաղվել* և այլն: Մրանք չունեն համապատասխան ածանցագուրկ տարբերակներ, և *վ* ածանցը այս բայերի կազմության մեջ հանդես է գալիս բառակազմական-բաղադրական նշանակությամբ, այսինքն՝ մասնակցում է այս բայերի ձևավորմանը, և առանց այդ ածանցի չեն կարող գործածվել խոսքի մեջ<sup>2</sup>: Մեր քննությունը ցույց տվեց, որ վերոնշյալ ցանկի *գծվել, դիտավորվել, դողարվել, խղճահարվել, հիասթափվել, սնավորվել, փշաքաղվել, ճարահատվել, սիրահարվել* բայերը

<sup>1</sup> Վերը նշված գործընթացը տեղի է ունենում նաև հայոց լեզվի արդի փուլում: Մի քանի չեզոք սեռի բայեր գործածվում են -վ/-ով և առանց -վ/-ի (համաձայնել/համաձայնվել, հանդարտել/հանդարտվել, վերաբերել/վերաբերվել, բռնկել/բռնկվել և այլն): Մրանց ածանցագուրկ տարբերակներում ներգործական սեռի երբեմնի նշանակությունը մթազնել կամ վերացել է, ուստի ածանցավոր տարբերակները ժամանակակից հայերենում կիրառվում են միայն չեզոք սեռի նշանակությամբ: Ա. Աբրահամյանը նշում է, որ այս կարգի բայերը հաճախ նույն հեղինակի երկերում հանդիպում են զուգահեռ գործածությամբ՝ առանց իմաստային տարբերական, իսկ կենդանի խոսքում գերակշռում է նրանց կրավորաձև գործածությունը (Տե՛ս Ա. Աբրահամյան, *նշվ. աշխ.*, էջ 651-652):

<sup>2</sup> Տե՛ս Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում, Ե., 1973, էջ 114:

ՆՀԲ-ում և «Միջին հայերենի բառարանում» (2009) վկայված չեն. դրանք վերոնշյալ կրավորակերպ չեզոքների համաբանությամբ ավելի ուշ շրջանում ձևավորված կազմություններ են, և այդ բայերում ու>ւ>վ՝ ածանցը -ել բայական ածանց-վերջավորության հետ կատարել է բառակազմական ցուցիչ՝ ածանցի դեր, այսինքն՝ այս բայերի սերող կամ նախատիպ հիմքերը որպես բայ կազմվել և որոշակիություն են ստացել միայն -վ- ածանցի շնորհիվ: Եվ քանի որ այս կազմությունները ներգործական սեռի նախատիպերից չեն ձևավորվել, ուստի հանդես են գալիս միայն չեզոք սեռի իմաստով:

Ինչպես վերը նշեցինք, -վ- ածանցը -ել բայական ածանց-վերջավորության հետ սկսել է քննվել նաև որպես բայակազմական գործուն կաղապար (-վել), որով նոր բայեր են կազմվում հիմնականում անվանական սերող հիմքերից, ինչպես՝ *աբելվել, ալիքվել, արտակորվել, բաղեղվել, բեղավորվել, բռունցքվել, բումերանգվել, գետակվել, երակվել, երկրաշարժվել, ինքնամփոփվել, խաչքարվել, խաչմերուկվել, մակարդակվել, պաշտոնանկվել, գրանհիտվել, կահույքավորվել գորքվել, օջախվել, անշարժվել, կարճուերկարվել, նորադարձվել, մեկվել, մթնշաղվել, հազարվել, քառսվել* և այլն:

Այս միտումը մեծ դրսևորում է գտել ժամանակակից հայերենում: Ի սկզբանե *վ+ել* կաղապարով հատկապես հատուկ անուններից նոր բայեր էին կազմվում չափածո խոսքում (Միամանթո, Վ. Տերյան, Հովհ. Շիրազ, Պ. Սևակ), ինչպես *անդրանիկվել, աքիլլեսվել, երևանվել, կոմիտասվել* և այլն: Ապա այն ընդլայնել է իր սահմանները և հանդես է գալիս ոչ միայն արձակ, այլև առօրյա խոսքում և ԶԼՄ-ների լեզվում, ինչպես՝ «...Բարոյական մի պատ է փլվել, երկրաշարժվել է հավատի մի քաղաք»<sup>1</sup> կամ «...Եվս երկու թեկնածու ինքնաառաջադրվել են Աբովյանի քաղաքապետի ընտրություններում»<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս «Նարցիս» ամսագիր, մաս 1, Ե. , 2010, էջ 46:

<sup>2</sup> Տե՛ս <http://topnews.mediamall.am/?id=123022> (ԼՈՒԲԵՐ.com), 13-05-2015:



Ժամանակակից դարաշրջանում, երբ գիտությունը միտված է հասարակական կյանքի արդյունավետության արագացմանը, բոլորովին պատահական չէ *սերոդ հիմք +վել* կադապարի գործուն դառնալը, որն ըստ էության նպաստում է խոսքի տնտեսմանը: Լեզվական տնտեսման էությունն այն է, որ խոսելու ընթացքում ընտրվում են հաղորդակցությունն ապահովող առավել արդյունավետ «կադապարներ»<sup>1</sup>:

Վերոնշյալ կադապարով կազմված բայերի իմաստային դրսևորումները քննելիս նկատում ենք, որ այդ բայերի մի մասը նույն իմաստով ունի կամ տեսականորեն կարող է ունենալ - *անալ* ածանց-վերջավորությամբ գուգահեռ տարբերակ, այսինքն՝ այդ բայերը արտահայտում են սերող հիմքի ցույց տված հասկացության կամ դրա որևէ ընդգծված հատկանիշին վերածվելու, դառնալու գաղափար, ինչպես՝ աքիլլեավել «Աքիլլես դառնալ, հերոսանալ», բլուրվել «բլուր դառնալ», բումերանգվել «բումերանգ դառնալ», անշարժվել «անշարժանալ» և այլն: -*Անալ*-*վել* անցումը նկատելի է հայերենի նախորդ լեզվավիճակներում ևս, ինչպես՝ *փքանամ (փքամ) > փքվել*, թաքնանամ (թաքչիմ) > թաքնվել, մարտիրոսանամ > մարտիրոսվել և այլն<sup>2</sup>:

Լեզվի տնտեսման օրինաչափությունից բացի՝ հաղորդակցման գործընթացի մասնակիցները հաճախ ձգտում են հայտնի բառերի իմաստային դաշտը հարստացնել փոխաբերական-ընդհանրացնող նշանակություններով, որը խոսքին հաղորդում է թարմություն և արտահայտչականություն<sup>3</sup>: Եվ համաձայն նըշված օրինաչափությունների՝ *-վել* կադապարով համադրական բառույթ են դառնում նաև հարադիր բայերը կամ բայական բառակապակցությունները, ինչպես՝ բաղեղվել «բաղեղով պատվել», դաշինքվել «դաշինք կնքել», ինքնառաջադրվել «իր կողմից իրեն

<sup>1</sup> Տե՛ս Ա. Մարտիրոսյան, *Արդի հայերենի նորաբանությունների բառակազմական կադապարները*, Ե., 2007, էջ 40:

<sup>2</sup> Տե՛ս Ս. Մինասյան, նշվ. աշխ., էջ 26:

<sup>3</sup> Տե՛ս Ա. Մարտիրոսյան, նշվ. աշխ., էջ 48:

առաջադրեր», խաչմերուկվել «խաչաձև հատվել», կայանվել «կանգնելու տեղ՝ կանգառ գտնել, հանգրվանել», հայաստանվել «Հայաստանում բնակվել, Հայաստանում ապրել», տիեզերքվել «տիեզերքով մեկ տարածվել», ուլունքվել «ուլունքներով զարդարվել», շաքարացանվել «վրան շաքար ցանել», մակարդակվել «նույն մակարդակի վրա հասցնել» և այլն:

Նկատելի է, որ բերված բայերի մեծ մասը բանաստեղծական կամ դիպվածային բառեր են և հեղինակային նորաբանություններ, որոնց ստվար մասը աչքի չի ընկնում կիրառման հաճախականությամբ: Այնուամենայնիվ, ընդգծենք, որ դրանք ստեղծվում են լեզվին բնորոշ բառակազմական կաղապարներով, ուստի նման կազմությունների առատությունը հուշում է *-վ*-ի գործուն բառակազմական ածանց դառնալու միտում ունենալու մասին<sup>1</sup>: Թերևս այս միտումն է պատճառը, որ ժամանակակից հայերենում հաճախ հանդիպում են *-վ*- ածանցով ձևավորված անհանձնարարելի ձևեր, որոնք քանի որ կազմված են չեզոք սեռի նախաստիպ բայերից, բնականաբար գրական նորմի տեսակետից մերժելի են, ինչպես՝ *վիճվել, զանգվել, նիհարվել, տուժվել, սրճվել, նախանձվել* և այլն<sup>2</sup>:

Ամփոփելով կարող ենք ընդհանրացնել, որ ժամանակակից հայերենում նոր բայական բառույթներ ձևավորելու գործուն ածանց-վերջավորություն է նաև *-վ+ել* մասնիկը, որն ունի բառակազմական հետևյալ նշանակությունները. ա) արտահայտում է նախաստիպի ցույց տված հասկացության կամ որևէ ընդգծված հատկանիշի վերածվելու, դառնալու գաղափար, բ) նպաստում է

<sup>1</sup> Ս. Մինասյանը, վկայակոչելով Գ. Բաղդասարյանի (*Արդի հայերենի բայասեռի և բայակազմության հարցեր, Ստեփանակերտ, 2003*) վիճակագրական տվյալները, նշում է, որ արդի հայերենում *-վ*- ածանցով կերտված շուրջ 1500 բառ կա: Տե՛ս Ս. Մինասյան, նշվ. աշխ., էջ 39:

<sup>2</sup> Տուժվել ձևի առկայությունը պատճառաբանվում է «տուժել» բային «պատժել» իմաստի վերագրմամբ: Տե՛ս Լ. Թեյլան, Բայի քերականական ձևերի կազմության և կիրառության որոշ առանձնահատկություններ արդի խոսակցական հայերենում, *Ջահուկյանական ընթերցումներ*, Ե., 2009, էջ 71:



բայական նկարագրական կապակցությունների համադրական միավորներ դառնալուն, և այդ կադապարով ստեղծված բառերի գործածության հաճախականությունը աստիճանաբար մեծանալու միտում ունի:

Sargsyan Luiza- Deverbative affix -վ- in modern Armenian language.- In conclusion we can generalize that while forming verbal lexemes in modern Armenian language -վ+ել is an active affix-ending and has the following formative meanings:

- a. It expresses the idea of becoming a concept indicated by a prototype or some underlined feature.
- b. It contributes to forming simple verbs from phrases.

Саргсян Луиза- Отглагольный аффикс -վ- в современном армянском языке.- В заключение можно обобщить, что при формировании глагольных лексем в современном армянском -վ+ել является активным аффикс-окончанием и имеет следующие значения:

- a. Оно выражает идею становления концепции указанным прототипом или некоторым подчеркнутым особенностям.
- б. Способствует формированию простых глаголов от словосочетаний.

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### *Հոդվածներ*

|                                                                                                                                                                                |         |
|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------|
| Կարապետյան Միրաբիի, Գոյականական բաղադրիչներով շաղկապական հարադրությունները հայերենում և անգլերենում Հայրիկյան Ելենա, Միջնորդավորված թարգմանության հարցը Մարկեսի երկերում ..... | 5<br>18 |
| Մուրադյան Լուսինե, Հայերենի, ռուսերենի, անգլերենի ականոն բայերի կաղապարային զուգադրական-տիպաբանական քննություն .....                                                           | 26      |
| Պողոսյան Թամարա, Վաղ աշխարհաբարի լեզվավիճակը՝ ըստ առաջին աշխարհաբար տպագիր գրքերի .....                                                                                        | 32      |
| Սահակյան Ռուզաննա, Եսայի Հասան-Ջալալյանցի նամակների լեզվական էական առանձնահատկությունները .....                                                                                | 46      |
| Սարգսյան Մերի, Ընդհանուրլեզվաբանական որոշ հարցերի աստիճանական զարգացումը Գ. Ջահուկյանի աշխատություններում .....                                                                | 59      |

### *Հաղորդումներ*

|                                                                                                                             |     |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----|
| Ավագյան Արմենուհի, Համանուն և հարանուն բառերի ըմբռնման և կիրառական արժեքի հարցի շուրջ .....                                 | 72  |
| Բաղմանյան Վանուհի, Հայոց տոհմանունների իմաստաբանական դաշտը ըստ Ն. Ադունցի «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» գրքի ..... | 83  |
| Հարությունյան Քնար, Գրաբարի դարձվածների և ոճերի քննությունը հայ լեզվաբանության մեջ .....                                    | 95  |
| Մանուկյան Տաթևիկ, Նորահայտ շարահյուսական տերմիններ ԺԷ դարի ձեռագրերում .....                                                | 102 |
| Սարգսյան Լուիզա, Բառակազմական -վ- ածանցը ժամանակակից հայերենում .....                                                       | 110 |



**Երիտասարդ լեզվաբանների  
հանրապետական V գիտաժողովի զեկուցումներ  
(Երևան, 2015 թ., սեպտեմբերի 18)**

**Young Linguists' V Republican Conference Reports  
(Yerevan, 2015, September 18)**

**Доклады V республиканской научной конференции  
молодых лингвистов  
(Ереван, 2015 г., 18 сентября)**

**Համակարգչային էջադրումը՝ Վ. Պապյանի**

**Հրատ. պատվեր № 653  
Ստորագրված է տպագրության՝ 10.12.2015թ.:  
Չափեր՝ 60 x 84 1/16, 7.5 տպագր. մամուլ:  
Տպաքանակը՝ 150 օրինակ:  
Գինը՝ պայմանագրային:**

**ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,  
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:**

[1500m.]

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0397582



8

101404